Էջմիածին



ՌՆԹ
ԺԶ ՏԱՐԻ

Հոկտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ժ

1959

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— «Տե՛ր, անսասան պահիր դու միշտ քո իսկ հիմնած Մայր Աթոռ	3
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ խոսքը հօգուտ խաղաղության ուղղված ՍՍՌՄ Միհիստրների Սովետի Նախագահ Ն. Ս. Խրուշչովին և ԱՄՆ-ի Պրեզիդենտ Դ. Էյզենհաուերին	6
Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի գահակալության շորրորդ տարեդարձի առթիվ նվիրապետական Աթոռների գահակալներից ստացված շնորհավորական ձեռագրեր	8
Հանդիսություններ Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետի գահակալության շորրորդ տարեդարձի առթիվ	9
Հանդես Հոգևոր Ճեմարանում Վեհափառ Հայրապետի գահակալության շորրորդ տարեդարձի առթիվ	14
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	18
Մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչություն	21
Սուրբ էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերաբացումը	23
ՊՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ— Վեհափառ Հայրապետի այցելությունը Կառնի և Սուրբ Գեղարդ	26
Տանք Կիլիկիո Կաթողիկոսություն պատմության լույսի տակ	30
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ— Ակնարկ հայ կրոնական մամուլի պատմության վրա	45
Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ— Մեռյալ ծովի ձեռագրերը	50
Հայկական մշակութային գաղութը Պետերբուրգում	53
Շինարար Կաթողիկոսը	57
Եկեղեցական կյանքը Սփյուռքում	58
Խաչքար մը էջմիածնեն Ս. Ղազար	60
ՍԱՆԳՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ— Համառոտ լուրեր Մայր Հայրենիքից	61

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"
Redaction of the monthly review „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Դպրատ. 1958 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԹՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ՏԵ՛Ր, ԱՆՄԱՍԱՆ ՊԱՀԻՐ ԴԵՌ ՄԻՇՏ ՔՈ ԻՄԻՆ ՀԻՄՆԱՎ ՄԱՑԻՐ ԱՐՈՈ»

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեդարձն է:

Ազգովին նորից խոնարհվում ենք հավերժական Ս. Էջմիածնից ծիածանվող լույսի և նեղշնչման առաջ: «Լույս առած Լուսավորչեն հայության», այդ լույսը միջտ հառագայթել է հայ հոգիների մեջ: Այսօր էլ նա հառագում է բոլոր հավատացյալների վրա՝ Լուսավորչի արժանավոր հաջորդ Ամենայն Հայոց Հայրապետից:

ԱՆԱՂԱՐՏ ԵՎ ՄԱՔՈՒՐ ՊԱՀԵԼ Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ ԵԿԱԾ ԼՈՒՅՍԸ, ՆՐԱ ՀԱՋԱՐԱՄՅԱ ՔԱՐԵՐԻՑ ԲԽՈՂ ՆԵՐՇՆՋՈՒՄԸ: Ահա Վեհափառ Հայրապետի պատգամը Իր գահակալության առթիվ:

Գահակալության տարեդարձի առթիվ ամեն տեղ նորից կատարվել են ավանդական բարեմաղթություններ, հայրապետական մաղթանքներ, և հավատացյալ հայ ժողովուրդը իր սիրտը ընծա է բերել Ս. Էջմիածնին և նրա Մեծ Լուսաբարին:

Անցնող չորս տարիների ընթացքում Վեհափառ Հայրապետն Իր Դահի բարձունքից, Իր քարոզներով և կոնդակներով, պատգամներով և կոչերով ջերմացրեց հայ հոգիները, ՍԵՐ բաշխեց ամենքին, ՄԻՈՒԹՅՈՒՆ քարոզեց և ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ հայցեց բովանդակ աշխարհին և մանավանդ «ԴԱՐԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ ԱՆԻՐԱՎՎԱԾ ՄԵՐ ՓՈՔՐ ԱԶԳԻՆ, ՈՐ ՀԱՋԻՎ ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻ Է ԱՀԱ, ՈՐ ԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՄԻ ՄԱՍԻ ՎՐԱ ԱՋԱՏ ՇԸՆՋՈՒՄ Է ԵՎ ԻՐ ՀԻՆ ՎԵՐՔԵՐԸ ԲՈՒԺԵԼՈՎ ԿԵՐՏՈՒՄ Է ԻՐ ՆՈՐ ԿՅԱՆՔԸ ՋՄԱՅԼԵԼԻ ՁԵՎԵՐԻ ՄԵՋ, ԽԱՂԱՂ ՈՒ ԱՊԱՀՈՎ:

ԱՄԵՆԱԿԱՂ ՏԵՐ, ԹՈ՛Ղ ՄԵՋ ԱՑՍ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ»:

Գահակալության չորս տարիների սրտեռանդն և ոգևորիչ գործունեությունը սրտառուչ գրավականն է այն բանի, որ Վեհափառ Հայրապետը նվիրական պարտք է համարել Ս. Էջմիածինը բարձրացնել իր պատմական դերին, նվիրական կոչման ու առաքելության մեջ. որպես հայության հավատի, առաքինության և հայրենասիրության ոգեղեն նեղշընչարանը:

Անցնող չորս տարիների ընթացքում Վեհափառ Հայրապետը միաժամանակ ծավալել է հայրենասիրական խաղաղ գործունեություն: Հայրենասիրությունը իրավ զգացվում է Վեհափառ Հայրապետի մոտ, իսկ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ԱՆԺԽՏԵԼԻ ԵՎ ՊԱՅԾԱՌ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Հայրենասեր է Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, որ ապրում է վերածնված Մայր Հայրենիքում և որին խան-

դավառում, ներշնչում է Հայրենիքի շինության և հայ ժողովրդի բարեկեցության շենքի վրա դրված յուրաքանչյուր նոր քար:

Այժմ յուրաքանչյուր հայ մարդու համար պարզ է, որ Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, մեր Հայրենիքն ու ժողովուրդը կարող են բարգավաճել, զարգանալ ու ամրապնդվել միայն ու միայն խաղաղության պայմաններում: Այսօր խաղաղությունն է պետք մեզ և բոլորին: Իսկ ի՞նչ է խաղաղությունը. «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻ ՈՒԺԵՐԻ, ԱՌՈՂՋ ԵՎ ՇԻՆԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԴՈՅԱՎԻՃԱԿՆ Է, ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ»,— գրում է Վեհափառ Հայրապետը:

Հայ ժողովուրդը այսօր հասել է այդ խաղաղության, այդ ցանկալի գոյավիճակին, և Ամենայն Հայոց Հայրապետը սրտեռանդն աղոթում է, հայցում է՝ «ԱՄԵՆԱԿԱՂ ՏԵՐ, ԹՈ՛Ղ ՄԵԶ ԱՅՍ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ»:

Վեհափառ Հայրապետի ցանկությունն է, որ հայ ժողովուրդը, որպես հավատակոնություն, որպես ժողովուրդ և եկեղեցի, ապրի խաղաղության մեջ, համերաշխության մեջ: Նա այդ խաղաղությունը ցանկանում է բովանդակ հայության, աղոթում է, որ հայ ժողովուրդն ու Հայաստանյայց Առաքելական եկեղեցին հաշտ ու խաղաղ ապրեն:

«ԱՄԵՆԱԿԱՂ ՏԵՐ, ԹՈ՛Ղ ՄԵԶ ԱՅՍ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ»: Այս նոր աղոթքն է, Ամենայն Հայոց Հայրապետի սրտից բխած: Այսօր այնքան ՀԱՅ չենք խնդրում որքան ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ: Առատ է մեր հացը այսօր, լիքն են մեր սրտերն ու ամբարները, հայ ժողովրդին և Հայ եկեղեցուն խաղաղություն է պետք, որ առանց արցունքի, խաղաղությամբ ուտենք մեր քրտինքով շաղված հացը:

Այսօր խաղաղություն է պետք, որպեսզի երիկնադեմին «անուշ ծուխ բարձրանա» հայ նրդիկներից: Խաղաղություն է պետք, որպեսզի բարգավաճի մեր Հայրենիքը: Խաղաղություն է պետք, որպեսզի մեր Հայրենի հողերի վրա մեկտեղվի հայ ժողովուրդը: Խաղաղություն է պետք, որպեսզի Հայ եկեղեցու նավը գերծ մնա փոթորիկներից, և խաղաղություն է պետք, որպեսզի Վեհափառ Հայրապետը կարողանա շարունակել իր բնականոն շինարարական գործունեությունը Մայր Աթոռում և Հայ եկեղեցին շարունակի իր նախախնամական դերը հայ հավատացյալ ժողովրդի կյանքում:

«ԱՄԵՆԱԿԱՂ ՏԵՐ, ԹՈ՛Ղ ՄԵԶ ԱՅՍ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տոնը տոնն է Ս. Էջմիածնի, տոնն է Հայ եկեղեցու, տոնն է հայ մշակույթի: Էջմիածնի հետ կապված ամեն մի իրադարձություն խորապես արձագանքել է հայ հավատացյալ ժողովրդի հոգում:

Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության տոնը նշելիս, մատնանշվել է միշտ այն դերը, որ կատարել է և շարունակում է կատարել Հայաստանյայց Առաքելական եկեղեցին Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ՝ հայ հավատացյալ ժողովրդի կյանքում:

Հայ հրախտագետ ժողովուրդը սիրել և մեծարել է իր այն հայրապետներին, որոնք եղել են մեր հավատավոր ժողովրդի բարոյական հասկացողությունների՝ նրա առաքինության, ազգության մարմնացումը: Հայ ժողովուրդը սիրել ու հարգել է իր այն լուսամիտ, զոհաբերվող հայրապետներին, որոնց սրտում վառ է եղել լուսավորության, գիտության, առաջադիմության ջահը, հայ մշակույթի սերը: Ս. Էջմիածնից են սկիզբ առնում մեր դպրությունը, գիրն ու գրականությունը, լեզուն ու մատենագրությունը: «Սկիզբն դպրութեան Հայոց,— գրել է Ե դարի մատենագիր Կորյունը,— լինէր սկիզբն մեծի գիտութեան Աստուծոյ»: «Քանզի ամենայն անձն յորդորեալ փափաքէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս ի խաւարէն, յաստղի տանջանացն զերծեալք ի լոյս խնդային»,— գրել է նույն դարի պատմիչ Ղազար Փարպեցին:

Դարեր շարունակ Ս. Էջմիածինը գլխավորել է մեր ժողովրդի հոգևոր և մշակութային գործունեությունը: Մշակութային այդ զենքով զրաված հայ ժողովուրդը անցավ իր պատմական ուղին քաղաքակիրթ ժողովուրդների շարքում, պահելով անաղարտ և անայլայլ իր ազգային կերպարանքը:

Ս. Էջմիածնի անունը քանկ է եղել յուրաքանչյուր պանդուխտ հայ մարդու համար, որովհետև Ս. Էջմիածնի միջոցով նա կապ-

ված է եղել նաև Հայրենիքին: Այսօր էլ Ս. Էջմիածինը Սփյուռքը Մայր Հայրենիքին միացնող հայրենասիրական օղակն է, «հայ հոգիներու կիզման կետը»,— ասում է Վեհափառ Հայրապետը այնքան պատկերավոր կերպով:

Ս. Էջմիածինը խտացումն է հայ հոգու և ասվածային պարզև մեզ համար, դարերի պատմությամբ նվիրագործված և խորապես արմատ ձգած հայ ժողովրդի հոգում:

Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ հառագայթում է անխիր բոլոր հայ հավատացյալ հոգիների համար, նա «ՄԻՇՏ ԿԲԱՇԽՎԻ ՈՒ ՁԻ ՆՎԱՁԻՐ, ԻՆՁՔԱՆ ԲԱՇԽՎԻ ԱՅՆՔԱՆ ԿՇԱՏՆԱ, ԻՆՁՔԱՆ ԼՈՒՅՍ ՍՓՌԵ, ԱՅՆՔԱՆ ԿՇՈՂԱ: ԴԱՐԵՐԸ ԿՈՒԳԱՆ, ԴԱՐԵՐԸ ԿԱՆՑՆԻՆ, ԱՆ ԿԲԱՐՁՐԱՆԱ, ԿԼՈՒՍԱՎՈՐԵ, ՄԻՇՏ ԿՆԵՐՇՆՁԵ, ԿՑԱՆՔ ՏԱԼՈՎ ԿԱՊՐԻ»,— գրել է Վեհափառ Հայրապետը:

Հայ մեծանուն վիպասան Պերճ Պռոշյանը գրել է. «ՎԱՆՔԵՐԸ ՀԱՁԱՐԱՎՈՐՆԵՐ ԵՆ, ՄԵՆՔ ԷԼ ՇԱՏ ՈՒՆԵՆՔ ՇԵՆ ՈՒ ԱՎԵՐԱԿ, ԲԱՑՑ ՈՉ ՄԵԿԸ ՀԱՐԱՁԱՏ ՀԱՅԻ ՀԱՄԱՐ ԷՋՄԻԱԾԻՆ ՉԷ. ՍԱ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆ Է, ԱՅԴ ՏԱՃԱՐԻ ՄԵՋ Է ՀԱՅՈՒԹՅԱՆ ՍԻՐՏԸ՝ ԻՋՄԱՆ ՏԵՂԸ. ՍԻՐԻ՛Ր ԷՋՄԻԱԾԻՆԸ, ՆԵՐՍ ՄՏԻ՛Ր, ՀԱՄԲՈՒՐԻ՛Ր ԻՋՄԱՆ ՏԵՂԸ ԵՎ ԴՈՒ ՀԱՄԲՈՒՐԱԾ ԿԼԻՆԵՍ ՏԻԵԶԵՐՔԻ ՎՐԱ ՏԱՐԱԳԻՐ ՅՐՎԱԾ ԱՄԲՈՂՋ ԱՋԳԴ. ԱՄԵՆ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅ ՄՏԱՎՈՐ ԱՋՔՈՎ ԷՋՄԻԱԾԻՆՆ Է ՏԵՍՆՈՒՄ, ԷՋՄԻԱԾՆՈՎ Է ՀԱՄԱԿՎԱԾ, ՍԻՐԵՆՔ ՈՒՐԵՄՆ ԷՋՄԻԱԾԻՆԸ, ՈՐ ՄԵՆՔ ԷԼ ԼԻՆԵՆՔ ՀԱՐԱՁԱՏ ՀԱՅ» («Տարազ», 1909 թ., № 6—Զ, էջ 62):

Արարատի դիմաց, Արարատի նման կանգուն է ու պայծառ հայության սիրտը՝ Էջմանն սուրբ տեղը, վերածաղկող Հայրենիքի մեջ՝ սիրովը հայ հավատացյալ ժողովրդի և ջանքերովը մեր սիրեցյալ առաքելաշնորհ Վեհափառ Հայրապետի:

ՏԵ՛Ր, ԱՆՍԱՍԱՆ ՊԱՀԻՐ ԴՈՒ ՄԻՇՏ ԻՍԿ ՀԻՄՆԱԾ ՄԱՅՐ ԱՔՈՌ»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀՕԳՈՒՏ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ա. ԽՐՈՒՇՉՈՎԻՆ ԵՎ ԱՄՆ-Ի ՊՐԵԶԻԴԵՆՏ Դ. ԷՅԶԵՆՀԱՈՒԵՐԻՆ

Քրիստոնեական ճավատի բազմադարյան կենարոն Ս. Էջմիածնից, որպես Հովվապետ Հայաստանյայց Ս. Եկեղեցու, աշխարհի եկեղեցիների և բոլոր խաղաղասեր մարդկանց հետ միասիրտ, մեծ ուրախությամբ կողջունեմ միջազգային կյանքի այն բարի մթնոլորտը, որն ստեղծվեց վերջին ամիսներին, իբրև արդյունք պետության մեծ ղեկավարների բարեկամական հանդիպումների։

Մենք ի մասնավորի կողջունենք Սովետական Միության մեծարգո վարչապետ Նորին Գերազանցություն Նիկիտա Խրուշչովին և Միացյալ Նահանգաց մեծարգո նախագահ Նորին Գերազանցություն Էյզենհաուերին, որոնք պատմական այս օրերին կպատրաստվեն համայն մարդկության մատուցելու բոլոր ժամանակների մեծագույն և ամենաթանկագին ընծան՝ խաղաղությունը. ամբողջական և տևական խաղաղություն՝ բոլոր ժողովուրդների, բոլոր երկրների։

Պատերազմ գուժող մռայլ ամպերը տակավ ցրվում են աճա և մարդկային կյանքի երկնակամարը սկսում է պայծառանալ։

Ո՞վ դուք, ժողովուրդնե՛ր և եկեղեցիներ, դո՛ւք, ազնիվ մարդի՛կ աշխարհի բոլոր ծագերից, ցնծացե՛ք և ուրախ եղե՛ք, զի անա «ԳԻՇԵՐՆ ՄԵՐԹԵՑԱՒ, ԵՎ ՏԻՒՆ ՄԵՐՁՆԵՑԱՒ, Ի ԹԱՑ ԱՐԱՍՑՈՒՔ ԱՑՍՈՒՀԵՏԵՒ ԶԳՈՐԾՍԱՆ ԽԱՒԱՐԻ ԵՒ ԶԳԵՑՑՈՒՔ ԶՁԷՆՆ ԼՈՒՍՈՅ (Հռովմ. ԺԳ 12)։

Գիտության մեծագույն նվաճումների այս օրերին, երբ մարդու իմացական հանճարը թռիչք է առել՝ ճեռազտելու և նվաճելու նյութական տիեզերքը ամբողջ, մինչև արև աղբյուրը լույսին, ինչքա՞ն հրաշալի պիտի լինի տեսնել և հաստատել հաղթանակը նույն մարդու բարոյական հանճարին, նվաճումը խաղաղության լույսին, որը շատ դարեր առաջ ծագել է հավատքի և հույսի բարձունքներից, աշխարհին բերելով աստվածային պատգամը՝ «ՅՍՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»։

Ժողովուրդներ և եկեղեցիներ, և դո՛ւք, հուսացյալ մարդիկ աշխարհի բոլոր ծագերից, միացե՛ք և զորացե՛ք խաղաղության ուխտով և ձեր կենդանի խոսքով, և ձեր կենդանի գործերով, ամրացրե՛ք և անխորտակելի ապառաժը վերածեցե՛ք խաղաղության սուրբ գաղափարը, որպեսզի նա դառնա ու մնա ազգերի և պետությունների կյանքի գերագույն կանոնը այժմ և հավիտյան, որպեսզի «ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՀԵՍՑԻՆ, ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀԱՄԲՈՒՐԵՍՑԻՆ» (Սաղմ. ՁԴ 11)։

Թո՛ղ ցնծա և ուրախ լինի նաև հայ ժողովուրդը, դարեր շարունակ անիրավված ու հանատակված մեր փոքրիկ Ազգը, որ հազիվ քառասուն տարի է անա, որ իր պատմական Հայրենի հողի մի մասի վրա ազատ շնչում է և իր

հին վերքերը բուժելով կերտում է իր նոր կյանքը զմայլելի ձեռքի մեջ, խաղաղ և ապահով:

ԱՄԵՆԱԿԱԼ Տ'ԵՐ, ԹՈ'Ղ ՄԵԶ ԱՅՍ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ:

Խաղաղություն համայն աշխարհին՝ այդ նշանակում է նաև խաղաղություն Հայոց Երկրին, խաղաղություն հայ ժողովրդին և Հայ եկեղեցուն:

Ահա թե ինչու Հայաստանյայց եկեղեցին, իր գլուխն ունենալով Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ոգևորությամբ ողջունեց խաղաղության համաշխարհային շարժումը, իր սկզբնավորության առաջին իսկ օրերից մինչև այսօր, և, տասը տարիներ շարունակ խոսքով և կենդանի գործով իրեն համար նվիրական պարտականություն նկատեց սատարել խաղաղության շարժման տարածման և ամրապնդման:

Այսօր նույժ մխիթարական է Մեզ համար հաստատել, թե խաղաղության պայքարը հասել է արդեն այնպիսի փառավոր արդյունքի, որ ժողովուրդների առաջ հարց է դրվում ընդմիշտ ոչնչացնել ամեն տեսակի զենքեր և ընդմիշտ ազատել մարդկությունը պատերազմների արհավիրքներից, որով պիտի հրականանան մեծ մարգարեի՝ իր ժամանակին երազ թվացող խոսքերը՝ «ԵՒ ԶՈՒԼԵՍՑԷՆ ԶՍՈՒՍԵՐՍ ԻՐԵՆԱՑ Ի ԽՈՓՍ, ԵՒ ԶՍՈՒՐԻՆՆ ԻՐԵՆԱՑ Ի ՄԱՆԳԱՂՍ. ՈՉ ԱՌՆՈՒՑՈՒ ԱԶԳ ՑԱԶԳԻ ՎԵՐԱՅ ՍՈՒՐ, ԵՒ ՈՉ ԵՒՍ ՈՒՍԱՆԻՑԷՆ ՏԱԼ ՊԱՏԵՐԱԶՍ» (Եսայի Բ 4):

Մենք վստահ ենք, որ մեր Ս. եկեղեցու բոլոր սպասավորները և Մեր հավատացյալ բոլոր զավակները անխտիր, Մայր Հայրենիքում թե Մայր Հայրենիքից դուրս ի սիրտս աշխարհի ցրված, մեկ կողմ թողած անիմաստ վեճեր և եկեղեցամեղ ձգտումներ, պիտի միանան ավետարանական սիրով և խաղաղության ոգով և իրենց բոլոր ուժերով, պիտի գործեն աշխարհի խաղաղության հաղթանակի համար, պիտի գործեն մեր Ազգի և եկեղեցու միության և խաղաղության համար:

Հանուն Հայաստանյայց եկեղեցու և հավատացյալ հայ ժողովրդի, մի անգամ ևս կոչ ենք անում պետությունների հարգարժան ղեկավարներին և հատկապես Միացյալ Նահանգների և Սովետական Միության մեծարգո ղեկավարներին, և խնդրում ենք, որ նրանք, լուսավորված ճշմարիտ մարդասիրությամբ, բարի կամեցողությամբ և անհաճաց լավատեսությամբ, շարունակեն ի գործ դնել իրենց փրկարար ջանքերը, մինչև վերջնական հաղթանակ, այսինքն՝ մինչև ամբողջական ու տևական խաղաղության ապահովումը աշխարհի վրա:

Եվ Մենք համոզված ենք, թե այս երկու մեծ ժողովուրդները, իրենց բարի և շինարար հանճարով և իրենց միացյալ, բոլորանվեր ճիգերով, պիտի կարողանան դառնալ այն երկու ամուր սյուները, որոնց վրա ապահով պիտի հենվի մեր աշխարհի խաղաղության հաղթական կամարը, ի փառս Աստուծո և ի փառս մարդուն:

ԽԱՂԱՂՈՒԹԻ՛Ն ԱՄԵՆԵՑՈՒՆ:

ԵՂԻՑԻ ԵՂԻՑԻ:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՒՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՐՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՁՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԳԱՐՁԻ ԱՌԹԻՎ, ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ձեր գահակալության չորրորդ տարեդարձին առթիվ ճանեցեք ընդունել մեր օրինապահ միաբանության և հավատացյալ ժողովուրդին ջերմագին շնորհավորությունները:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Բեյրութ
3 նոյեմբեր 1959

Ջերմագին շնորհավորանք և բարեմաղթանք Վեհիդ արեշատության և մեր Մայր Աթոռին հավետ պայծառացման համար:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԸՆՏՐՅԱԼ ՊԱՏՐԻԱՐՔ՝
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ՝
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Սոսվրոլ
3 նոյեմբեր 1959

Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեդարձի բարեբաստիկ առիթով, հարգանքի և սիրո զգացմունքներով և Վեհափառ Հայրապետի արեշատության և արդյունավետ գործունեության բարեմաղթություններով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և գրություններ են ստացվել բեմակալ առաջնորդներից, ազգային-եկեղեցական իշխանություններից, մտավորականներից, հայրենակցական միություններից, երիտասարդական կազմակերպություններից և ազգային ու օտար ծանոթ դեմքերից:

Սրտագին շնորհակալություններ Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեդարձի առթիվ ստացված շնորհավորությունների և բարեմաղթությունների համար:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ, ՔԱՐՈԶ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 4-ն է, կիրակի։ Արարատյան դաշտի վրա բացվել է Հայաստանի աշնանային ոսկի առավոտը։

Այսօր Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեդարձն է։ Մայր Աթոռում տոնական եռուզեռ է։ Այս ուրախ առիթով Մայր Տաճարում կմատուցվի հանդիսավոր սուրբ պատարագ և կկատարվի Հայրապետական մաղթանք։

Ժամը 11-ին սկսվում է սուրբ պատարագը։ Պատարագիչն է Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը։

Դասերում տեղ են գրավել պաշտոնական անձինք և արտասահմանյան ուխտավորներ՝ Բեյրութից՝ տեր և տիկին Այթունյանները, Փարիզից՝ տեր և տիկին Ութուճյանները, Հնդկաստանից՝ տեր և տիկին Նաճարյանները, Հյուսիսային Ամերիկայից՝ պրոֆ. Մանասե Անակը, դերասաններ տեր և տիկին Վարդյանները, Ռումինիայից՝ թեմական խորհրդի ատենապետ Դանիելյանը, Բուլղարիայից՝ եկեղեցական խորհրդի ատենապետ Կարապետյանը և ուրիշներ։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր Տաճար՝ ամպհովանու ներքո։

Հայրապետական մաղթանքից առաջ քարոզում է գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը՝ «Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեաց ընդարանով։

Քարոզիչ սրբազանը իր գեղեցիկ քարոզի մեջ վեր է հանում Հայ եկեղեցու նախախնամական դերը հայ ժողովրդի լուսավորության և ազգապահպանման բնագավառում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, ապա ջերմ բարեմաղթություններ է կատարում Հայ Եկեղեցու պայծառության, Մայր Աթոռի անսասանության, Հայրենիքի բարգավաճման և Վեհափառ Հայրապետի կյանքի արևշատության և քաջառողջության համար։

Տոնական ու ցնծուն հնչում են Մայր Աթոռի զանգերը։ Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի ողջ միաբանությամբ, եկեղեցական դասով, նախագահում է Հայրապետական մաղթանքին։ «Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի արևելեան կողմն աշխարհիս և Հայրապետութիւն և Հանրապետութիւն Հայոց»,— օրհնում է Վեհափառ Հայրապետը, որին ձայնակցում է Մայր Տաճարում ներկա ողջ միաբանությունն ու բարեպաշտ ժողովուրդը։

Հայրապետական մաղթանքի վերջում Մայր Տաճարում հնչում է հայ ժողովրդի սրտից բխած ջերմ մաղթերգս՝

«Երկար կյանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հոր.
Տե՛ր, անսասան պահիր Դու միշտ.
Քո իսկ ճիմնած Մայր Աթոռ»։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՓԱՌԻ ԵՍԱՂՅԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Ծաղկյա դահլիճ, որտեղ կազմակերպվել էր պաշտոնական ընդունելություն՝ գահակալության չորրորդ տարեդարձի առթիվ։

Վեհափառ Հայրապետը բազմում է Հայրապետական Գահի վրա։

Հանուն Մայր Աթոռի միաբանության, առաջինը Վեհափառ Հայրապետին շնորհավորում է գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը.

«Շնորհազարդ Ս. Հայրապետ.

Թույլ տվեք Մայր Աթոռի ողջ միաբանության և անձամբ իմ կողմից խորին ակնածությամբ և որդիական ջերմ զգացմունքով շնորհավորել Վեհափառությանդ սուրբ օծման չորրորդ տարեդարձը։ Ուղիղ չորս տարի առաջ, Իշման Ս. Սեղանի առջև, կաթողիկոսական ընտրության պատգամավորները, խղճի կատարյալ գիտակցությամբ, հնամյա Մայր Տաճարի խնկաբույր կամարների տակ, ի մեծ ուրախություն հայ ժողովրդի, ընտրեցին Սրբությանդ Ս. Գրիգոր Լուսավորչի Գահի Գահակալ, որով և վերացավ սգո սև քողը Հայրապետական Գահի վրայից։

Եկեղեցին և Ազգը անկեղծ ոգևորությամբ և մեծ հրճվանքով ընդունեցին Ձեր ընտրությունը։

Ձեր ընտրության մեջ Հայ Ազգը չսխալվեց։ ընդհակառակը, մեծագույն իմաստություն ցուցաբերեց, որովհետև Ձեր հովվապետության այս չորս տարվա բեղուն աշխատանքները պայծառ կերպով ապացուցեցին, որ Դուք Ձեր հաստատակամության, արթուն մտքի, պայծառ սրտի և ազնիվ աշխատանքի շնորհիվ եղաք մեր մեծ ու սիրված հայրապետներից մեկը։

Դուք հաղթահարել եք նաև մեծ դժվարություններ ու համարձակորեն առաջ եք ընթանում, սակայն դեռ կան հսկայական կարիքներ ու բազմապիսի աշխատանքներ։ Բայց Դուք, Վեհափառ Տե՛ր, հուսով և հավատով և ամենայն վստահությամբ առաջ եք ընթանում, որովհետև Ձեր գործերի մեջ Ձեզ հետ են հայ ժողովուրդը և հոգևոր դասը։ Հավատում ենք, որ Ս. Գրիգոր Լուսավորչի հոտը կհովվվեք և կսնուցեք ի վայրի դայլուց և առ ջուրս հանգստեանս։ Իսկ մենք, Միածնաէջ Ս. Սեղանի առջև ծնրադիր, կխնդրենք Երկնավոր Հորից՝ Ձեզ առողջություն և երկար, բարվոք կյանք։

Ձերդ Սրբությո՛ւն, թույլ տվեք կրկին անգամ արտահայտել Ձեզ մեր լավագույն ցանկությունները, կրկնելով մարգարեի այս խոսքերը. «Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ, ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ և ի հովանի թևոց նորա յուսասցիս։ Ամէն»։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Սարգիս Գասպարյանը ողջունեց Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեդարձը, բարձր գնահատանքով ընդգծելով Նորին Ս. Օծության հայրենանվեր և խաղաղասիրական փայլուն գործունեությունը։

Գերազույն Հոգևոր խորհրդի անունից խոսեց պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը, Վեհափառին հանձնելով հայրապետական ականակուռ մի մատանի՝ հատկապես պատրաստված այս առիթով։ Ապա խոր հուզումով և երկյուղածությամբ խոսեցին Լիբանանի հայության անունից՝ պր. Ալթունյանը, Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանի, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ պր. Ժոզե Ազերեդո դե Պերտիգաոյի և պր. Գևորգ Նազարյանի անունից՝ պր. Եղվարդ Ուլուճյանը, Հնդկաստանի համայնքի անունից՝ պր. Նազարյանը, Ռումինիայի թեմի անունից՝ պր. Դանիելյանը, Բուլղարիայի թեմի անունից՝ պր. Կարապետյանը, ինչպես նաև պր. Վարդյանը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից։ Գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, հանուն ներքին թեմերի, կարդաց հետևյալ ճառը.

«Վեհափառ Տե՛ր.

Աստուծո ողորմությամբ այսօր նորից Մայր Աթոռում պատեհություն ենք ունենում տոնելու Ձեր գահակալության չորրորդ տարեդարձը։

Այս ուրախ առիթով Մայր Հայրենիքի և Սովետական Միության մեր ներքին թեմերի առաջնորդների, հոգևորականության, թեմական և եկեղեցական խորհուրդների և ողջ հավատացյալների անունից սրտագին պարտականությունն ունեմ շնորհավորելու Ձեր գահակալության չորրորդ տարեդարձը, մաղթելու Ձեզ քաջառողջություն և արևոտ օրեր, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ պայծառություն, Հայ Եկեղեցուն՝ բարգավաճում խաղաղության մեջ, առատության մեջ։

Վեհափառ Տե՛ր, բոլորս լավ հիշում ենք այն օրերը, երբ չորս տարի առաջ, Ազգային-եկեղեցական ժողովը ընտրեց Ձեզ կամքն Աստուծո՝ պայծառ հույսեր կապելով Ձեր անվան և գործունեության հետ։

Գոհությո՛ւն ամենակալին Աստուծո, որ Դուք, Ձեր գահակալության անցնող չորս տարիների ընթացքում, իրականացրիք Ձեր վրա դրված համազգային հույսերը, որովհետև Ձեզ հետ են Աստուծո օրհնությունը, հայ հավատացյալ ժողովրդի սերն ու որ-

դիսկան հնազանդությունը, հայրենի կառավարության բարյացակամ, անշահախնդիր աջակցությունը, մանավանդ Մայր Աթոռի ողջ միաբանության սրտառուչ համախմբումը Ձեր Աթոռի շուրջ։

Արդարև, անցնող չորս տարիները բեղմնավոր եղան վանական-վարչական, շինարարական, կրթական ու կազմակերպչական աշխատանքներով։

Անցնող տարին ևս եղավ արդյունավոր մի տարի։ Մայր Աթոռը, ներքին թեմերը անցկացրին խաղաղ գործունեության մի տարի, Ձեր անմիջական հսկողությամբ, թելադրությամբ և օգնությամբ։

Անցնող տարում կազմեցիք և հրապարակեցիք եկեղեցական Սահմանադրությունը, ցանկանալով էլ ավելի կազմակերպված տեսնել Հայ Եկեղեցին, օրենքի և իրավունքի, պարտքի և պարտականության փոխադարձ սկզբունքների հիման վրա։

Անցնող տարում, Ձեր անմիջական հսկողության ներքո, կատարվեցին հնադիտական արժեք ներկայացնող պեղումներ Մայր Տաճարում և Ս. Հռիփսիմեի վանքում, և Ձեր հեռնողական աշխատանքների շնորհիվ Մայր Աթոռին վերադարձվեցին երեք նշանավոր վանքեր, ինչպիսիք են Տաթևը, Հառիճան և Հաղարծինը։

Վեհափառ Տե՛ր, Ձեր գահակալության երջանիկ տարեդարձի առիթով ընդունեցեք ներքին թեմերի որդիական հարգանքն ու հավատարմությունը դեպի Ձեր բարձր անձնավորությունը և դեպի մեր Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։

Թո՛ղ միշտ բարձր մնա «Գաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին»։

Թո՛ղ միշտ բարգավաճ ու խաղաղ մնա մեր պանծալի Հայրենիքը։

Թո՛ղ միշտ միասնական և անքակտելի մնան Հայ Եկեղեցու միությունը, ազգային-եկեղեցական միասնականությունը։

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա»։ Ամենայն։

Ամերիկայի Միացյալ Նահանգներից ուխտավոր երգչուհի տիկին Ս. Վարդյանը հուզումով մեներգեց «Տէր կեցո»-ն։

Ապա խոսք առավ Վեհափառ Հայրապետը.

«Սիրելի՛ սրբազան եղբայրներ, մեծաճա՛ռագ պր. Գասպարյան, սիրելի՛ ուխտավորներ և հանդիսականներ.

Այսօր անշուշտ ուրախության օր մըն է մեզի համար։ Ամեն անգամ, երբ ուրախության պաճեր կապրինք այս սուրբ հարկին տակ, ինչ առիթներով ալ ըլլա այդ, բոլոր մեր ուրախությունները, մեր ապրումները և ճոյզերը վերջ ի վերջո կկապվին այս սուրբ հաստատության հետ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ։ Մենք կկարծենք, թե միշտ և ամեն առիթով Ս. Էջմիածինն է որ կփառավորենք և Ս. Էջմիածնի օրհնությունն է որ կհայցենք։

Հիշեն եկող շատ իմաստալից խոսքեր կան Էջմիածնի մասին։ Ս. Էջմիածնի գովքը երգող և փառաբանող այդ խոսքերեն մեկը լույս տվեր հիշեմ։ Ուրեմն մեր հիներուն կողմե ըսված է. «Վերցրեք Արարատը՝ Հայաստանը փուլ կգա, վերցրեք Էջմիածինը՝ Հայասաանյայց եկեղեցին փուլ կգա»։ Հին խոսք է այս, նշմարիտ խոսք է այս, մեր ժողովուրդի դարավոր կյանքի փորձի արդյունքն է։ Մենք կհավատանք այս նշմարտության, որովհետև մեր հոգիներով կվկայենք, թե այդ այդպե՛ս է։ Այնպես, ինչպես Վեհափառ Արարատը մեր Հայրենիքի խորհրդանիշն է, այնպես ալ Ս. Էջմիածինը մեր լույս հավատքի, մեր բոլոր հոգևոր գանձերու շտեմարանն է, պահապանն ու պավենը։ Այս խոսքին մեջ կգտնենք իմաստի ուրիշ երանգ մըն ալ, այն է հայ ժողովուրդի անայլայլ լավատեսությունը։ Իրոք, խորունկ լավատեսություն մը կա այդ խոսքին մեջ Ս. Էջմիածնի և Հայաստանի նկատմամբ։

Ի՞նչ կա ավելի հավիտենական քան Արարատը։ Ինչքան ժամանակ աշխարհը կա, պիտի ըլլա նաև Արարատը։ Ահա այդ լավատեսությունը Մենք կփոխադրենք Արարատեն դեպի մեր Մայր Հայաստան և Ս. Էջմիածին։ Մենք երբեք չենք կրնար տկարանալ։ Մեր լավատեսության մեջ Էջմիածնի հավերժականության նկատմամբ։ Մեր մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը ճիշտ կերպով ըսավ Երկու տարի առաջ. «Ինչքան ժամանակ Ս. Էջմիածինը կա՝ կլինի նաև հայ ժողովուրդը, ինչքան ժամանակ հայ ժողովուրդը կա՝ կլինի նաև Ս. Էջմիածինը»։ Այս նշմարտությունն եղած է ու կմնա մեր գոյության, մեր ոգեկան կյանքի վեմը։

Ուրեմն աղոթենք, որ Տերը Մեզ ուժ պարգևե և հիշ մրն ալ ժամանակ, որպեսզի Մեր սկսած առաջադիմաշատ գործը հասցնենք իր փառավոր վախճանին, ի մխիթարություն հայ ժողովուրդին, և, ինչո՞ւ չէ, նաև մեր հոգիներուն։

Խորապես հուզված ենք և զգացված այն բոլոր բարի մաղթանքներուն համար, որ արտասանվեցան այստեղ հանուն միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհուրդին և հանուն մեր ներին ու արտասահմանյան թեմերուն։

Մեր շնորհակալությունը Կյուլպենկյան հիմնարկության և իր ներկայացուցիչ հարտարապետ պր. Եդվարդ Ութուճյանին։

Մասնավոր շնորհակալության և երախտագիտության խոսք կուզենք ուղղել նաև մեր

նայրենի կառավարության. որուն ներկայացուցիչ պր. Գասպարյան իր իմաստալից և ոգեշնչիչ խոսքերով Մեզ առավել ուրախացուց այսօր: Առաջին անգամ չէ, որ ան կգտնվի այստեղ: Մենք մեր աշխատանքի ճանապարհին ճանախ կվայելենք անոր ներկայությունը և միշտ կգտնենք իր միջոցով հայրենի պետության սեռ ու աջակցությունը դեպի այս բազմադարյան սուրբ հաստատությունը և դեպի Մեր անձը:

Մեր գործունեության չորս տարիներու ընթացքին շնչ եղած եկեղեցական կարևոր նարցեր, որ ներկայացնեինք Հայաստանի իշխանության և հուսախաբ ըլլալիս: Ընդհակառակը, Մենք միշտ գտանք սպասվածեն ավելին: Այս հանդիսավոր պահուն Սենք Մեր երախտագիտությունը կհայտնենք հայրենի կառավարության, որու շնորհիվ է միայն, որ Ս. էջմիածինը իր բոլոր հաստատություններով կվերակառուցվի և կդառնա արժանի իր 16-դարյան փառքին: Այս պատաճությամբ, թույլ տվեք կոչել այս Ս. Աթոռեն՝ կեցցե՞ մեր հայրենի կառավարությունը:

Թող Աստված իր հովանին տարածե մեր բոլորի վրա, պահե, պահպանե Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցին, մեր Մայր Աթոռ Ս. էջմիածինը, մեր մյուս նվիրապետական Աթոռները՝ Տանե Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Ս. Աթոռները իրենց գահակալներով, մեր բոլոր եպիսկոպոսական և առաջնորդական Աթոռները, վանքերն ու հովվությունները իրենց բոլոր սպասավորներով: Թող Տերը պահե, պահպանե մեր համայն հավատացյալ ժողովուրդը՝ անսասան իր հավատքի մեջ դեպի մեր Ս. էջմիածինը:

Ձեզ ևս, սիրելի՛ միաբաններ և ուխտավորներ, ի Տյառնե կհայցենք ուժ և կարողություն և բաջառողջ երկար տարիներ խաղաղությամբ:

«Ողորմութիւն և օրհնութիւն ամենակարողին Աստուծոյ եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ»: Ամեն»:

Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեդարձը Մաղկյա գահլիճում վերջացավ «Պահպանիչ»-ով:

Ընդունելության պաշտոնական մասի ավարտից հետո կատարվեց հյուրասիրություն:

ՃԱՇԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Գերագույն Հոգևոր Խորհուրդը հոկտեմբերի 4-ին, ժամը 3.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում կազմակերպել էր ընդունելություն Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեդարձի առթիվ:

Ընդունելության ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը և խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը:

Պաշտոնական այս ճաշկերույթին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, Սփյուռքից ժամանած ուխտավորներ՝ տեր և տիկին Ալթունյանները, տեր և տիկին Ուլուճյանները, տեր և տիկին Նաճարյանները, պրոֆ. Մանասե Սեակը, դերասաններ տեր և տիկին Վարդյանները, պր. Դանիելյանը և պր. Կարապետյանը:

Երևանից ժամանած հյուրերի թվումն էին Մարտիրոս Սարյանը, դիրիժոր Օհան Դուրյանը, պրոֆ. Մետնիկյանը, պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, ճարտարապետներ Մ. Մաղմանյանը, Ռ. Իսրայելյանը, Վարազդատ Հարությունյանը, Կոթիկ Հովհաննիսյանը, Բաղդիկ Արզումանյանը, ինժեներ Ա. Մատինյանը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը, Մայր Տաճարի երգչախմբի ներկայացուցիչներ և այլ հրավիրյալներ:

Վեհափառ Հայրապետի աղոթքով բացվում է ճաշկերույթի սեղանը: Տոնական ուրախ ու հայրենասիրական խանդավառ մթնոլորտ է ստեղծվում անմիջապես սեղանների շուրջ:

Վեհափառ Հայրապետը առաջին բաժակը առաջարկում է Ս. էջմիածնի պայծառության և անսասանության և Հայ Եկեղեցու կենացը: Բոլորը ոտքի են կանգնել: Մայր Աթոռի սարկավագները երգում են «էջ Միածին ի Հոբէ» շարականը: Ա լսարանի ուսանող Կարապիս Սերայտարյանը ապրումով արտասանում է Հովհաննես Հովհաննիսյանի «էջմիածին»-ը:

Վեհափառ Հայրապետը առաջարկում է երկրորդ բաժակը Մայր Հայրենիքի և հայրենի կառավարության կենացը: Բոլոր ներկաները հոտնկայս ունկնդրում են Հայկական ՍՍՌ Պետական Հիմնը (նվագ), որից հետո դահլիճում թնդում է «Հայաստան, երկիր դրախտավայր»-ը՝ Օննիկ Օդաբաշյանի կատարումով: Ապա Գ լսարանի ուսանող բարեշնորհ Սարդիս սարկավագ Սարգսյանը ջերմ շնչով արտասանում է Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանիս»-ն:

Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սահակ արքեպիսկոպոսը երրորդ բաժակը առաջարկում է Վեհափառ Հայրապետի կենացը, որը խմվում է հոտնկայս, մինչ սարկավագների խումբը երգում է Հայրապետական մաղթերգը՝ «Ամեն հայի սրտից բխածս»:

Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեդարձի այս ուրախ առիթով ներկաներից շատերը շնորհավորության, բա-

ռեմաղթության սրտագին խոսքեր են ասում եկեղեցասիրական, հայրենասիրական վառ արտահայտություններով։

Առանձնապես շատ ջերմ են հնչում Սահակ արքեպիսկոպոսի, պրոֆ. Մանասե Սեակի, պրոֆ. Մետնիկյանի, Ա. Տիրացյանի, Մ. Մազմանյանի, Նաճարյանի ելույթները։

Ընդունելության ժամանակ դրվեց նաև գեղարվեստական ճոխ մի հայտագիր՝ բաղկացած խմբերգներից, մեներգներից և արտասանություններից։ Մայր Աթոռի սարկավագների երգչախումբը հաջողությամբ կատարեց մի շարք խմբերգներ, ինչպես՝ «Ուրախ լեր», «Որք զարդարեցին», «Սիոնի որդիք» շարականները, ինչպես նաև ժողովրդական խմբերգներ՝ «Ալագյազ», «Սեղանն է առատ», «Սիրուն Երևան» և այլն։ Գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը իր «Երբոր բացվին դոներն հուսոս մեներգով Քունդ հանեց սրտերը։

Բարեշնորհ Խորեն, Պետրոս և Հակոբ սարկավագները և ուրարակիր Խորեն Հակոբյանը իրենց մեներգներով և նվագով գեղարվեստական վայելք պատճառեցին բոլոր ներկաներին։

Գեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունը բերին նաև Մայր Տաճարի երգչախմբի մեներգիչներ Ժոզեֆինա Սեքզենյանը, Սվետլանա Զաքարյանը, Քնարիկ Օհանյանը, Օննիկ Թերզյանը, Օննիկ Օղարաշյանը և Հակոբ Թիմուրյանը։

Ընդունելության փայլը իրենց արտասանություններով ավելացրին բարեշնորհ Սանդրո սարկավագ Բեհբությանը («Երևան») և Գ դասարանի ուսանող Հովհաննես Գաղանճյանը (Վարուժանի «Նարոտի նամակ»)։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը բաժակ առաջարկեց վարպետի՝ ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի, ինչպես նաև Հայրենիքի գիտնականների, արվեստագետների, ճարտարապետների կենացը, որոնց ներկայացուցիչները գտնվում էին սեղանի շուրջ։

Վերջում, ծափահարությունների տակ խոսք առավ Վեհափառ Հայրապետը.

«Հարգելի՛ սեղանակիցներ.

Այսօր Մեր համեստ անձի շուրջը դուք հավաքված, թե՛ եկեղեցվո և թե՛ Ծաղկյա դահլիճին մեջ, հոգևոր ուրախության պահեր ապրեցանք։

Այս սեղանին շուրջ, Մենք անգամ մը ևս կուզենք շնորհակալություն հայտնել ձեր ջերմ խոսքերուն համար։ Մեր իրձն ու Մեր որոշումն է՝ նոր եռանդով շարունակել Մեր սկսած սուրբ գործը և հույս ունինք, որ մեր հայրենի կառավարության օժանդակությամբ և մեր հավատացյալ ժողովուրդի բարոյական և նյութական աջակցությամբ և Մեր ուժերով պիտի կարենանք հաջողել իրագործելու Մեր ծրագիրները։

Այստեղ արծարծվեցան մտքեր արտասահմանի մեջ կատարվող եկեղեցական պառակտումի փորձերու առնչությամբ։ Մենք, ի-հարկե, տեղյակ ենք այս բոլորին և կհետևինք օրը-օրին, ճիշտ այնպես, ինչպես բժիշկը մոտանոգ՝ կհետևի ճիվանդի բազկերակին։

Սիրելի՛ հայրենակիցներ, դո՛ւք, որ արտասահմանեն կուգաք, կրնաք ձեր վերադարձին վստահեցնել բոլորին, մանավանդ բոլոր անոնց, որոնք թյուր կարծիք ունին Մեր վրա, թե սխալ և եկեղեցամեղ է բաժանումներու և ճեղքումներու հանապարհը։ Եկեղեցվո և Ազգի շանը կպահանջե միություն, ներքին խաղաղություն և շինարար գործակցություն։ Հաղորդեցեք անոնց Մեր սիրո ողջույնները և ըսեք, թե Մեզի համար էջմիածնեն ոչ մեկ հայ բաժնված չէ, Մենք բոլորը կնկատենք Ս. էջմիածնի զավակներ և կսպասենք անոնց դարձին և կմաղթենք, որ իրոք օր մը հաստատվի մեր եկեղեցվո մեջ սիրո միությունը, և մենք բոլորս միասին այստեղ՝ Փրկչի Իշման Ս. Անդանին առաջ ծունկի եկած, աղոթենք և վերանորոգենք մեր ուխտը։

Այս հույզերով, Մենք անգամ մը ևս շնորհակալություն կհայտնենք բոլորիդ՝ տալով Մեր հայրապետական օրհնությունը։

Սեր և խաղաղություն ընդ ձեզ։ Ամեն»։

Խմբովին երգված Տերունական աղոթքից հետո ընդունելությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

ՀԱՆԴԵՍ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Հոկտեմբերի 6-ին, երեքշաբթի օր, հետմիջօրեի ժամը 2-ին, Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ գրական-գեղարվեստական ցերեկույթ Վեհափառ Հայրապետի Գահակալության չորրորդ տարեդարձի առիթով։

Հանդիսությանը նախագահում էր Վեհափառ Հայրապետը։ Հանդեսին ներկա էին արտասահմանից ժամանած բոլոր ուխտավորները և հյուրերը։

Հանդիսության ներկա էին նաև Մայր Աթոռի միաբանները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և այլ հյուրեր։

Հանդեսը բացվում է Հայկական ՍՍՌ Պետական հիմնի նվագով և Ճեմարանի երգչախմբի կողմից երգված «Որք զարդարեցին» շարականով, որոնք ունկնդրվում են հոտընկայս։ Ապա վերատեսուչ սրբազանը հուզիչ խոսքերով բացում է հանդեսը։ Գ լսարանի ուսանող բարեշնորհ Խորեն սարկավագը կարդում է Վեհափառ Հայրապետին ուղղված մի ուղերձ, գրված սրտաբուխ, ջերմ երախտագիտությամբ.

«Վեհափառ Տե՛ր

Այսօր, Ձերդ Սրբության Գահակալության չորրորդ տարեդարձի ուրախ առիթով, Հոգևոր Ճեմարանի սարկավագներիս զգացմունքները, խոհերն ու հույզերը նորից ուղղվում են առ Ձեզ, ինչպես արևածաղիկը արևին, բարերարյալը իր բարերարին, որդին իր հորը։

Ձեր հայրապետական Անձի մեջ, մենք ամենից առաջ ողջունում ենք այս ընտանիքի հովանավորողին, գուրգուրողին ու սիրողին։

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը Ձեր սրտին ամենամոտ հաստատությունն է, ոչ միայն որպես Ամենայն Հայոց Հայրապետի, որի ուսերին է ծանրանում այս նվիրական այգեստանի գոյության ողջ ծանրությունը, այլ նաև որպես ուսուցչի և մանկավարժի, որը վարդագույն հույսեր է կապել այստեղ աշակերտող ու դաստիարակվող մատաղ սերնդի հետ, որպեսզի նրանք, Ձեր իսկ գեղեցիկ բառերով ասած՝ ոչ հեռու ապագային, «մարմնապես աճած, մեր նախնյաց սուրբ հավատքով տոգորված, ապագա մշակները դառնան Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվույն»։

Ձեր խորունկ սերը դեպի մեր Հայրենիքը, դեպի մեր մշակութային մեծ արժեքները, դեպի մեր Ս. Եկեղեցին ու ժողովուրդը, փառավորում է մեր սրտերը, և մեր սրտերի հետ՝ հայ ժողովրդի հոգին։

Վեհափառ և սիրելի Հա՛յր.

Այսպիսի հանդիսավոր առիթներով, սովորություն է խոստումներ անել և նոր պարտականություններ ստանձնել։ Մենք ևս այս առիթով վերանորոգում ենք մեր ծառայության և նվիրումի ուխտը՝ Մայր Աթոռին և Ձեզ, ապավինած աստվածային օգնականության և Ձեր օրհնության։ Եվ ծունկի եկած բոլոր սարկավագներով, քրիստոսակերտ այս Տաճարի Իշման Ս. Սեղանի առջև կաղոթենք

ու կհայցենք միաբերան տիեզերքի Արարչից, որ նա ամուր և անսասան պահի հայ ժողովրդի միասնականության և հավիտենականության խորհրդանիշ հանդիսացող լուսախորան Ս. Էջմիածինը իր ընդհանրական Քահանայապետական Աթոռով։ Թող միշտ անշեջ ու պայծառ մնա Լուսավորչի անմար կանթեղը Իշման Ս. Սեղանի կամարների տակ։

Երկա՜ր ու երկա՜ր կյանք, արևոտ ու հրջանիկ օրեր Ձեզ, մեր սիրելի և առաքելաշնորհ Ս. Հայրապետ»։

Բ լսարանի ուսանող բարեշնորհ Պետրոս սարկավագը վճիտ ձայնով երգում է «Ասաշն ի նախնումն» տաղը։ Ա լսարանի ուսանող Կարապետ Սերայդարյանը արտասանում է Հ. Հովհաննիսյանի «Էջմիածին»-ը, իսկ երգչախումբը երգում է «Մարերը հովել ա»։ Հանուն Հոգևոր Ճեմարանի ուսանողության, Ա լսարանից Ժիրայր Կոնսուլյանը կարդում է իր հետևյալ գեղեցիկ ճառը.

«Վեհափառ Տե՛ր.

Պատմական է վայրկյանը, հիշատակելի ժամը, նվիրական՝ նպատակը, որի համար մենք այսօր հավաքվել ենք այստեղ։

Մենք՝ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ուսանողներս, հոգեկան անսահման ուրախությամբ ենք տոնում Ձերդ Վեհափառության գահակալության չորրորդ տարեդարձը։ Սրանից չորս տարի առաջ, զրահապատված զորեղ և անդրդվելի հավատով, Դուք վերջնականապես եկաք և հաստատվեցիք Ս. Էջմիածին, հավատացյալ հայ ժողովրդի այն լուսավոր օրրանը, որը մեր հոգեկան կյանքի վերակերտման ավազանն է եղել դարեր շարունակ և պիտի լինի այնքան ժամանակ, որքան կապրի մեր ժողովուրդը՝ հավատարիմ իր պատմական և ազգային ավանդությանը։

Դուք անդրդվելի հավատով բարձրացաք Լուսավորչի Գահը՝ գործելու, սերմանելու Տիրոջ քարի սերմերը մեր ժողովրդի սրտի և հոգու մեջ, ու անխախտ պահելու կրոնական բոլոր կանոնները մեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, որն իր հովանու ներքո պաշտպանած իր հոտը, մխիթարած է նրան իր անհուն վշտերի մեջ, միշտ և ամեն ժամ սատարած է նրա լուսավորությանը՝ լինելով բազմարդյուն կենտրոն և անցամաքելի ներշնչարանը հայկական ոսկեդարյան դպրության։

Ձերդ Վեհափառությանը վիճակվեց գործելու այնպիսի մի շրջանում, երբ դարավոր ամպերը անհետացան մեր երկնքից, արհավիրքների շղթան փշրվեց և այժմ երազված, սպասված ազատությունը սավառնում է հայրդիների, մայրենի արտերի և սիրելի հոգների վրա։

Դուք, որպես քաջ և հայրենասեր Հովվապետ, առաջնորդում եք հայ հավատացյալ ժողովրդին և Հոգևոր Ճեմարանի ուսանողությանը դեպի երազված կայքը, և մշշապատ թմբիրով ընդարմացած իմացականությունը տանում եք դեպի լույսի փրկարար հանգրվաններ։

Վեհափառ Տե՛ր, Ձեր գահակալության տոնը միաժամանակ տոնն է բոլորիս սիրելի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի։ Ձենք վարանում բարձրաձայն հայտարարելու, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն այսօր ավելի քան երբեք գոբացած է զգում իրեն՝ շնորհիվ Ձերդ Վեհափառության ազգանվեր ջանքերի և լքուլացող հոգածության։

Վեհափառ Տե՛ր, թույլ տվեք մեզ, այս երջանիկ առիթով, Ձերդ Վեհափառության հայտնելու մեր որդիական շնորհակալության ամենաջերմ զգացմունքները՝ հայրական այն խնամքի և հոգատարության համար, որ Դուք մշտապես ցույց եք տալիս մեր նկատմամբ։

Հանդիսավոր այս պահին, մենք՝ Հոգևոր Ճեմարանի բոլոր ուսանողներս, միահամուռ կերպով նորոգում ենք մեր ուխտը՝ ազնվորեն ծառայելու հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն։

Հոգևոր Ճեմարանի դասախոս պր. Գրիգոր Գյուլյանը օրվա հանդեսի գլխավոր բանախոսն է։ Նա իր գեղեցիկ ճառի մեջ ասում է.

«Վեհափառ Տե՛ր.

Այսօր այս սուրբ հաստատության նվիրական հարկի տակ մենք հավաքվել ենք նշելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի գահակալության չորրորդ տարեդարձը։

Ես այսօր երջանիկ եմ, որ ի դիմաց Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի լիազորված եմ ողջունելու և շնորհավորելու Նորին Սրբությանը իր գահակալության չորրորդ տարեդարձի ուրախ առիթով։ Ես ի բոլոր սրտե, իմ հայկական արյան ամբողջ թրթռացմամբ Նորին Սրբության բարեմաղթում եմ երկար, երջանիկ կյանք, կամք ու կորով՝ իր այնքան փառքով սկսած գործը հաջողությամբ առաջ տանելու և նորանոր մեծագործություններով փառավորելու այս Աթոռը։

Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության ամենամյա հանդիսությունները երջանիկ առիթ են հանդիսանում մեզ՝ մեր երևակայության մեջ նորից վերականգնելու այն բերկրալի մթնոլորտը, երբ մեր ժողովրդի ծով ցնծության մեջ անբաժանելի հայության միասնական կամքի արտահայտմամբ, հանձին Նորին Սրբության, մեր Լուսավորիչ Հոր մեծ և անխորտակ Տունը՝ Ս. Էջմիածինը, նո-

ից փեսայացավ և ունեցավ իր արժանընտիր Գահակալը։

Այսօր այդ պատմական օրվանից անցել է չորս տարի։ Չորս տարին մի ակնթարթ է միայն պատմության մեջ։ Բայց այդքան ժամանակամիջոցն անգամ բավական եղավ հաստատելու, որ հայությունը չէր սխալվել իր ընտրության մեջ։ Նորին Սրբությունը մեր բոլոր հայրապետներից եղավ աթառաջինը, որ ոգեշնչված Իր ազատ Հայրենիքի երջանիկ իրականությամբ, վեհափառորեն հովվապետական այցի գնաց դեպի Իր աշխարհասփյուռ, սիրեցյալ հոտը՝ Իր հետ տանելով մեր երկաթագիր պատմության՝ դարերի խորքից բարձրացող հայրենական կանչը, հավերժանիստ Արարատի հավերժական ողջույնը և Ս. Էջմիածնի բազմադարյան օրհնությունը։

Արտասահմանի հայաշատ կենտրոններում մեր Վեհափառ Հայրապետի հետ քայլում էր նաև մեր պատմությունը՝ դարերի խորքից վեր խոյացող իր լուսավոր խորհրդով։ Մենք այսօր նշում ենք մեր Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձը։ Այս տարեդարձը նշում են նաև հայաշատ այն խոշոր կենտրոններում, որտեղ կա եկեղեցի և ազգային բեմ։ Ս. Էջմիածինն ու նրա Գահակալը անխզելիորեն կապված են միմյանց հետ, երկուսով կազմում են մի միասնական ամբողջություն։ Խոսել մեկի մասին, նշանակում է խոսել նաև մյուսի մասին։ Այսօր կարելի՞ է արդյոք Ս. Էջմիածնի մեծությունը չափել երկրաչափական տվյալներով։ Ոչ, նյութեղեն չէ Ս. Էջմիածինը, ոգեղեն է Ս. Էջմիածինը, Ս. Էջմիածինը վեր է ժամանակից և տարածությունից։

Շատ հոդմեր են արշավել մեզ վրա. իր միասնության մեջ կոտորակված, պատմության քառուղիներում մոլորված հայ ժողովուրդը միշտ էլ իր հայացքը հառել է Ս. Էջմիածնին, ջերմացել է նրա լույսով, և գոտեպնդված հավատով՝ շարունակել է իր ճամբան Աստուծո գծած ուղիներով։

Մեծանուն հայրապետներ, Լուսավորչի առաքելաշավիղ հաջորդներ միշտ էլ աշխատել են Ս. Էջմիածնի պայծառափայլության համար, այն դարձրել են այն հոգևոր վառարանը, որտեղ միշտ բոցկլատացել է հայ ժողովրդի հույսի և հավատի, ազգային վերածնության և անմահության սրբազան կրակը։

Ձեռքից ձեռք փոխանցված ջահը այսօր գտնվում է մեր աստվածարյալ Հայրապետի ձեռքում, որը իմաստությամբ, սրտի ջերմությամբ, մտքի պայծառությամբ, հոգու համբերատարությամբ շարունակում է Իր մեծ նախորդների սրբազան գործը։

Եվ երբ ալեփառ Մասիսը և քառագագաթ Արագածը դեմ դիմաց կանգնած՝ հայոց պայծառ երկնքի տակ իրենց լուսեղեն ցոլքն են ցողում այս հինավուրց հաստատության քարերի վրա, գիշերվա ուշ ժամին, ճեմում է Ամենայն Հայոց Հայրապետը այս Ս. Տաճարի պատերի շուրջը, և ունկնդիր հոգի ձայնին, պատմության ձայնին, ժողովրդի ձայնին՝ երազում է Ամենայն Հայոց Հայրապետը, առանձնանում Վեհարանում, աղոթում է Ամենայն Հայոց Հայրապետը, խորհում, մտածում, ծրագրում։ Եվ գործում է Ամենայն Հայոց Հայրապետը։ Եվ ահա, աննկատելիորեն փոխվում, լուսավորվում է մթնոլորտը. — վերականգնվում, պայծառանում է Ս. Էջմիածինը իր փառքի և շքեղության մեջ, չայն թափ է ստանում շինարարությունը, վերակառուցվում են մեր վանքերն ու սրբավայրերը, վերականգնվում են կարգն ու կանոնը միաբանության մեջ, բոլոր թեմերի մեջ շենանում են եկեղեցիները, օժտվում թեմական խորհուրդներով, ամրապնդվում են կապերը արտասահմանյան հայ թեմերի հետ, գնալով ավելի մեծ թվով ուխտավորներ գալիս են Ս. Էջմիածին, հաղորդվում էջմիածնական խորհրդով։

Շրջապատված ու պաշտպանված համայն հայության սիրով ու օժանդակությամբ՝ Նորին Սրբությունը գործում է ավելի մեծ թափով, ավելի մեծ եռանդով։ Հաճախ են հընչում Նորին Սրբության ոգեշունչ քարոզները, որոնց մեջ կա իմաստություն, իր ժողովրդի և եկեղեցու կյանքով ապրող սիրող սիրտ, հայրենասիրություն, առավել ևս ներշնչում։ Ես ավելի մեծ գին եմ տալիս ներշնչման, որովհետև ներշնչումը անսխալական է։ Ներշնչումը Աստուծո վառած կրակն է մեր մեջ, որովհետև ներշնչումը նույնինքն Աստուծո ներկայության վկայությունն է մեր հոգում։ Հավատարիմ մեր Եկեղեցու դարավոր ավանդությանց՝ հաճախ առ Աստված է բարձրանում Նորին Սրբության հուժկու ձայնը՝ հանուն աշխարհի խաղաղության։

Մենք այսօր հպարտ ենք, որ Նորին Սրբության կուրծքը զարդարում է նաև խաղաղության Համաշխարհային խորհրդի շքանշանը։

Թո՛ղ Ամենակարող Տերն Աստված անսասան պահի Լուսավորչի մեծ Տունը, թո՛ղ երկարի, բազմաբեղուն դարձնի նրա արժանընտիր, իմաստուն, բարեհամբույր Գահակալի՝ մեր սիրելի Հայրապետի կյանքը, ի փառս Հայաստանյայց մեր Ս. Եկեղեցու և հուրախություն մեր հնադարյան, բայց միշտ երիտասարդ, մեր բարի, շինարար և աստվածահաճո հայ ժողովրդի։

Ապա արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Շիրինյանը հուզումով երգում է «Լուսավորչի կանթեղը» (խոսք՝ Հովհաննես Թումանյանի, երաժշտություն՝ Շահան Պերպերյանի), Փարիզահայ բանաստեղծուհի Մարի Աթմաճյանի «Էջմիածնի մեղրամոմը» գեղեցիկ բանաստեղծությունը հաջող կերպով արտասանում է Գ. լսարանի ուսանող բարեշնորհ Սարգիս սարկավագը։ Նույն լսարանի ուսանող ուրարակիր Խորեն Հակոբյանը նվագում է Բախի «Պրելյուդ»-ը։ Գ. դասարանի ուսանող Հովհաննես Աշչյանը խոր ներշնչումով արտասանում է Հովհաննես Թումանյանի «Լուսավորչի կանթեղը»։ Երգչախումբը դաշն երգում է «Տէր կեցո»-ն, որից հետո խոսում է Վեհափառ Հայրապետը.

«Սիրելի՛ սրբազան եղբայրներ, հարգելի՛ ուխտավորներ և հյուրեր.

Կխորհեմ, թե ձեր բոլորիդ զգացումներու բարգմանը պիտի հանդիսանամ, եթե գոհունակություն հայտնենք մեր Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ սրբազան հոր և այս հանդիսը կազմակերպող բոլոր անոնց, որոնք մասնակցեցան խոսքով, երգով կամ արտասանությամբ, որովհետև իրոք որ այս մեկ ժամվան ընթացքին սույն հանդիսը հաջողեցավ մեր սրտերը շարժել և բարձրացնել մեզ ու մոտեցրնել այն հոգևոր բարձունքին, որ Ս. Էջմիածինը կհանդիսանա մեզ բոլորիս համար։

Անշուշտ արտաքնապես Ս. Էջմիածինը նյութական կառուցվածք մը է, հարտարապետական գեղեցիկ և յուրահատուկ ոճով, որով հայ ժողովուրդը կպարծենա։ Սակայն դուք բոլորդ Մեզ հետ համաձայն եք կկարծեմ, եթե ըսենք, թե այս սուրբ հաստատության մեջ Մենք կտեսնենք ավելին, շատ ավելին քան իր նյութական կերպարը։ Այստեղ Մենք կտեսնենք անտեսանելին, կտեսնենք պայծառ լույսը անիմանալի, որ մեր ժողովուրդի հոգին առաջնորդը կհանդիսանա ահա տասնվեց դարերն ի վեր։ Օտար մը, եթե հարտարապետությունենք հասկցող է, պիտի հիանա այս Տաճարին վրա, բայց պիտի չզգա ու պիտի չտեսնե այն, ինչ որ մեր ժողովուրդը կտեսնե հազարամյա այս քարերուն մեջ։

Ամեն ազգ սրբություն մը ունի իբրև պատվանդան իր հոգեկան կյանքի։ Մենք համոզված ենք, որ իրենց սրբություններ ուրացող ժողովուրդներ կկորսվին։ Մարդը, իբրև այդպիսին, բարոյական-հոգեկան իրականություն մը է։ Պետք է սորվինք հասկնալ այս ճշմարտությունը, որ կսավառնի համայն մարդկության պատմության և ստեղծագործական ճանապարհին վրա։ Մենք բարեբախտաբար ունինք այդպիսի մեծ սրբություն մը. Փրկչի Էջման տեսիլքով ծնունդ առած Ս. Էջմիածինն է այդ։ Մենք մեզ բախտավոր պետք էզգանք իբրև եկեղեցի և ժողովուրդ, որ այդպիսի հոգեկան մեծ գանձ մը ունինք՝ իբրև հոգևոր և ազգային կյանքի հիմք։ Ահա այս մտածումներ, այս ապրումներ անցամ մը ևս մարմին առին, թռիչք առին մեր սրտերեն այս մեկ ժամվան ընթացքին։

Շնորհակալ ենք Մեր անձին ուղղված բարի խոսքերուն համար։ Հույս ունինք, որ Մեր գործակիցներու հետ միասամ, մեր ուժերը պիտի կրկնապատկենք և պիտի շարունակենք՝ հոգևոր շինության մեր գործը՝ ի փառս Աստուծոյ և ի մխիթարություն մեր հավատավոր ժողովուրդին։

Թող Աստված պահե և պահպանե հավիտյան խաղաղության և ծաղկման մեջ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, մեր Հոգևոր Ճեմարանը, պաշտոնեությունն ու սաները։

«Օրհնեալ եղերում ի Տեառնէ և ի Մէնջ»։ Ամեն»։

Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեգարձին նվիրված գրական հանդեսը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, ատոն ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ։ Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա պատարագեց հոգեշնորհ Տ. Հարութիւն արեղա Մատենչյանը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, նախվեր։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը՝ խոչի խորհրդի մասին։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը նախագահեց վանքի բակում կատարված նախվերացի ավանդական թափորին, հավատացյալների խուռն բազմության ներկայության։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «յիշատակ մեռելոց»։ Պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաջիրյանը։ Պատարագից հետո կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց Ազգիս Հայոց»։ Նույն օրը կատարվեց նաև Մայր Աթոռի միաբան հանգուցյալ Նահապետ վարդապետ Մուրադյանի քառասունքը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց Հալեպից ուխտավորաբար Ս. Էջմիածին ժամանած արժանապատիվ Տ. Եղիշե քահանա Փանոսյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ 1959—1960 ուսումնական տարվա առաջին դասախոսություն միաբանության և ուսանողության համար։ Դասախոսեց դոցենտ Հակոբ Հակոբյանը, նյութ ունենալով «Մարմնակազմությունն»-ը։ Դասախոսությունը լսվեց շերմ հետաքրքրությամբ։ Վերջում վերատեսուչ սրբազանը իր շնորհակալությունը հայտնեց հմտալից դասախոսության համար։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ, ՇԱԲԱԹ, ատոն սրբոցն Գէորգայ քաջամարտիկ զօրավարին, Ադոկտոսի և Ռոմանոսի երգեցողին։ Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը նախագահեց երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի հիշատակին նվիրված հոգեհանգստյան արարողության։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ, ՇԱԲԱԹ, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանի և հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի, Երևանում այցելեց նկարիչ Իսաբեկյանի արվեստանոցը, դիտելու համար «Հայոց պատասխանը Հազկերտին» մեծ կտավը։ Նկարը, դեռևս անավարտ, բայց խորապես տպավորիչ է իր պատմական հարազատությամբ, բարձր արվեստով և գույների ներդաշնակությամբ։ Վեհափառ Հայրապետը խորապես գնահատեց արվեստագետի այդ ծավալուն աշխատանքը և նրան մաղթեց ստեղծագործական նորանոր հաջողություններ։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ատոհ Վարագայ Սրբոյ Խաչի՝ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց փոխ լուսարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։ Սուրբ պատարագին ներկա էր նաև Սփյուռքից Հայրենիք ժամանած ուխտավորների մի մեծ խումբ։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ Վեհափառ Հայրապետը ընդունեց մի շարք Սփյուռքահայ տուրիստների այցելությունը, որոնք Հայրենիք էին ժամանել Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Իրանից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Բուլղարիայից և Ռումինիայից։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում, իր երկրորդ դասախոսությունը կարդաց դոցենտ Հ. Հակոբյանը՝ «Մարտոդությունը» թեմայով։

Դասախոսությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում, Հնդկաստանի հայ գաղութի մասին զեկուցեց պր. Հայկ Նաճարյանը։ Նախքան դասախոսությունը Վեհափառ Հայրապետը բարի գալուստ մաղթեց տեր և տիկին Նաճարյաններին, հետո խոսեց Հնդկաստանի հայ գաղութի հայրենասիրական և բարեպաշտական զգացմունքների մասին, ապա իր օրհնությունն ու ողջույնները հղեց հյուրերի միջոցով հնդկահայության։ Բանախոսությունից հետո պր. Նաճարյանը ցուցադրեց գունավոր երկու ֆիլմ՝ ազգային-եկեղեցական պատմական կյանքից վերցված և պատրաստված Կալկաթայի հայոց Մարդասիրական Ճեմարանի և հայ երիտասարդների կողմից։ Առաջին ֆիլմը Արդարի դարձի պատմությունն էր, իսկ երկրորդը՝ Տրդատ Քաջավորի դարձն ու մկրտությունը՝ ըստ Ագաթանգեղոսի պատմության։ Վերջում պր. Նաճարյանը ֆիլմերը և կինոապարատը իր լրիվ կազմով նվիրեց Հոգևոր Ճեմարանին։ Վերատեսուչ սրբազանը շերմ շնորհակալություն հայտնեց պր. Նաճարյանին և իր տիկնոջը՝ այս նվերի համար։

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ, ՑՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին չին գրողներ Վու Ցյանը և Ցան Ցզե Մինը, որոնք հյուրաբար գտնվում էին Հայաստանում։ Հյուրերը եղան Մայր Տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարանում և մեծ ուշադրությամբ դիտեցին այնտեղ պահվող արվեստի հազվագյուտ նմուշները։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեց Գերմանական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայի բանաստեղծ և դրամատուրգ Թոմաս Խրիստոֆ Խաուլանը։ Հարգարժան հյուրը եղավ Մայր Տաճարում, եկեղեցական արվեստի թանգարանում, ինչպես նաև Էջմիածնի մյուս սրբավայրերում ու տեսարժան վայրերում՝ իր հետ տանելով խոր տպավորություններ։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հարավսլավական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայի պետական առևտրի, հասարակական սննդի և տուրիզմի արհմիութենական աշխատողների պատվիրակությունը։ Հյուրերը եղան Մայր Տաճարում և թանգարանում։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Ս. Էջմիածին այցելեց Իտալիայի սննդարդյունաբերության պատվիրակությունը, գլխավորությամբ սննդարդյունաբերության աշխատողների ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Դել Ալիո Պեպինոնի։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ այցելեց Շոտլանդիա—ՍՍՌՄ ընկերության պատվիրակությունը, որին գլխավորում էր Քլակմանանի կոմսության կրթության դեպարտամենտի դիրեկտոր պր. Լանդբորոն։ Պատվիրակության կազմի մեջ էին Էդինբուրգի համալսարանի մանկավարժության պրոֆեսոր Պիլեյը, շոտլանդական նշանավոր դրամատուրգ Ալեքսանդր Ռիդը, Շոտլանդիայի ժողովրդական արվեստի զարգացման ընկերության քարտուղար ժուռնալիստ Ջեյմս Ռիդը։ Հյուրերը եղան Մայր Տաճարում, թանգարանում և ծանոթացան Մայր Տաճարում կատարված նոր պեղումներին ու Մայր Տաճարի պատմությանը։

❊❊❊

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Թբիլիսիի «Վրացֆիլմ» կինոստուդիայի մի խումբ նշանավոր դերասաններ ու աշխատակիցներ՝ գլխավորությամբ ստուդիայի դիրեկտորի։ Հարգարժան հյուրերը եղան Մայր Տաճարում, որից հետո Վեհափառ Հայրապետը բարեհաճեց նրանց ընդունել Վեհարանում։ Ընդունելությունը անցավ ջերմ և բարեկամական մթնոլորտում։

❊❊❊

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ռումինահայ նշանավոր ծաղրանկարիչ Զիկ Դամատյանը։ Հարգարժան հյուրը եղավ Մայր Տաճարում, թանգարանում, ծանոթացավ նորերս կատարված պեղումներին, դիտեց Մայր Տաճարի հարավային վերակառուցված գմբեթը և վանքի ժամացույցի նորակառույց աշտարակը, ինչպես նաև Մայր Աթոռի տեսարժան այլ վայրերը։ Վերջում Վեհափառ Հայրապետը պր. Զիկ Դամատյանին ընդունեց Վեհարանում և սրտագին զրույց ունեցավ նրա հետ։

❊❊❊

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին արգենտինական «Տանգո» նվագախմբի արտիստները՝ գլխավորությամբ խմբի ղեկավար Օսվալդո Պուդիֆեսերի։ Խումբը համերգային ծրագրով ելույթ է ունենում Երևանում։ Հյուրերը Մայր Տաճարն ու այլ տեսարժան վայրերը դիտելուց հետո եղան Վեհարանում, որտեղ նրանց բարեհաճեց ընդունել Վեհափառ Հայրապետը։ Ընդունելությունը տևեց մոտ մեկ ժամ, որի ընթացքում հյուրերը իրենց հետաքրքրող մի շարք հարցեր տվեցին և հայտնեցին, որ թեև իրենք կաթոլիկ են, բայց շատ են հարգում Հայ եկեղեցուն և Արգենտինայում մի շարք հայ բարեկամներ ունեն, որոնք իրենց խնդրել էին Երևան լինելիս անպայման այցելել Ս. Էջմիածին։ Վեհափառ Հայրապետը հյուրերին Էջմիածնի խաչեր նվիրեց։ Հյուրերը Վեհարանում այդ խաչերը կախեցին իրենց վզից։ Ապա Վեհափառ Հայրապետը նրանց խնդրանքի վրա նվիրեց նաև Իր և Ս. Էջմիածնի նկարը և խաչեր՝ Արգենտինայի իրենց հայ բարեկամներին տանելու համար։ Ընդունելության վերջում, հյուրերի հատուկ խնդրանքով, Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին։

❊❊❊

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ամերիկահայ հայտնի բիոքիմիկոս և Պենսիլվանիայի համալսարանի պրոֆեսոր Մանասե Սևակը, որը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրավերով հոկտեմբերի 1-ին ժամանել է Երևան։ Հայ գիտնականը եղավ Մայր Տաճարում, թանգարանում, որտեղ հիացմունքով դիտեց արվեստի բազմաթիվ նմուշները։ Վերջում Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց նրան և սրտագին զրույց ունեցավ նրա հետ։

❊❊❊

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Ս. Էջմիածին այցելեցին Չեխոսլովակա—Սովետական բարեկամության միության 36 պատասխանատու աշխատողներ, գլխավորությամբ Չեխոսլովակա—Սովետական բարեկամության միության Սլովակիայի կոմիտեի առաջին քարտուղար Յոզեֆ Տոկարի։ Հարգարժան հյուրերը եղան Մայր Տաճարում և եկեղեցական արվեստի թանգարանում։ Հյուրերը լավագույն տպավորություններով բաժանվեցին Ս. Էջմիածնից։

❊❊❊

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց տաղանդավոր թավջութակահար Ռոգան դե Մեյրամը (Ֆեյլոնից)։ Արվեստագետը ծանոթացավ Մայր Տաճարի ճարտարապետական կառուցվածքին, հետաքրքրվեց պեղումներով և եղավ եկեղեցական արվեստի թանգարանում։



ՄԵՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻԹԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎԱԼՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 10-ին, շաբաթ օր, «սրբոց թարգմանչաց վարդապետացն» տոնի առթիվ, երեկոյան ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետի հրամանով, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը Մայր Տաճարում Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Մաշտոց, Տ. Հարություն և Տ. Հուսիկ աբեղաներին շնորհեց մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն։

Խարտավիլակի պաշտոնը կատարում էր Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը։

Արդարև շատ հուզիչ և իմաստալից է «մասնավոր վարդապետական գաւազան տալոյ» արարողությունը, որը «յօրինեալ է Ս. Գրիգոր Տաթևացւոյ ճշմարտութեան վարդապետի, գերահանճար հռետորի և անյաղթ ախոյենի սուրբ հաւատոյ»։

Շարականների, աղոթքների, սուրբգրական ընթերցումների համապատասխան կատարմամբ, աստիճան առ աստիճան, շնորհվում է վարդապետական գավազանի իշխանությունը, որով ընծայալները համարձակություն են ստանում «Քարոզելոյ զրանն կենաց ողջամիտ քարոզութեամբ յունկն հաւատացելոց», պահել «զպատուէր օրինադրութեանց հարցն սրբոց՝ ողջամիտ վարդապետութեամբ, ըստ Հայաստանեայց եկեղեցւոյ»։

Ապա նորընծա վարդապետները թափորով առաջնորդվում են Վեհարան, որտեղ Վեհափառ Հայրապետը շնորհավորում է նորընծա վարդապետներին և օրհնում նրանց։ Նորընծա վարդապետներին շնորհավորում են նաև Մայր Աթոռի բոլոր միաբանները։

Նորընծա վարդապետները նախապես պատրաստել և քննիչ հանձնաժողովին ներկայացրել էին իրենց վարդապետական ավարտաճառերը։

Գերագույն Հոգևոր խորհրդի որոշմամբ կազմված հանձնաժողովը, որի կազմի մեջ մտնում են Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արբրահամյանը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Ադնավուրյանը, գերագույն Հոգևոր խորհրդի անդամ պրոֆ. Ա. Առաքելյանը և «էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, հանգամանորեն քննելուց հետո վարդապետական աստիճան ստանալու համար ներկայացված ավարտաճառերը, սեպտեմբերի 30-ին նշանակեց նրանց հրապարակային բանավոր պաշտպանությունը։

Վարդապետական ավարտաճառերի բանավոր պաշտպանության ժամանակ վարդապետության թեկնածուները պատասխանեցին նաև քննիչ հանձնաժողովի հարցերին, որոնք ընդհանրապես վերաբերում էին Հայ եկեղեցու պատմության, Ս. Գրոց մեկնության և դավանության։

Ներկայացված վարդապետական ավարտաճառերի հաջող պաշտպանությունից հետո քննիչ հանձնաժողովը դրանք ներկայացրեց Նորին Ս. Օծության՝ թեկնածուներին արժանի գտնելով վարդապետական աստիճանի։

Հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Քաշիրյանի ավարտաճառի նյութն էր «էջմիածինը դարեր շարունակ, ժողովրդի հետ ու ժողովրդի համար»։

Հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենչյանը ներկայացրել էր «Ներսես Շնորհալու կյանքն ու մատենագրական վաստակը»։

Հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանի ավարտաճառի նյութն էր «Մայր Աթոռի եկեղեցական արվեստի թանգարանը»։

Երեք ուսումնասիրություններն էլ խոնարհ և լուրջ աշխատություններ են, արժանի գնահատության։

Հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետը Մայր Աթոռի Վերատուգիչ հանձնաժողովի անդամ է և վանքի մատակարար։ Հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետը եղել է Ս. Գեղարդի վանքի վանահայր և այժմ հաշվապահ է վանքի տնտեսա-ֆինանսական բաժնում։ Հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետը Մայր Տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարանի վարիչն է։ Նորընծա երեք վարդապետները գիտակից, կրթված և նվիրվյալ հոգևորականներ են և խղճի մտքով ու անձնվիրաբար ծառայում են Մայր Աթոռին։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը սրտագին շնորհավորում է նորընծա վարդապետներին, մաղթում նրանց կարողություն և ուժ՝ նրանց հետագա հոգևոր ծառայության դաշտում, ի պայծառություն Մայր Աթոռի։



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 7-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, կատարվեց Ճեմարանի 1959—1960 ուսումնական տարվա պաշտոնական բացումը։

Հանդիսության նախագահում էր Վեհափառ Հայրապետը, շրջապատված Գերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության անդամներով։

Հանդեսն սկսվեց երգչախմբի «Աշակերտք Քրիստոսիս» շարականի երգեցողությամբ, որից հետո կարդացվեց Սերմնացանի առակը (Մատթ. ԺԳ 4—9)։ «Որք զարդարեցին» շարականի կատարումից հետո, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազան հանդես է գալիս հանուն Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության՝ Վեհափառ Հայրապետին ուղղված երախտագիտական ջերմ խոսքով.

«Վեհափառ Տե՛ր։

Դարձյալ սեպտեմբեր, լավագույն ամիսը մեր մեծ Հայրենիքի։ Այս օրերին, միլիոնավոր մատաղ հոգիներ, ուսանողներ բոլորն էլ, թարմացած ամառային արձակուրդով, նորից են դիմում դեպի իրենց շատ սիրելի ուսումնարանները՝ սրտերում նոր իղձեր և ապագայի մեծ հույսեր։ Ամեն մի ուսանող մի փոքր տիեզերք է ինքնիր մեջ՝ հասնելու համար այն անհունին, որին նա ձգտում է։

Սեպտեմբերը լավագույն ամիսն է նաև Հայաստան աշխարհի։ Այս ամսվա մեջ է, որ հասունանում են Հայրենի երկրի ընտիր մրգերը՝ խաղողն ու դեղձը, սալորն ու նուռը, ու բերքով և բարիքներով են լցվում հայրենի ամբարները, մեր աշխատասեր ժողովրդի արդար վաստակով ու քրտինքով։

Ահա այս քաղցր ամսվա մեջ քաղցրանում են նաև մեր սրտերը, զվարթանում են մեր հոգիները ի տես Ճեմարանի ուսանողության, երբ վերստին բաց ենք անում նրանց առաջ Հոգևոր Ճեմարանի դռները։ «Թույլ տուք մանկտույդ գալ առ իս»,— ասում էր մեր Մեծ Վարդապետը, որովհետև այդ մանուկների սրտի և հոգու մեջ է, որ պիտի ծլեն ու ծաղկեն Նրա սերմանած սերմերը։ Որքա՜ն բախտավոր են այս տղաները, կերկնապես նվիրականացած այս սրբավայրի մեջ, Հայրենի հողի վրա, ուր միշտ սավառնում են անմահ հոգիները Սահակի և Մեսրոպի, Տրդատի և Վռամշապուհի, Վարդանի և Վահանի, Նարեկացու և Շնորհալու, մի խոսքով՝ բոլոր նրանց, որոնք կերտեցին մեր դիրն ու գրականությունը և այն պաշտպանեցին իրենց զենքով և արիությամբ։ Հարգա՜նք, խո՜նկ այդ մեծ հոգիների հիշատակին։

Վեհափառ Տե՛ր, Հոգևոր Ճեմարանի 1959—1960 ուսումնական տարեշրջանի վերաբացման այս առավոտ, հավաքվել ենք այստեղ ուսուցիչ և ուսանող, միաբանություն և պաշտոնեություն՝ վերանորոգելու մեր ուխտը Աստուծո, Ազգի և Ձեր առաջ, սովորեցնելու և սովորելու, միշտ դեպի առաջ, միշտ դեպի լույս, ըստ ավետարանական

այն մեծ պատգամի, թե օրվ որ լույսի մեջ կգնա, նա չի մոլորվի»։

Ահա այս հավատով, Վեհափառ Տե՛ր, Ձեզ են գալիս այս պատանիները, Դուք էք ներանց լույսը և առաջնորդը, ներանց փարոսը և ճշմարիտ նավապետը։

Բաշխեցե՛ք մեզ, Վեհափառ Ս. Հայրապե՛տ, Ձեր հայրական և հայրապետական օրհնությունները, որպեսզի միշտ ի շինության և ի պայծառության մնա հույսի այս վառարանը։

Թո՛ղ ամենաբարին Աստված պարգևի Ձերդ Ս. Օծության երկար, շա՛տ երկար ու խաղաղ տարիներ, որպեսզի տեսնեք Դուք Ձեր ցանած սերմերի պտղաբերումը «ընդ միոյ և ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր»։

Թույլ տվեք, Վեհափառ Տե՛ր, ի դիմաց իմ, ուսուցչական լրիվ կազմի և բովանդակ ուսանողության, մատչել ի համբույր Ձերդ Ս. Օծության Ս. Աջույն և ընդունել Ձեր հայրապետական օրհնությունը»։

Ա լսարանի ուսանող Գեորգ Բաղդիշյանի՝ հանուն ուսանողության Վեհափառ Հայրապետին ուղղած գրավոր ողջերձից հետո, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը հանդես եկավ ուսանողությանն ուղղված շերմ, քաջալերական խոսքով՝ ուսումնական նոր տարվա սեմին։

Ճեմարանի վերարացման հանդեսի վերջում խոսք առավ նաև Վեհափառ Հայրապետը և Իր հայրական ջերմ խոսքն ուղղելով վերատեսչության, դասախոսական կազմին և ուսանողության, ասաց.

«Բարի վերադարձ ձեզ, սիրելի՛ դասախոսներ, բարի վերադարձ ձեզ, սիրելի՛ ուսանողներ։

Կշնորհավորեմ ձեզ՝ մեր Հոգևոր Ճեմարանի ուսումնական նոր տարվա շրջանի սկզբնավորության առթիվ։ Կշնորհավորեմ նաև Մեր հարազատ եղբայրը՝ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսը, որ վստահ եմ, նոր եռանդով, նոր ոգևորությամբ պիտի շարունակե իր աշխատանքը այս սրբազան ճարկի տակ, բարի արդյունքներով։ Ինչպես միշտ կրկնած եմ, մենք բոլորս մեր հույսերը կկապենք էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վրա և մեր վստահությունը և հավատը կմնան անխախտ, թե մեր հույսերը տակավ կիրականանան և մեր կյանքը կճառաջիմե՝ հոգուս հավատացյալ ժողովուրդի հոգևոր կյանքի շինության։

Հոգևոր Ճեմարանը իր դռները կբանա այսօր նպաստավոր պայմաններու մեջ թե՛ ներքին իմաստով և թե՛ արտաքին իմաստով։ Ներքին իմաստով՝ որովհետև, ինչպես կտեսնենք, Մայր Աթոռը շատ բնականոն կերպով իր կյանքը կշարունակե թե՛ նյութական, թե՛ հոգևոր և թե՛ բարոյական տեսակետներե։ Փա՜ռք Տիրոջ, որ մենք շրջապատված ենք մեր ժողովուրդի համակրանքով ու սիրով և հովանավորված մեր հայրենի կառավարության հոգատար ուշադրությամբ և բարյացակամությամբ։ Ս. էջմիածինը իր դարավոր համբավը կշարունակի ամրացնել ու տարածել հեռավոր ափերու վրա, ուր ցրված է մեր ժողովուրդը։ Օր չանցնիր, որ այս իմաստով Մենք նոր ապացույցներ չարձանագրենք և բարի լուրեր չստանանք մեր պանդուխտ զավակներեն. որոնք կապրին Ս. էջմիածնի և Հայրենիքի միածույլ սիրով։ Հայության սրտին մեջ այս երկու զգացումներ զուգորդված են և ամրացած և անբաժանելի են իրարմե։

Սփյուռքի մեջ մեր եղբայրներն ու քույրերը այսօր կապրին Ս. էջմիածնի կարոտով և կպայքարին Ս. էջմիածնի դրոշի տակ, հանուն մեր սրբություններու և մեր Ազգի ու Հայրենիքի գերագույն շահերու։ Ս. էջմիածնի դերը մեր կարծածեն շատ ավելի կենդանի ու բախտորոշ է այսօր, մանավանդ արտասահմանի հայության համար։ Առանց չափազանցելու կարելի է ըսել, որ մեր ժողովուրդի հայացքը, ամբողջ հայության հայացքը, համեստ շինականի խրճիթեն մինչև մտավորականության բարձր շրջանակներ, Մայր Արարատի ափերեն մինչև ափերը հեռավոր օվկիանոսներու, կեդրոնացած է Ս. էջմիածնի վրա։ Ս. էջմիածինը այսօր կհանդիսանա կիզման կետը բոլոր ճշմարիտ հայ սրտերու։ Միմիայն տկարամիտները ի վիճակի չեն տեսնելու Ս. էջմիածնի բախտորոշ նշանակությունը մեր կյանքի մեջ և միայն թուլամորթները կտկարանան մեր գործի ճանապարհի վրա և կհեռանան մեր շարքերեն։ Ս. էջմիածինը առավել ինքնագիտակցությամբ պիտի շարունակե իր առաքելությունը։ Մենք շատ տարի շարունակ այստեղ շեշտած ենք և փափագած, որ մեր երիտասարդ միաբաններն ու Հոգևոր Ճեմարանի ուսանողները լավ ըմբռնեն այս ճշմարտությունը, թե՛ հոգևոր և թե՛ ազգային տեսակետ, և հոգեպես պատրաստվին նվիրվելու այս սուրբ գործին։ Այս աշխատանքը դյուրին չէ անշուշտ և բազում ճաշակություններ կպահանջեն մեր ուսանողներեն, և զոհողության ոգի։ Գաղափարական կյանք ապրիլ կամեցող երիտասարդ մը, սակայն, պետք է գիտնա իր անձը և իր աշխատանքի ուժը նվիրել նման սուրբ գործի։ Այսօր հայ կյանքին մեջ չկա ասպարեզ մը առավել ամբողջականությամբ և բազմակողմանիությամբ հայ ժողովուրդին ծառայելու, քան Ս. էջմիածնին ծառայելու ուղին։ Անշուշտ հիշեցուն է տրված, որ կարողանանք բարձրանալ և հասնիլ այս գիտակցության։

Բարեբախտաբար մեր Ս. Եկեղեցին փառավոր պատմություն մը ունի, ուր կտեսնենք հոգևորականներու երկար շարք մը, սկսած Ս. Գրիգոր Լուսավորչեն, Ս. Սահակեն և Ս. Մեսրոպեն մինչև Նարեկացի և Շնորհալի և մինչև մեր դարաշրջանի մեծազարմ հոգևորականները, որոնց կյանքը և գործը պայծառ և հերոսական օրինակներ են մեզ համար: Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը ն մենք կկամենանք, որ մեծերու ոգիով կերտենք մեր ուսանողներու հոգիները:

Այսօր մենք կանգնած ենք ձեր առաջ իբրև Պարոդիկոս և ձեզ կխոսինք և կկայենք, թե վառ է Ս. Լուսավորչի կանթեղը: Վառ է այդ սրբազան լույսը մեր հոգիներուն մեջ: Եվ այդ լույսը երբեմ պիտի չմարի, Բանի հայ ժողովուրդ կապրի:

Սիրելի՛ ուսանողներ, այս հույսերով և այս անխախտ համոզումով, համոզում, որ դավանանք մրն է բոլորիս համար, Մենք բացված կհայտարարենք ուսումնական նոր տարին:

Մեր խոսքը կվերջացնենք ցանկությամբ մը, որ վստահ ենք, թե ձեզ պիտի խանդավառե: Այս ամառ մեր հայրենի գիտնական պրոֆեսորի մը հետ խոսակցելու առթիվ, մանրամասն տեղեկություններ ստացինք Արագած լեռան և Արագածի կատարը բարձրանալու հնարավորություններու մասին: Մեր ստացած տեղեկությունները նպաստավոր բլլալով, որոշեցինք, որ առաջիկա ամռան, ուսումնական տարեշրջանի վերջավորության, դուք բոլորդ, սիրելի՛ ուսանողներ, Մենք ալ ձեզ հետ միասին, արշավ մը կազմակերպենք և միասին բարձրանանք դեպի Արագած: Ուրեմն, այս տարի մեր Ճեմարանի դռները կբանանք ձեր առաջ, իբրև նշանաբան ունենալով՝ հառաջ դեպի բարձունքները Արագածի, դեպի բարձունքները Լուսավորչի անմար կանթեղի: Ուժ, եռանդ, հաջողություն և օրհնություն ձեզ բոլորիդ»:

Բուռն ծափերի տակ Վեհափառ Հայրապետը վերջացրեց Իր խոսքերը, ապա օրհնեց բոլորին:

Հանդիսությունեն հետո Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Վեհարանում ընդունել վերատեսուչ սրբազան հոր և դասախոսական կազմին, և օգտակար թելադրություններ անել ուսումնական նոր տարվա առթիվ:

Ժամը 3-ին, վանքի սեղանատանը, տրվեց հաշկերույթ, որին ներկա էին Վեհափառ Հայրապետը· ողջ միաբանությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը: Սեղանի հիմնական ճաշն էր ավանդական «հարիսա»-ն: Միաբանության անունից ուսանողներին շնորհավորեցին նոր ուսումնական տարվա առթիվ և ուսման մեջ հաջողություն բարեմաղթեցին գերաշնորհ Տ. Վահան և Տ. Սահակ արքեպիսկոպոսները:

Դասախոսական կազմի անունից խոսեց «Էջմիածին» ամսագրի խմբագիր և Հոգևոր Ճեմարանի դասախոս պր. Արթուն Հատիսյանը, «Եկեղեցի, մշակույթ, Հայրենիք» եռյակ հիմնական և միմյանցից անբաժան գաղափարների շուրջ, որոնց ծառայության պետք է նվիրվի ապագա հայ հոգևորականը, Ճեմարանի գրասեղաններից սկսյալ:

Ընդունելությունը վերջացավ խմբովին երգված «Էջ Միածին ի Հօրէ» շարականով և Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով:

Սեպտեմբերի 8-ին, երեքշաբթի, ժամը 9-ին սկսվեցին կանոնավոր դասախոսությունները Հոգևոր Ճեմարանում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՌՆԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴ

Նորին Ս. Օծութիւնը սեպտեմբերի 18-ին, ուրբաթ օր, այցելեց Գառնիի հեթանոսական տաճարը և ապա Ս. Գեղարդի վանքը։ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Հոգեվոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը և Բուլղարիայի Պլովդիվ քաղաքի եկեղեցական խորհրդի նախագահ պր. Գևորգ Կարապետյանը, որն ուխտավորաբար Մայր Աթոռում է գտնվում։ Երևանում մեզ միացան նաև Հայրենիքում գտնվող հալեպաբնակ արժանապատիվ Տ. Եղիշե քահանա Փանոսյանը, բելգրադաբնակ տեր և տիկին Ալթունյանները և Մայր Աթոռի ճարտարապետների հանձնախմբի անդամ ճարտարապետ Ռ. Իսրայելյանը։

Մեր ավտոմեքենաները սուրում են մայրաքաղաքի ասֆալտապատ ծառաշատ փողոցներով, որոնց երկու կողմերին երկինք են պատում հայկական ճարտարապետությամբ կերտված հոյակապ, մեկը մյուսից գեղեցիկ շենքերը։ Ամեն կողմից լսվում է հայ շինարար վարպետի մուրճի զրնգոցը, հայ վարպետի՝ որի քրտնաջան աշխատանքով օրավուր գեղեցկանում է մեր փառքի և հուսի քաղաք անմահ Երևանը։ Մայրաքաղաքի նորակառույցները տեսնելիս զգում ես ազգային հպարտություն, որ մեր ժողովուրդը չորս տասնամյակների ընթացքում կարողացավ «կավե կճուճ» Երևանից կերտել տուֆաշեն Երևանը։ Տեսնելով այս ամենը, հիշում ենք մեր անցյալի մեծանուն շինարարներին՝ Տրդատներին ու Մանվելներին, որոնք մեր պատմության խավար օրերին իրենց մտքի հանճարով անկրկնելի կոթողներ են կերտել մեր հարազատ Հայրենի հողի վրա, իսկ այսօր նրանց որդիները՝ այսօրվա շինարարները, կառուցում են ու անդադար կառուցում Հայրենիքը։ Այս խոհերով տարված, արդեն քաղաքը մնում է մեր հետևում և մեր ավտոմեքենաները ուղղություն են վերցնում դեպի Գառնի և Ս. Գեղարդ տանող ճանապարհը։

Մեր ավտոմեքենաները միշտ բարձրանում են, հասնելու համար Գեղամա կանաչապատ լեռները, որոնց ծառաշատ ձորերից մեկում գտնվում է Ս. Գեղարդի մենաստանը։ Մեր հետևում են մնացել Ավանի և Ջրվեժի ցորենի լայնարձակ դաշտերը, որոնց մեջ ուրախ աղմուկով աշխատում են կոմբայնները, հավաքելով հարուստ բերքը։ Ճանապարհին կանգ ենք առնում Եղիշե Չարենցի հիշատակին կառուցված բազալտե հուշարձան-կամարի առջև։ Աքանչելի է համարհապատկերը։ Հուշարձան-կամարի հեղինակ ճարտարապետ Ռ. Իսրայելյանը բացատրում է, թե ինչու է ընտրել այս գեղեցիկ վայրը, որովհետև այստեղից է, որ այնքան հրաշալիորեն Երևանի ֆոնի վրա երևում են Արարատները։ Կամարի վրա փորագրված են անմահ բանաստեղծի հայրենաշունչ խոսքերը ձոնված Արարատին.

«Աշխարհ անցիր Արարատի նման ճերմակ գագաթ չկա,
Ինչպես անհաս փառքի ճամբա, ես իմ
Մասիս սարն եմ սիրում»։

Այստեղ կես ժամ մնալուց հետո շարունակում ենք մեր ճանապարհը, միշտ դեպի վեր, հասնելու համար Պողոյանների կալվածը հանդիսացող Ս. Գեղարդա վանքին։ Այժմ մեր առջև են փռված այգիները և

նրանց մեջ թաղված պատմական Գառնին, իր հեթանոսական տաճարով, և կամ, ինչպես տեղացիները սովոր են ասելու՝ «Տրդատա թախտ»-ով, «Տրդատա բերդ»-ով։ Ճարտարապետ Ռ. Խրաչիկյանը տալիս է տեղատրություններ տաճարի կառուցման ժամանակի և ճարտարապետական արժեքի մասին։ Գառնիի անմատչելի բերդը, իր հեթանոսական տաճարով, եղել է հին Հայաստանի աշխի ընկնող ռազմագիտական արժեք ներկայացնող վայրերից մեկը։ Մեր թվարկությունից առաջ Բ դարում կառուցվում է այս հոյակապ բերդ-տաճարը։

Գառնիի ամրոցի մասին խոսել են մեր մատենագիրներից Մովսես Խորենացին (Ե դար), Եղիշե պատմագիրը (Ե դար), Սեբեոս պատմիչը (Է դար)։ Հիշված այս երեք հեղինակները Գառնին ներկայացնում են որպես ոչ միայն թագավորական ամառանոց, այլ նաև որպես պաշտպանված դինվորական ամրություն։ Միջին դարերում էլ այս անառիկ ամրությունը օգտագործված է նվաճողների կամ հայերի կողմից որպես մի անառիկ բերդ։ Գառնին մոտավորապես հազար տարի եղել է որպես ամուր պաշտպանողական ամրոց հայ զորքերի համար։ Այս անմատչելի բերդ-տաճարը կանգուն է մնացել մինչև ԺԷ դարը։ 1679 թվականի երկրաշարժի պատճառով վերջնականապես ավերվում է և ծածկվում հսկայական հողակույտով։

Ժամերով մնացինք Գառնիի ավերակներում, ոգեկոչելով մեր փառավոր անցյալի պատմական հուշերը՝ կապված Գառնիի տաճարին և ամրոցին։

Ժամը 12-ն է արդեն։ Ճանապարհվում ենք նորակառույց ասֆալտապատ ճանապարհով դեպի Ս. Գեղարդի հինավուրց վանքը։



ՎՈՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ-ԿԱՄԱՐԻ ԱՌԱՋ

Մինչև Ս. Գեղարդի վանքը՝ ձգվում են Գեղամա լեռները։ Վանքին չհասած, չորս կիլոմետր հեռավորության վրա, բազալտակերտ գեղեցիկ պատվանդանի վրա կանգնած է Գառոյան տոհմի զինանշանը հանդիսացող առյուծը, աջ թաթին բռնած վարդ՝ ուղղված դեպի Ս. Գեղարդի վանքը։ Հուշարձանի հեղինակ ճարտարապետ Խրաչիկյանը նորից բացատրություն է տալիս հուշարձանի կառուցման մասին։

Ճանապարհը անցնում է հիմա անդնդախոր ձորերի միջով, և ահա Ս. Գեղարդի վանքի գլխավոր մուտքի առջև ենք։ Այնտեղ նորին Վեհափառության դիմավորում են մենաստանի վանահայր հոգեշնորհ Տ. Մուշեղ

վարդապետ Պետիկյանը, նույն վանքի միաբաններ հոգեշնորհ Տ. Պողոս աբեղա Տեր-Նշանյանը, շնորհունակ Վարդան սարկավագ Շամլյանը, վանքի պաշտոնյաները և ուխտավորների մի մեծ խումբ։ Վեհափառ Հայրապետը իր հայրապետական օրհնությունը ներկաներին տալուց հետո, առաջնորդվում է տաճար։ Պատմական մենաստանի սուրբ կամարների տակ հնչում են «Ուրախ լեր» շարականի հոգեթով հնչյունները։

Վեհափառ Հայրապետը իր ուխտը կատարելուց հետո այցելում է նաև Գեղարդի վանքի միաբան Տ. Պողոս աբեղա Տեր-Նշանյանի ծախքով և ի հիշատակ իր ծնողների բազալտ քարից նոր կառուցված աղբյուր-հուշարձանը։ Այս ուրախ առիթով Տ. Պողոս աբեղան Վեհափառ Հայրապետի ոտքերի առաջ, որպես ուխտ, մորթում է իր խնամած և աճեցրած մի տարեկան ոչխարը։ Ապա Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է վանահոր սենյակը՝ հանդստանալու, որից հետո վանահայր հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետը բացատրություններ է տալիս վանքի, դիպավոր ժամատան, վիմափոր տաճարների դրության, վանական այլ վերանորոգությունների և վանքի տնտեսության մասին։

Ավանդական որոշ տեղեկությունների հիման վրա, Ս. Գեղարդի վանքը հիմնադրվել է Լուսավորչի օրոք։ Այսօրվա Ս. Գեղարդի ճարտարապետական կառույցը պատկանում է ԺԳ դարին։ Այստեղ, գլխավոր եկեղեցուց դավթից բացի, որոնք կառուցված են 1215 թվականին, 1225 թվականին Մայր եկեղեցու կողքին գտնվող ժայռի մեջ հայ կառուցող վարպետ Գալցակի ձեռամբ հրաշակերտված են երկհարկանի երկու-երեք վիմափոր տաճարներ, որոնք իրավամբ մեր ճարտարապետության գլուխ-գործոցներից կարելի է համարել։ Լեռնային այս հրաշալի ձորը, որի վրա կառուցված է Գեղարդի մենաստանը, պատկանել է Պռոշյաններին, որոնք և կառուցել են մենաստանը։

Նորին Սրբության այցելության բարեպատեհ առիթով Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։ Ս. Գեղարդի հրաշալի ճնության գրկում, ի պատիվ հյուրերի կազմակերպեց հյուրասիրություն։ Սեղանի շուրջը Վեհափառ Հայրապետը խոսք առնելով ասաց. «Մենք այսօր ոչ ծրագրված և անպաշտոն կերպով եկանք այս ճինավուրց վանքը։ Պետք է ասենք, որ Մեր ընտրությունից հետո չէինք եկել այստեղ։ Այսօր Մենք եկանք և Մեզ հետ բերեցինք մեր ճարտարապետների

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳԱՌՆԻՈՒՄ

հանձնախմբի մեկ պատվարժան անդամին, Մեր և բոլոր հայաստանցիների սիրելի Ռաֆայել Խաչայլյանին, որպեսզի տեղվույն վրա ուսումնասիրեն ապագայի շինարարական աշխատանքների ծրագիրը, որով այս հոյակապ հուշարձանը ևս կհասնի իր նախկին փառքին։ Գոցլ տեղին է ասել՝ փառք Աստուծո, մեր ժողովուրդը Հայրենիքից ներս և Հայրենիքից դուրս, ամեն կերպով՝ նյութապես և բարոյապես գոռավիգ է Մեզ և Մեզ, ոգեորված այդ բոլորով, պիտի անենք ամեն բան՝ շենացնելու համար մեր բոլոր սրբատեղիները, մեր անցյալ փառքի կոթողները, մշակույթի հին օջախները, որոնց համար մեր ժողովուրդը իրավամբ պարծեցել է երեկ, այսօր և հավիտյանս։

Երեկոյան ժամը 4.30-ին, շնորհակալություն հայտնելով վանահորը իր սիրալիր ընդունելության և շերմ հյուրասիրության համար, բաժանվեցինք Ս. Գեղարդի վանքից՝ բերելով մեզ հետ անջնջելի տպավորություններ այդ հոյակապ վանքից ու նրա միաբաններից։

ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ*

1867 թվականի հունվարի 16-ին պոլսահայ մտավորականությունը, էջմիածնի Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոս Գևորգ Դ-ին, դեռևս Կոստանդնուպոլսում գտնված օրերին, ներկայացնում է մի հուշագիր ազգային-եկեղեցական կյանքի վերաբերյալ, ուր խոսվում է նաև «անլուր և անխիղճ գայթակղությանց» մասին, որոնք «գործվեցան մոտ ատեններս երկու մասնավոր Կաթողիկոսության թեմերուն մեջ, հՍաղթամար և ի Սիս, անարժան և իսպառ անարժան եկեղեցականաց միջոցով» (Իզմիրլյան 631)։ Առանձին միահամուռ ցանկությունն է կարգ կանոն հաստատել նաև Սսում և Աղթամարում։ Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմելով ժողովուրդը խնդրում է, որ նա «այնպիսի սրբապղծությանց և Հայաստանյայց եկեղեցվո և Ազգի կործանում և աղետ սպառնացող ոճրագործությանց վրա անշուշտ արժանավոր սրտմրտությամբ կնայի և Տիրոջը այգին այնպիսի աղվեսներե գերծ պահելու փույթ պիտի տանի» (Իզմիրլյան 632)։

Գևորգ Դ պատասխանում է, որ հայ մամուլի՝ «Մասիս» (Կարապետ Ուլուճյան), «Փորձ» (Համբարձում Ալամաճյան), «Մանզումե» (Կարապետ Փանոսյան), «Միլե Ավարայրի» (Մարկոս Աղաբեկյան), «Սիածան» (Կարապետ Ջուխաճյան), «Ժամանակ» (Ստեփան Պ. Փափազյան), «գրածները իմ սրբազան պարտականություններս են և ձեր այդ զգացածներն ալ իմ զգացմունքներս են» (Իզմիրլյան 638), Կոստանդնուպոլսի ժամանակի պատրիարք Պողոս Բ Թագաթագյան Բրուսացին (1863—1869) Գևորգ Դ-ին ներկայացնում է «Աղթամարայ և Սսոյ խնդիրներն ի տնօրինություն»։ 1867 թվականի փետրվարին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաճությամբ կազմվում է եկեղեցական մասնաժողով, որը պատրաստում է վեց հոդվածներից բաղկացած մի կանոնադրություն Սսի և Աղթամարի Կաթողիկոսությանց վերաբերյալ և ներկայացնում է Վեհի ուշադրությանը։ Գևորգ Դ-ն իր կարգին կանոնագիրը հանձնում է պատրիարքին՝ ի գործադրություն։

Ահա այդ կանոնադրությունը.

1. Կաթողիկոսունք Սսոյ և Աղթամարայ նորին ի վիճակաց՝ ուրեանց և յընդհանուր ժողովոյն Կոստանդնուպոլսոյ, յորմէ առաջարկին առ Վեհափառ Կաթողիկոսն Ամենայն Հայոց ի վաւերացումն և հաստատութիւն։

Արդէն ի ցեղէ Աշապահեանց Սսոյ բարձեալ է ընտրութիւն կաթողիկոսական՝ ընդհանուր հաւանութեամբ Ազգին, արժանաւորաց ներ սեպհականելով զայն։

2. Կաթողիկոսունքն Սսոյ և Աղթամարայ զօծումն կաթողիկոսական ընդունին ի ձեռաց Վեհափառ Կաթողիկոսին Ամենայն Հայոց ի Ս. Էջմիածին։

Արդեն ի սմին օրինակի Աղուանից, Վրաց և Ասորւոց կաթողիկոսունք ձեռնադրէին ի սրբազան յաջորդէ Լուսաւորչին Հայաստանեայց։

3. Կաթողիկոսունք Սսոյ և Աղթամարայ ըստ բազմամեայն սովորութեան կարող են

---

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1959 թվականի Հ—Թ Ա-ից։

ձեռնադրել եպիսկոպոս, ընդունելով յառաջագոյն զգրաւոր հաւանութիւն Հայրապետին Ամենայն Հայոց»։

Զեռնադրեալ եպիսկոպոսունք ըստ թուոյ թեմից վիճակի իւրեանց միայն պարտի լինիլ, զոր և պարտ է որոշել և սահմանել։

4. Կաթողիկոսունքն Սսոյ և Աղթամարայ պարտին յիշել ի սուրբ պատարագի զանուն Վեհափառ Կաթողիկոսին Ամենայն Հայոց. իսկ եպիսկոպոսունք, վարդապետք և քահանայք Սսոյ և Աղթամարայ պարտին նախ յիշատակել զանուն Վեհափառ Կաթողիկոսին Ամենայն Հայոց և յետոյ զանուն կաթողիկոսի վիճակի։

5. Վեհափառ Կաթողիկոսի Սրբոյ Էջմիածնի միայն է սեպհական ստորագրել Կաթողիկոս Ամենայն Հայոց, իսկ Սսոյ և Աղթամարայ կաթողիկոսաց կոնդակաց վերտառութիւնն լինելոց է Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, Կաթողիկոս Տանն Աղթամարայ, իսկ ստորագրութիւն նոցա Կաթողիկոս Սսոյ, Կաթողիկոս Աղթամարայ։

6. Ի կրօնական դժուարին խնդիրս կաթողիկոսունք Սսոյ և Աղթամարայ պարտին գվերջին որոշումն ընդունիլ յրեղեռաճառական Հայրապետէ անտի Սրբոյ Եկեղեցւոյն Հայաստանեայց»։

Ասի և Աղթամարի համար կազմված այս կանոնադրության առիթով Բաբդեն կաթողիկոսը անում է հետևյալ Ճիշտ խորհրդածությունը.

«Ամենեն հարմար առիթն էր ասիկա ազգային Պատրիարքարանի համար, որ կորովով գործեր, հեցած սահմանադրության, և ցույց տար Թուրքիո հայոց մեջ գոյություն ունեցող Աթոռներուն. թե այլևս կարելի չէր հին մտայնությամբ և կերպերով գործելը։

1866 թվականի հուլիսին Սսի միաբան և Հալեպի առաջնորդ Նիկողայոս եպիսկոպոս, Կիրակոս Աջապահլանի մահից հետո, հափշտակում է Սսի Աթոռը և ագիշերայն, գողունիս, օծվում է նույն Աթոռի Հարություն եպիսկոպոսից, որը հետագայում մահմեդականություն է ընդունում։

1865 թվականին Կիրակոս Բ-ի վախճանումից հետո կիլիկեցիք բաժանվում են երկու կուսակցությանց, որոնցից մեկը, հին սովորությամբ, առանց Կոստանդնուպոլսի Պատրիարքարանի գիտության, օծանդգակում է Նիկողայոս եպիսկոպոսի կաթողիկոսական Աթոռի հափշտակմանը, իսկ մյուս մասը պաշտպանում է Սսի նոր կաթողիկոսի ընտրության հարցը՝ Պատրիարքարանի ազգային իշխանության ներքո, Կիլիկյան թեմի վիճակայինների մասնակցությամբ, օրինականության սահմանի մեջ։

Պատրիարքարանը չի ընդունում Նիկողայոսի կաթողիկոսացումը և Պողոս պատրիարքը 1866 թվականի վերջերին նրան կառավարության միջոցով բերել է տալիս Կոստանդնուպոլիս։ Երկու տարի վերջ Նիկողայոսը վերադառնում է Սիս, ուր հանգիստ չի մնում ու նորից 1871 թվականի օգոստոսին, կառավարական հսկողության տակ, բերվում է Կոստանդնուպոլիս և աքսորվում Արմաշի վանքը, իսկ ազգային իշխանությունը և Պատրիարքարանը ձեռնարկում են Սսի նոր կաթողիկոսի ընտրության՝ «ժողովրդային քվեով»։

Կոստանդնուպոլսի ազգային ընդհանուր ժողովի 1870 թվականի Բ, Գ, Դ, Ե, Զ և Է նիստերում, Կոստանդնուպոլսի պատրիարքի նախագահության տակ, հանգամանորեն քննվում են Ամենայն Հայոց Հայրապետի գերագահության հարցը, Սսի և Աղթամարի կաթողիկոսների ընտրության եղանակն ու իրավասության սահմանները, ինչպես նաև Պատրիարքարանի մասնակցության հարցը Սսի և Աղթամարի կաթողիկոսների ընտրության, ըստ Հայ Եկեղեցու ավանդության։ Այս հարցի առթիվ Ազգային ընդհանուր ժողովին ներկայացվում են չորս առաջարկներ, որոնք հետո վերածվում են մեկ առաջարկի.

«Ս. Էջմիածնի Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի հաջորդն է, և գերագահությունն ու ամբողջ Հայաստանյայց Ս. Եկեղեցվո կառավարության իրավասությունը անորն է, իսկ Աղթամարա և Սսո թեմական կաթողիկոսներն եկեղեցական անիշխանութենեն ծագած են և ապօրինավոր, բայց որովհետև զանազան պատճառաց համար չեն կրնար ջնջվիլ, ուստի որպեսզի Ս. Էջմիածնի Աթոռույն գերագանությունն ու իրավասությունը անարատ պահվի, Ազգային ժողովն, որ թուրքիաբնակ միայն Ս. Էջմիածնի թեմական հայոց ներկայացուցիչն է, պետք չէ անոնց ընտրության մասնակցի, զի այս մասնակցությունը Ս. Էջմիածնեն հրաժարում կնշանակե. այլ պետք է կա՛մ Աղթամարա և Սսո թեմականք զատ-զատ երկերկու ընտրելի պատրաստեն, և անոնց մեջեն մեկ անձ Աղթամարա և մեկ անձ Սսո կաթողիկոս հաստատե Ս. Էջմիածնա հայրապետը, և անոնց առանձնաշնորհության պայմաններ դնե, և կամ պետք է բոլորովին թողուլ, որ թեմականք, ըստ հին սովորության, իրենց ուզած անձն ընտրեն իրենց առաջնորդ կամ կաթողիկոս (Իզմիրլյան 792—793)։

Ազգային ընդհանուր ժողովում Գրիգոր Օտյանը խոսք առնելով, անում է երկրորդ առաջարկը։ Նա իր արտասանած հանրածանոթ ճառում ասում է.

«Ի՞նչ է այս Սսո կաթողիկոսության խնդիրը, ի՞նչ է իր նշանակությունը, տա-

բածումը, հետևանքները։ Զայս իմանալու համար տեսնենք նախ, թե ի՞նչ է էջմիածնա կաթողիկոսությունը։ էջմիածնա կաթողիկոսությունը, ճամայն Ազգին, թե՛ ի Թուրքիա, թե՛ ի Ռուսիա, Պարսկաստան, Հնդկաստան և մինչև ի ծագս աշխարհի, ուր հայ մը կա, բոլոր հայերուն կաթողիկոսն է ու ճոգևոր գլուխը։ Այս է էջմիածնա կաթողիկոսը, և ես ուզողներեն եմ ու ամենքս կուզենք, որ այսպես մնա։ Ո՛չ թե էջմիածնա քաղքին հարյալ եմ. ես կկարծեմ, թե ո՛չ երբեք քաղքի մը պետք է հարի։... Բայց մեծ և ազգային պատճառ մը կա էջմիածնա հարելու համար. էջմիածնա կաթողիկոսը միմիայն հոգևոր գլուխն է, որ Ռուսիո հայերը միացուցած է և կրնա միացնել Թուրքիո հայերուն հետ։ Եթե էջմիածնա կաթողիկոսը մեր ալ կաթողիկոսը լըլլա, Ազգին երկու մեծ հատվածները կբաժնվին իրարմեն։

«Հիմա տեսնենք, թե ի՞նչ է Սսո կաթողիկոսը... Սսո կաթողիկոսը ուրիշ բան չէ, այլ էջմիածնա կաթողիկոսին ճակառակաթոռն է։ Թող ուրանա ո՛վ որ կուզե՝ իր այս ճատկությունը. պատմությունը բարձրաձայն կհռչակե զայն։ Հակառակաթոռ, ուրեմն ապստամբ է... անպատվություն մը Ազգին ու Եկեղեցվուն. ուրեմն պետք է վերցնել զայն։

«Չէ՛, պետք է պահել Սսո Կաթողիկոսությունը, և գիտե՞ք ինչու համար.— էջմիածնա կաթողիկոսության համար։ Եթե Սսո կաթողիկոսությունը վերցնես, մեծ վնաս կհասցնես էջմիածնա կաթողիկոսությանն։

«...Սսո կաթողիկոսը պետք է մնա իրրև կաթողիկոս, այլ որչափ կարելի է պետք է վերնա իրրև հակառակաթոռ։ Ոչ մի՛այն վասն զի գայթակղություն ու անպատվություն մըն է, այլև վասն զի օր մը վտանգավոր կրնա ըլլալ, եթե էջմիածինեն ու նույնիսկ Թուրքիո մեջ Կեդրոնական Վարչությունեն անկախ կերպով կատարվելով իր ընտրությունը, բոլորովին Ազգեն անջատ մարմին մը կազմե։

«...Ահա վտանգը. այս վտանգին առջևն առնելու բնական միջոցն է էջմիածնա կաթողիկոսի վավերացմանը դիմել։ Բայց... Այդ արդյունքը, ինչպես նաև իրրև հակառակաթոռ վերցնելու արդյունքը, երկուքը մեկտեղ ձեռք բերելու միջոցն ըստ իս Քաղաքական ժողովո առաջարկությունն է, մեր կարծիքն է. այն է որ ընդհանուր ժողովն բնտրե կամ մասնակցի Սսո կաթողիկոսին բնտրությանը։ Երբ ընդհանուր ժողովը, որ էջմիածնա թեմն է, իրեն գլուխ ունենալով Ս. պատրիարքը, որ էջմիածնա վեհափայլ կաթողիկոսի փոխանորդն է, կընտրե Սսո կաթողիկոսը, անուղղակի կերպով կմիանա նա ընդհանուր Եկեղեցվուն հետ, և ո՛չ ես կկազմե կամ կրնա կազմել ապագային մեջ անջատ մարմին մը» (Իզմիրլյան 806—821)։

Ազգային ընդհանուր ժողովում Ստեփան Փափազյանը նույն հարցի մասին արտահայտվում է հետևյալ կերպ.

«Հայոց Ազգին և Հայաստանյայց Ս. Եկեղեցվուն ճոգևոր ընդհանուր տեսուչն և Հայրապետը Սուրբ էջմիածնի կաթողիկոսն է, որ պետք է վարե յուր պաշտոնը գործակցությամբ համայն Ազգեն ընտրյալ Ազգային Սյունեհոդոսի մը։ Իսկ Աղթամար և Սիս մասնավոր կաթողիկոսություններ են, որոնց պաշտոնն է միայն եպիսկոպոս ձեռնադրել և Մյուռոն օրհնել, և որք Ազգային Սյունհոդոս չեն կրնար ունենալ, և պետք է որ պահեն իրենց կաթողիկոսական հաջորդությունն, և իրր բարձր աստիճանավորներ պետք է որ Ազգային ժողովո մասնակցությամբն ընտրվին. սակայն որպեսզի ազգային և եկեղեցական միությունեն ու ամբողջությունեն բաժանեալ իրրև զատ գլուխներ զատ մարմին լըլլան, զանոնք թե՛ կրոնապես և թե՛ քաղաքականապես պետք է Կոստանդնուպոլսո պատրիարքին իշխանությանը ենթարկել իրրև պետի Թուրքիո բոլոր հայոց և իրրև փոխանորդի Ս. էջմիածնի Ընդհանրական Կաթողիկոսին, միանգամայն և անոնց Կոստանդնուպոլսո պատրիարքին և Աղթամարա ու Սսո թեմական առաջնորդությանց հետ ունենալիք հարաբերությանց կամ պաշտոնավարության եղանակը պետք է ճշտել և սահմանել։

«...Սսո և Աղթամարա կաթողիկոսաց ընտրությունը իրենց թեմականներուն թողումք և մենք էջմիածնականքս ամենեին չմիջամտենք ըսելը, ազգային միության և ամբողջության կապը խզելու և ցիրուցան ազգը երեք գլուխներով երեք մարմիններու բաժնելու գրության առաջնորդել է։

«...Ուստի հանուն Ազգին միության կխնդրեմ, մեկդի դրեք խտրությունները,... Ճանչելու համար մեկ Ազգ, մեկ եկեղեցի Հայաստանյայց, և մեկ եկեղեցական բարձր վարչություն համօրեն Ազգեն ընտրյալ, ազատ՝ քաղաքական ամեն նկատումներե և ճնշումներե։

«...Մեզի համար Սսո կաթողիկոս վանահայրը պիտի ընտրվի, և պետք է, որ ընտրվի,

3. Սահմանադրական սերունդը 1860-ական թվականներին պայմանական ձևով էր պաշտպանում Ստեփանի բանաձևը՝ Սսի դիրքի մասին, այն է՝ Սիսը հարկավոր է էջմիածինը պահելու համար։ Իսկ այսօր տեսնում ենք ճիշտ հակառակը՝ Աթթիլասը պաշտպանվում է էջմիածինը բանդել փորձելու համար։

ինչպես կընտրվի Երուսաղեմա պատրիարք հայը։ Ահա խնդրուն լուծման բնական միջոցը. ասկե զատ ինչ որ ալ ընենք, եկեղեցվո վնաս է, Ազգին վնաս, Ընդհանրական Կաթողիկոսության վնաս»։

«Կոստանդնուպոլսո պատրիարքը բոլոր Թուրքիո հայոց պետն է, Ս. Էջմիածնի Ընդհանրական Կաթողիկոսին փոխանորդը, կրոնական խնդիրները Թուրքիո հայոց մեջ, իրենց վերջին լուծումը Կոստանդնուպոլսո համագումար ժողովին մեջ կդտնեն, կամ թե որ ասի անձեռնհաս ըլլա, Ս. Էջմիածնի Մայր Աթոռին մեջ։ Կտեսնե՞ք որ Թուրքաստանի մեջ Սսո կաթողիկոս, Աղթամարա կաթողիկոս, ըստ սահմանադրության արգեն վանական կամ անվանական կաթողիկոսի կարգն անցած են, մինչև անգամ կրնամ համարձակապես ըսել, թե եթե Թուրքաստանի մեջ կրոնական ժողով մ՚ըլլա և Սսո ու Աղթամարա կաթողիկոսունք ալ ներկա գտնվին, Կոստանդնուպոլսո պատրիարքը, ի բացակայության Ընդհանրական Կաթողիկոսին իբրև փոխանորդ նորին, նախագահ պիտի բազմի և Սսո ու Աղթամարա կաթողիկոս վանահայրերն ալ անոր երկու կողմը։ Ահա մենք այսչափ կատարեալ կերպով կրմբռնենք եկեղեցվո «Ազգի միությունը» (Իզմիրլյան 823—831)։

1860-ական թվականի մեր սահմանադրական սերնդի կարկառուն դեմքերից մեկի՝ Նահապետ Ռուսինյանի առաջարկությամբ, Ազգային ընդհանուր ժողովը, երկար վիճաբանություններից, մտքերի աշխույժ փոխանակություններից հետո, գլանում է վերջնական, սահմանադրական լուծումը Սսի և Աղթամարի կաթողիկոսների ընտրության եղանակի։

«Հետին վիճաբանությունները մե՛կ բանի մը ծառայեցին, մեկ կետ մը ամրացուցին ավելի ուստիկ և տիեզերական կերպով դորն որ ուրացող չկար. պայծառ տեսնվեցավ, թե Արարատյան Աթոռը Ազգին Հովվապետական Մայր և Գերագույն Աթոռն է, և անկե վեր Աթոռ չկա Հայաստանյայց եկեղեցվո մեջ, և անոր մանկանց համար։

...Ուստի այս կետը իսպառ ի բաց հանելով խնդրին մեջեն, այսինքն Արարատը մեկգի առնելով, կուգամ իսկույն Սսո և Աղթամարա աթոռակալաց պարզապես ընտրությանը»։

«...Ընտրողի մը համար առաջին գիտնալու և որոշելու կետը սա է, թե ինչ է ընտրելին և ինչ պաշտոնի մեջ պիտի գործածվի ընտրությունը. հոս ինձի կըսեն, թե կաթողիկոս է ընտրելիդ և կաթողիկոսություն պիտի ընես։ Բայց ինձ պետք է գիտնալ, թե ի՞նչ է այդ պաշտոնը։ Երբ բառին նայիմ՝ ընդհանուր հայրապետություն կնշանակե. իսկ երբ պաշտոնը զննեմ, մասնավոր հովվապետություն կցուցնե...

Ի՞նչ է հապա կաթողիկոսին բուն պաշտոնը և այն ստորոգելիքը, որք առանձնապես միայն իրեն հատուկ են։ Հոգևորապես նկատելով ըսվեցավ, թե Մեռոն կօրհնե, եպիսկոպոս կձեռնադրե, բայց այդ իշխանությունը միայն իրենը չէ, քանի մը եպիսկոպոս միաբանյալ ամեն ո՛ւր որ և ո՛րքան որ ուզեն կօրհնեն ու կձեռնադրեն, ո՞վ պիտի արգիլե երբ եկեղեցին կներե...

«Մեզի պետք եղածը կաթողիկոսության պաշտոնին այն մասն է, զոր սոսկ աշխարհական չըսելու համար՝ խառն պիտի ըսեմ, կամ լավ ևս Ազգային մասը, այն գերագույն իշխանությունը, որով կնախագահե հայ ժողովուրդին հովվական կառավարությանը վրա, այսինքն առաջնորդությանց վրա։ Զի ի՞նչ է կաթողիկոսը այսու նկատմամբ՝ եթե ոչ առաջնորդաց առաջինը, եպիսկոպոսաց Եպիսկոպոսապետը, հովվապետաց Մայրագույնը, եկեղեցական վարչության Գլուխ և հետևաբար ընդհանուր ազգին հոգևորական Գերագույն Պետը...

Ուստի կհետևցնեմ, թե՛ ըստ Սուրբ Գրոց, թե՛ ըստ իրավաբանական և թե՛ ըստ տրամաբանական ամենայն օրինաց, Արարատյան Աթոռոս Գահակալը Ամենայն Հայոց ճշմարիտ և աստվածընտիր Կաթողիկոսն է. որովհետև ամենայն հայոց բազմության ձայնովն է ընտրյալ և յուր այս գերագույն իշխանությունը ժողովուրդեն հանձնված է իրեն. ահա այս իշխանությունն է իր առանձին ստորագելիքը և իր հատուկ պաշտոնը...

Արդ, հիմա լավ գիտեմ, թե ինչ է կաթողիկոսությունը, անոր առանձին ստորոգելիքը, և անոր հատուկ պաշտոնը, նաև լավ ևս գիտեմ, թե իմ ընտրելիս՝ թեպետ կաթողիկոս անունը կկրե, բայց իսկական կաթողիկոս չէ՝ բառին ամենայն ուժովը, այլ մասնավոր հովվապետ մը. զավառական առաջնորդ մը, կամ ավելի ճիշտ՝ նահանգի մը պատրիարք, Երուսաղեմա պատրիարքին նման. զի ան ալ ասոր պես ցկյանս զահակալելու համար պիտի ընտրվի»։

«Կրսեմ ուրեմն... ես սա կպնդեմ և խնդիրն ալ սա է. «ընտրության իրավունքը տեղացվոցն է, վավերացման իրավունքը կեդրոնին է» (Իզմիրլյան 835—842)։

Խրիմյան պատրիարքի նախագահությամբ, Ազգային ընդհանուր ժողովը, թվեից բացարձակ մեծամասնությամբ, ընդունում է Ռուսինյանի առաջարկությունը։ Այս առիթով Իզմիրլյան Սրբազան խորհրդածում է.

«Ազգային ժողովս սույն այս որոշման անվրեպ հետևությունն է. թե Հայաստան-

յայր Առաքելական Ս. Եկեղեցվո կառավարության միակ գերագույն Գլուխ և ամենայն Հայոց Հայրապետն և Ծայրագույն Պատրիարք Կաթողիկոսը Ս. Էջմիածնի Մայր Աթոռոյ Գահակալն է: Իսկ Աղթամարի և Սսի վանահայր վիճակավորները միայն եպիսկոպոս ձեռնադրելու և Մյուռոն օրհնելու լոկ հոգևոր առավելությամբ Աղթամարա և Սսի վանուց վանահայր առաջնորդներն կամ վիճակավորներն են՝ ընդ իրավասությամբ Կոստանդնուպոլսո պատրիարք և Հայրապետական փոխանորդ արքիարք և Հայրապետական փոխանորդ արքիարք և Հայրապետական փոխանորդ արք

ժան դրավ, որ «ամենեն առաջ նորընտիր կաթողիկոսը խոստմնագրով մը ընդունի Ազգային ընդհանուր ժողովի ընելիք կարգադրությանը, Կիլիկիո Աթոռին և Ազգային Պատրիարքարանի հարաբերությանց մասին, որպեսզի ճշտվի Կիլիկիո Աթոռին և Կոստանդնուպոլսի Ազգային Պատրիարքարանի հետ հարաբերության կերպը, ուրիշ խոսքով, Ազգային Պատրիարքարանի և Սայր Աթոռի գերիշխանությունը Կիլիկիո Աթոռի վրա» (ԲԱԿ Պատմ. 715—716)։

Ազգային Կենտրոնական Վարչությունը իր 1872 թվի մարտ 10 թվակիր պաշտոնական նամակով Երիմյան պատրիարքի և Քաղաքական ժողովի ատենապետ Ս. Ապրոյի և ատենադպիր Տ. Ռ. Ցուսուֆյանի ստորագրությամբ, Սսի կաթողիկոսական ընտրության մասին տեղեկագրում է Ամենայն Հայոց Հայրապետին, որ Ազգային վարչությունը և Կոստանդնուպոլսի Ազգային Բրեսփոխանական ժողովը Էջմիածնի Մայր Աթոռի գերագահությունը պահպանելով, «Հայաստանյայց Ս. Եկեղեցվո միության և միասնության սպառնացող վտանգին առջև առած, Սսո անկախություն սպառնացող դիրքը օրինավոր սահմաններու տակ մտցնելով, ապագայն իսկ ապահովելու հաշոդած է», որովհետև, ավելացնում է Գևորգ Դ-ին ուղղված պաշտոնագիրը, «երբ Կիլիկիո Կաթողիկոսն յուր խոստմնագիրը դրժե և սահմանելի ճարաբերությունքը չընդունի և կամ նոցա դեմ վարվի, անտարակույս, ամբաստանության տակ կիյնա և ի պահանջել ճարկին՝ միեշև անգամ կդադրի յուր պաշտոնենե» (Իզմիրլյան. 941, 937)։

Սսի նորընտիր կաթողիկոսը «պարտավոր էր լրջամիտ խոհականությամբ և իմաստուն հեռատեսությամբ վարել սկսիլ յուր պաշտոնն», (Իզմիրլյան 1070), այնինչ որպես հախուռն մարդ, «ի դերև հանեց համաձայնության ամեն փորձ» (ԲԱԿ Պատմ. 1219)։

1871 թվի նոյեմբերին Երիմյան պատրիարքի հանձնարարությամբ կատարվում է Քեֆսիզյանի օծումը Սսում։

«Քեֆսիզյան կաթողիկոսանալեն հետո դուրս տվավ իր գույնը, և իր կաթողիկոսության 23 տարիները նշանավոր դրավ կրելով արծաթասիրության հետ, իր ժողովուրդին հետ, Ազգային Պատրիարքարանի և հետևաբար Մայր Աթոռո դեմ։

Եվ այս անիմաստ կռիվներու երեսեն չկրցավ կապվիլ Սսո Աթոռին, և այս պատճառով չկրցավ կազմակերպել միաբանություն, կաթողիկոսական դիվան, դպրոց, և ընդհանրապես, աստանդական կյանք մը վարեց, առանց զգալու պատասխանատվության դույզն ծանրություն իր խղճին և գիտակցության մեջ» (ԲԱԿ Պատմ. 719)։

Քեֆսիզյանն իր գործերով և անվարչագիտությամբ ժամանակի մեծանուն հոգևորականների հակառակությունը շահեց, վտանգեց Կիլիկյան Աթոռի կաթողիկոսական իրավասությունը և ատելի դարձրեց իր անձը։ Հատկապես բուռն էր Գևորգ Դ-ի հակառակությունը Քեֆսիզյանի դեմ, այն աստիճան, որ նա Կիլիկյան Աթոռը «հակաթոռ և հերձվածող» հռչակեց։

1872 թվականի հունվարի 23 թվակիր մի գրությամբ («Կիլիկյանցն էսբարը վե սեֆյեթիթ» անուն հայատառ և տաճկաբարբառ տետրակը), Քեֆսիզյանը դուրս եկավ Էջմիածնի դեմ և անվանարկեց Գևորգ Դ-ին, «ինքզինքը Ս. Թադեոս և Բարթուղիմեոս առաքելոց և Ս. Գրիգոր Լուսավորչի հայրդ կհայտարարե» (Իզմիրլյան 1074)։

Իզմիրլյան սրբազան շատ ճիշտ կերպով բնութագրել է Քեֆսիզյանի կենտրոնախույս ձգտումներն ու գործունեությունը.

«Տ. Մկրտիչ սրբազան սույն այս հայտարարությամբ ինքզինք յուրովի Ս. Գրիգոր Լուսավորչի ճաշուդեն ճչակելը թեև կեղծ ստորագրության ներքև ըլլալով ըստ ինքյան կարևորություն չունի, այլ սակայն սա անտարակուսելի ճշմարտություն մ՚է, թե Սսո վանահայր վիճակավորության թեմական մասնավոր պաշտոնեն Հայաստանյայց Ս. Եկեղեցվո առաքելահաշորդ հայրապետական իշխանության բարձրանալու կամ Ամենայն Հայոց Հայրապետության հոգևոր իրավասութենեն և ընդհանրական տեսչութենեն ազատ և անկախ ըլլալու ձգտումն յուր պաշտոնավարության առաջին օրերեն ունենալ հավակնած է, զոր արդ հայտնապես իրականացնել կճգնի առ ոտն կոխելով եկեղեցական պատմությունն ու կանոնները և Ազգային ժողովո որոշմունքը, որք բացարձակապես հակառակ են յուր ազգավնաս խորհրդոց ու ձգտմանց» (Իզմիրլյան 1076—1077)։

Քեֆսիզյան շուտով ընդհարվում է նաև Կոստանդնուպոլսի Ազգային կենտրոնական վարչության հետ, որն աշխատում էր կարգ ու կանոն մտցնել Սսի կաթողիկոսական Աթոռից ներս, հրատարակել հատուկ հրահանգ Կիլիկյան Աթոռի դիրքը և հարաբերությունները ճշտելով Ազգային կենտրոնական վարչության և Մայր Աթոռի հետ։

1873 թվականի հունիսի 11-ին Պատրիարքարանի կողմից պատրաստվում է ամանավոր հրահանգ Կիլիկիո վիճակաց համար», ինչպես պատրաստվել էր նմանօրինակ մի սահմանադրական հրահանգ գավառների համար։ 1874 թվականի հուլիսի 24-ին, Վարժապետյանի օրով, խառն ժողովից վավերացվում է այդ հրահանգը։

Ազգային վարչությունը մերժում է Քեֆսիզյանի հետևյալ չորս առաջարկները.

1. Կաթողիկոսարանի Սսից տեղափոխությունը Կիլիկյան մի այլ քաղաք։

2. Օսմանյան պետության կողմից որոշ մի ոճիկի սահմանում կաթողիկոսին։

3. Կիլիկյան թեմերի ընդարձակում։

4. Կիլիկիո Կաթողիկոսության թեմական առաջնորդությունից ավելի արտոնություններ տրվելը կառավարության կողմից։

1880 թվականի հոկտեմբերին Քեֆսիզյան Սսում հրավիրում է Կիլիկյան թեմերի թեմական խորհուրդ՝ քննելու Ներսես պատրիարք Վարժապետյանի այս մասին գրած պաշտոնագիրը։ Նոյեմբերին նա հասնում է Կոստանդնուպոլիս և պատրիարքին է ներկայացնում Սսի թեմական ժողովի պաշտոնագիրը, ուր թեմական ընդհանուր ժողովը իր խորհուրդները և ցավերը հանուր Ազգին ներկայացնելով, նրա ներկայացուցիչ պատկառելի հայոց խնամակալ և պաշտպան Վարչությունից խնդրում էր «փրկել զմեզ ի ցաւոց մերոց»։

Պաշտոնագրում խոսվում էր Սսի Աթոռի «արդի ավերյալ վիճակ»-ի մասին և մի շարք առաջարկներ էին արվում «ազգասիրական ոգվով արյուն ի սիրտ և արտասվալից աչոք» Սսի Աթոռը վերականգնելու համար։ Վարժապետյան պատրիարքի հանձնարարությամբ այդ պաշտոնագիրը քննվում է Կրոնական ատյանի կողմից։ Կրոնական ատյանը Սսի թեմական ժողովի պաշտոնագիրը քննելուց հետո պատրաստում է մի տեղեկագիր, ինչպես նաև պայմանագիր և ներկայացնում է պատրիարքին վավերացման։

Ներսես պատրիարքը այս պայմանագիրը ներկայացնում է Քեֆսիզյանին, Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանի և Կարապետ եպիսկոպոս Սերովբյանի միջոցով, խնդրելով, որ «քաղցրությամբ լսե զանոնք»։

Ահա այդ պայմանագիրը.

«Ա. Հոգևոր հնազանդություն առ Հայրապետն Ամենայն Հայոց՝ Գահակալ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, որ է օրհնաւոր յաջորդ Սրբոց Առաքելոց Թադէի և Բարթուղիմեայ, և Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, և Վեհափառ Կաթողիկոս Ամենայն Հայոց ընդ աշխարհ համօրէն։

Բ. Ի ժամ սրբոյ պատարագի և յաղօթս ժամերգութեան յիշատակել նախ զանուն Վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց, ապա զանուն Ամենապատիւ Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ։ Այս յիշատակութիւն պարտի լինել յԱմենապատիւ Կաթողիկոսէն Կիլիկիոյ և ի թեմականաց նորա։

Գ. Զեռնադրել եպիսկոպոս միայն զառաջնորդս թեմական վիճակացն Տանն Կիլիկիոյ, առնելով կանխաւ զգրաւոր հաճութիւն ամենապատիւ Ս. պատրիարքին Կոստանդնուպոլսոյ և Ազգային կեդրոնական վարչութեան։

Դ. Չհանել զեկեղեցականս վիճակացն Կիլիկիոյ անդր քան զսահմանս Կիլիկիոյ ի պաշտպանութիւն, առանց կանխաւ առնելոյ զհաճութիւն ամենապատիւ Ս. պատրիարքին Կոստանդնուպոլսոյ և Ազգային կեդրոնական վարչութեան։

Ե. Զսուրբ Միւռոնն օրհնել միայն վասն Տանն Կիլիկիոյ և վիճակացն նորին, և չառաքել նուիրակս ի բաշխումն Ս. Միւռոնի ի վիճակս որ են արտաքոյ սահմանացն Կաթողիկոսութեանն Տանն Կիլիկիոյ, առանց գրաւոր հաճութեան ամենապատիւ Մ. պատրիարքին Կոստանդնուպոլսոյ յանուն Վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց։

Զ. Ամենապատիւ կաթողիկոսն Տանն Կիլիկիոյ պարտի գրել յամենայն վերնագիրս կոնդակացն, և ստորագրել յամենայն գրութիւնս, (այս անուն) Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ։

Ի Կոստանդնուպոլիս, յԱզգային Պատրիարքարանի հայոց, յամի Տեառն 1880, ի 10 դեկտեմբերի ամսոյ և յԱզգային բուսկենիս Ռ8Լ։

Զվերոգրեալ վեցեսին հոդվածս պայմանագրոյս յանուն Կաթողիկոսութեանն Տանն Կիլիկիոյ ընդունեմ սրտի մտօք և խոստանամ գործադրել ընդ բովանդակ կեանս իմ» (Իզմիրլյան 1177—1180)։

Վարժապետյանն այս պայմանագրին կից իր դեկտեմբեր 11 թվակիր նամակում գրում էր Քեֆսիզյանին։

«Առ Ամենապատիւ Տէր Մկրտիչ Սրբազան Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, սիրելի եղբայր իմ ի Տէր.

Ցայտնելով աստանոր զի համաձայն եմ բոլորովիմբ վճռոյ Կրօնական ատենին վասն միութեան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ, և խնդրեմ ի նորին Սրբազնութենէ, բարեհաճիլ ստորագրել զվեցեսին պայմանս ծարաեալս ընդ սմին և ի բաց թողուլ զգործածութիւն մանուշակագոյն վեղարի, և տարականոն ստորագրութեան» (Իզմիրլյան 1882)։

Քեֆսիզյանը մերժում է և՛ պայմանագիրը և՛ նամակը և սկսում գործել ինքնագլուխ, մինչ «իրեն կմնար գործակցիլ Ազգային Պատրիարքարանի..., օգտվիլ անոր նյութական և բարոյական օժանդակութենեն ի նպաստ իր Աթոռին շինության և բարեկարգության...։ Այս է պատճառը, որ Քեֆսիզյանի 23-ամյա կաթողիկոսութենեն ոչ մեկ հիշատակ՝ Աթոռի շինության և բարեկարգության վերաբերյալ գործերու մեջ, խոսքի մարդ, ցույցի մարդ։

Կազմակերպելու կարողություն չուներ և կհավակներ Կիլիկիո Աթոռին կապերը խզել

Մայր Աթոռի և Ազգային Պատրիարքարանի հետ» (ԹԱԿ Պատմ. 728—729)։

Քեֆսիզյանը փորձել է հափշտակել Մայր Աթոռի թեմերը։ Այդ մասին է վկայում Մակար կաթողիկոսի կոնդակը ժամանակի Կոստանդնուպոլսի պատրիարք Հարութիւն Վեհապետյանին ուղղյալ։

«Վեհաշնորհ պատրիարքին հայոց Կոստանդնուպոլսոյ Թարգրապատիւ Սրբազան Յարութիւն Արքեպիսկոպոսի եղբոր մերում սիրեցելւոյ ի Տէր ծանուցանեմք։

Յօրէ ամբառնալոյ մեր ի Գահ Հայրապետութեան Ամենայն Հայոց ջան և հոգ մեր եղեալ է յամենայն դէպս ի բաց բառնալ ի միջոյ զվնասարեր զայն խորութիւն, որ յոչ բաղում ժամանակաց հետէ յերեսաց անյաջող հանդամանաց ժամանակիս յառաջացեալ է ի մէջ կաթողիկոսացն Մեծի Առաքելական Աթոռոյս և Տանն Կիլիկիոյ և Աղթամարայ և ընդ այնր ջանացեալ եմք ըստ Յիսուսեանդ օրինաց քրիստոսական եկեղեցւոյ հաստատել ի նոսա զսիրալիր յարաբերութիւնս առ միմեանս ի շինութիւն Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ և Ազգի, և այսու իսկ բարեմիտ դիտաւորութեամբ յերդմնագրի անդ Նորապսակ եպիսկոպոսացն վանիցն Սուրբ Յակովբայ, որ յԵրուսաղէմ Մամբրէի և Սահակայ ի բաց հանայ զհաստատածն, որ պարտաւորէր զնոսա համարիլ հակաթոռս Հայրապետութեան մեծի Աթոռոյս զսրբազան կաթողիկոսումս Կիլիկիոյ և Աղթամարայ։ Այլ արդ ցաւօք սրտի լսեմք, թէ յաւուրս յայսոսիկ սրբազան կաթուղիկոսն Տանն Կիլիկիոյ ի վեր քան զիրաւունս սահմանափակ իշխանութեան իւրոյ զմի ոմն յեպիսկոպոսաց իւրոյ Մկրտիչ անուն առաքել է ի Կալկաթա յանուն նուիրակութեան, այլ ներքին դիտաւորութիւն առաքողին և առաքելոյն այդորիկ է իբր մնալ անդանոր և ջանահնար լինել գործակցութեամբ ոմանց դարձուցանել և յանգուցանել զսիրտս պարզամիտ ժողովրդեան ի հպատակութիւն Տանն Կիլիկիոյ։ Արդ այսոքիկ բանք թէպէտ իբրև ի լրոյ առ մեզ հասեալ՝ ոչ այնքան հաւատալի թուին մեզ, այլ որովհետև յայսպիսում անբարի ժամանակի մարթ է և այսպիսեաց զեղծմանց ակնկալել, վասն որոյ Ձեզ, որ նախանձախնդիրդ էք իրաւանց և փառաց Ընդհանրական Աթոռոյս և աթոռակալաց նորին, ոչ աւելորդ համարիմ կանխաւ յիշեցուցանել ի զգուշութիւն, թէ վիճակ Կալկաթայի ի դարաւոր ժամանակաց հետէ նուիրագործեալ իրաւամբ համարեալ է ցայսօր և համարի մին ի սեպհական վիճակացն Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի ընդ առաջնորդական իրաւասութեամբ առաջնորդացն Իսպահանու և Հնդկաստանի, որք միշտ նշանակեալք են ի կաթուղիկոսացն նախամեծար Արարատեան Մայր Աթոռոյս և բնակութիւն կալեալ ի սուրբ վանս Ջուղայու և նուիրակք սորին մինչև ցվերջին ժամանակս այսոսիկ անպակաս եղեալ են ի հնդկահայս, մինչդեռ համարձակ մուտ գործել ի նոսա շհամարիւր իրաւունս ոչ միայն նուիրակացն Կիլիկիոյ և Աղթամարայ, այլ նոցին իսկ կաթուղիկոսացն Աթոռացս այնոցիկ։ Իսկ թէ այժմ սրբազան կաթողիկոսն Կիլիկիոյ յորպէսի պատճառանաց շարժեալ՝ զտարօրինակս դայս յղացեալ է զխորհուրդ՝ զարմանամ յոյժ։ Զարմանամ նոյնպէս և ընդ այն, թէ այսօրինակ տարականոն խորհուրդ և ձեռնարկութիւն սրբազան կաթողիկոսին Կիլիկիոյ զիարդ կարացեալ են խուսափիլ յաչալուրջ շրջահայեցողութենէ Ձեր Սրբազնութեանդ և աղդախնամ ժողովականաց ատենից վարչութեան հայոց մայրաքաղաքիդ և եթէ իրազեկ լեալ է Ձեր յարդոյ ժողովականացդ զայսմ դիտաւորութենէ և ձեռնարկութենէ կաթողիկոսին Կիլիկիոյ, զիարդ չէք փութացեալ զառաջս առնուլ ապօրէն արարմանցն այնոցիկ կամ ծանուցեալ մեզ ի տեղեկութիւն և ի տնօրինութիւն։

Արդ այսու յանձն առնեմք բարձր Սրբազնութեանդ Ձերովդ բնաձին աչալուրջ հսկողութեամբ ի վերայ հասանիլ ճշմարտութեան բանիցս առ մեզ հասելոց, և եթէ ստոյգ իցեն այնոքիկ, զկախեալ զՁէնչ զամենայն զհնարս ամենայն խոհականութեամբ ի գործ դնել, զառաջս առնուլ վնասակար դիտաւորութեանն այնորիկ, հրաւիրելով առ այդ և զողջամիտ ուշադրութիւն վարչական մարմնոց մայրաքաղաքիդ և զհետեւանացն փութալ ծանուցանել մեզ ի տնօրինութիւն։

Ողջ լերուք ի Տէր մերում։

(Հայկական ՍՍՌ Պետ. մատենադարան. Կաթողիկոսական դիվան, բոցապանակ 246, վավերագիր 542)։

Քեֆսիզյանը աստանդական վիճակում վախճանվում է Հալեպում 1894 թվականի նոյեմբերի 8-ին, Ամենայն Հայոց Հայրապետի և հայ ժողովրդի նզովքի տակ։

Քեֆսիզյանի մահից հետո Կաթողիկոսական Աթոռը ութը տարի՝ 1894—1902 թվականներին թափուր է մնում։ Այդ տարիների ընթացքում Ազգային վարչության որոշմամբ երկու անգամ կաթողիկոսական ընտրություն է տեղի ունենում։ 1895 թվականի հունիսի 7-ին առաջինը ընտրվում է Գրիգորիս եպիսկոպոս Ալեքսիձյանը, որի ընտրությունը սակայն հանդիպում է թուրք կառավարության ընդդիմությանը։ Ալեքսիձյանի ընտրության դեմ բողոքում են նաև Սսի Նիկողայոս Դավթյան և Հովհաննես Գազանճյան ու Աբրահամ Մամիկոնյան եպիսկոպոսները, առարկելով, թե «եղած ընտրությունը ընկալյալ կանոնաց և տիրող սովորությանց հակառակ է, իբր թե ընտրության մեջ մասնակցություն ունե-

ցած չէ Կիլիկիո Աթոռի եպիսկոպոսական ժողովը, Աթոռի եպիսկոպոսներեն չէ ընտրյալը, ինչպես որ սկիզբեն ի վեր Աթոռին կանոնն եղած է» (ԲԱԿ Պատմ. 775)։

Միաբանությունը բաժանվում է երկուսի. Մի մասանք պաշտպանում են ընտրության օրինավորությունը և սահմանադրականությունը։

Թուրք կառավարությունը, այդ բողոքագրի հիման վրա, բացատրություն է պահանջում Կոստանդնուպոլսի Պատրիարքարանից։ Պատրիարքարանը և խառն ժողովը սահմանադրապես օրինական են համարում ընտրությունը։

Բողոքող եպիսկոպոսները, սակայն, ոտնահարելով օրենքը, 1895 թվականի հուլիսի 18-ին, իրենց միջից Հովհաննես Գազանճյան եպիսկոպոսին ընտրում են կաթողիկոս և օծումը կատարում գաղտագողի կերպով։ Այդ ապօրինի ընտրության դեմ բողոքում են մյուս միաբանները՝ Կիրակոս Բեքմեզճյան, Կարապետ Քեչեճյան և Միքայել Վեհապետյան եպիսկոպոսները։

Կոստանդնուպոլսի Ազգային կենտրոնական վարչությունը նույն թվականի հուլիսի 19-ին ժողովական որոշմամբ մերժում է Գազանճյանի կաթողիկոսությունը և ըստ այնմ էլ կառավարության հաղորդում։ Կառավարությունն էլ պարտավորված՝ չի ճանաչում Գազանճյանի կաթողիկոսությունը և Պատրիարքարանի ազդու միջնորդությամբ նրան արտաքսում Բեյրութ, 1897 թվականի մարտին։ Բայց կառավարությունը չի վավերացնում նաև Ալեքսճյանի ընտրությունը, որով Պատրիարքարանն ու Կենտրոնական վարչությունը «դժվարին կացության մը առջև գտավ ինքզինքը»։

1899 թվականի օգոստոսի 15-ին Ալեքսճյանը վախճանվում է և հարցը ըստ ինքյան փակվում։ Վարչությունը որոշում է ձեռնարկել նոր ընտրության և որպես պատվիրակ Պատրիարքարանի և կենտրոնի Սիս ուղարկել Երուսաղեմի վանքի լուսարարապետ Խապայան արքեպիսկոպոսին՝ նոր ընտրության նախագահելու։ 1900 թվականի փետրվարին Սահակ արքեպիսկոպոս Խապայանը Ադանա է ժամանում, մինչ փետրվարի 14-ին Ադանայի կուսակալը, կենտրոնից ստացած գաղտնի հրահանգի համեմատ և Պատրիարքարանի պատվիրակի ներկայությունը անտեսելով, Սսի Աթոռի տեղապահ Բեքմեզճյանին հրամայում է ընտրական ժողով գումարել և անմիջապես ընտրությունը կատարել։ Տեղապահը չի կարողանում ընդդիմանալ և շրջաբերական հրավիրագրեր է ուղարկում, մարտի 10-ին Ադանայում ընտրություն կատարելու համար։ Թուրք կառավարության գլխավոր նպատակն էր Կիլիկիո Աթոռը հակադրել Կոստանդնուպոլսի Պատրիարքությանը։ Մյուս Կողմից Օրմանյան պատրիարքը և Վարչությունը հրամայում են Խապայանին՝ ընտրությունը կատարել օրենքի սահմանի մեջ և Պատրիարքարանի հրամանի համեմատ միայն գործել, առանց Պատրիարքարանի պատվիրակի՝ նախագահության ընտրություն չկատարել։ Վարչությունը միաժամանակ բողոք է ներկայացնում կառավարության, «զի կենսական խնդիր էր Պատրիարքության ազգապետական դրությունը խախտել, հայ ազգությունը երկուքի բաժնել և Կիլիկիո համար նոր հայ ուղղություն մը կազմել, ինչ որ Քեֆսիզյանի երազանքներեն մին եղած էր, բայց չէր հաջողած» (Օրմանյան)։ Այս ձևով հայ ազգությունը երկուքի կբաժնվեր և Կիլիկիո համար նոր հայ ազգություն մը կկազմվեր» (ԲԱԿ Պատմ. 777)։

Վարչության պատվիրակ Խապայան սրբազանը, Ֆամիս Կիլիկիա մնալուց հետո, 1900 թվականի նոյեմբերին Երուսաղեմ էր վերադառնում, կաթողիկոսական ընտրություն չկատարած։ Ի վերջո, երկար բանակցություններից հետո, Պատրիարքարանը նորից զբաղվում է Սսի կաթողիկոսի ընտրության հարցով, Խապայան սրբազանին հրահանգում է գնալ Ադանա և 1901 թվականի նոյեմբերի 20-ին զբաղվել կաթողիկոսական ընտրությամբ։ Նոյեմբերի 29-ին գումարվում է ընտրական ժողով, ուր ընտրվում է Գևորգ Երեցյանը։ Սակայն Երեցյանը դեկտեմբերի 13-ին հրաժարվում է և Պատրիարքարանը 1902 թվականի հոկտեմբերին ձեռնարկում է նոր ընտրության։ Պատրիարքարանը ստիպված «ընտրության ապարդյուն ելքը» հաղորդում է կառավարության և «նոր ընտրության համար թույլտվություն խնդրում»։

1902 թվականի հոկտեմբերի 12-ին Ադանայի Ս. Աստվածածին եկեղեցում գումարվում է ընտրական ժողով՝ Վարչության և Պատրիարքարանի պատվիրակ Քյոմյուրճյան եպիսկոպոսի նախագահությամբ և Կիլիկիո կաթողիկոս է ընտրվում Սահակ արքեպիսկոպոս Խապայանը. այսպիսով վերջ է տրվում Կիլիկիո Աթոռի տագնապին, «ի մեծ խնդություն և մխիթարություն բոլոր կիլիկեցիներու, ըսենք նաև բոլոր հայերու, զի բովանդակ հայության սեռեալ մտահոգությունը գամված էր Կիլիկիո Աթոռի խնդրին և Կիլիկիո ժողովուրդի կացությանը» (Օրմ. Ազգ. Գ 5139)։

«Վարչությունը, ընտրական գործողությունները կանոնավոր գտնելով», հաստատում է Խապայանի ընտրությունը։ «Իսկ հրավարտակը Պատրիարքարան կհանձնվեր 16-ին, որուն մեջ հայտնի կերպով շեշտված էր հնավանդ ձևը Կիլիկիո Կաթողիկոսության Կոստանդնուպոլսի Պատրիարքության մեջ

պարունակված ըլլալը, և միանգամ ընդմիշտ հերքված կըլլար Կիլիկիո համար անչատ և աղատ Պատրիարքարան մը ստեղծելու Քեֆ-սիզյանի հղացած տարագեպ նպատակը և հեռացած կըլլար տաճկահայ ազգությունը պառակտելու վտանգը» (Օրմ. Ազգ. Գ 5141—5143)։

«Քեֆսիզյանն նոքը տառապած ժողովուրդը նոր զարթնում է նորոգություն կգտար ազգովին ընտրված, կեդրոնն համակրված, կառավարութենեն փառավորված և հասարակութենեն փայփայված կաթողիկոսի ներկայության»,— գրում է Օրմանյանը։

Նորընտիր կաթողիկոսի օծումը կատարվում է 1903 թվականի ապրիլի 20-ին, Կանայ կիրակի։

«Թե՛ օծման և թե՛ մյուռոնօրհնեի սուրբ պատարագներուն, զորս մատույց նորընտիր Սահակ կաթողիկոս, իր նախորդները հիշելե վերջ, հիշեց նաև Ընդհանրական Հայրապետը, զՏեր Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսն. թվին 1441-ն ի վեր առաջին անգամն էր, որ Կիլիկիո Մայր Աթոռին մեջ կհիշվեր Ազգիս Ընդհանրական Հայրապետը։ Պետք էինք հիշել այս դեպքը, ցույց տալու համար, թե նորընտիր Սահակ կաթողիկոսը որքան փափագող էր սիրո և համերաշխության երկու Աթոռներու։ Այս առթիվ հարկ է հիշել նաև, որ Ընդհանրական Հայրապետն Խրիմյան Հայրիկ ապրիլ 10-են առաջ հեռագրով շնորհավորած էր զնորընտիր կաթողիկոսն։ Միևնույն ժամանակ Տրդատ Պալյան և Հմայակ Դիմաքսյան եպիսկոպոսներուն հեռագրած էր, որ հանուն Մայր Աթոռո օծման ներկա գտնվին, թեպետ առաջինը հիվանդության և երկրորդը ժամանակի սղության պատճառով չէին կրցած ներկա ըլլալ» (ԲԱԿ Պատմ. 615)։

Սահակ կաթողիկոս Խապայան իր անդրանիկ կոնդակի մեջ հիշում է Ամենայն Հայոց Հայրապետին և հորդորում է աղոթել՝ Նորին Ս. Օծության երկարակեցության համար և հույս է հայտնում, որ երկու Աթոռների միջև մի շարք խնդիրների պատճառով առաջ եկած խրամը պիտի լեցվի սիրով և միաբանությամբ.

«Նույն առաքելոյն խօսքերը կրկնելով, եթէ «Ցիշեցէք զառաջնորդս Ձեր», կը հրաւիրեմ «համայն հոգեւոր որդիս Թադէի և Բարթողիմէոսի սրբազան առաքելոց և Սրբոյն Դրիգոր Պարթևի՝ լուսաւորչաց հոգւոց մեռոց, որոց աւետարանութեամբ ծնեալ և սնեալ եմք ի ծոց Քրիստոսի նկեղեցւոյն, պտղատաս մատուցանել առ Աստուած վասն կենաց Եպիսկոպոսապետին Հայկազանց՝ Հայրապետին Ամենայն Հայոց և նախամեծար Աթոռոյ Սրբոյ էջմիածնի։ Աստուած և Տէր կենացդ ամենեցուն՝ պարգևեսցէ Նորին Ս. Օծութեան կեանս երկարս, և պայծառութիւն՝ նորա Գահուն», որոյ անունը սիրելի և նուիրական է ամէն հայ հաւատացեալց և Կիլիկիոյ Աթոռոյս վիճակաւորաց հավասարապէս։ Նորին Ս. Օծութիւնը և ես երկոքեանս ալ ի Սիոն բնակակից էաք երբեմն, և խաղաղութեան հաղարիւ մէջ Քրիստոսի թողած խաղաղութիւնամբ աղցված՝ շնորհ ճետամուտ փառաց և պատուոյ, և ի հաւատս՝ ստացանք նորա շնորհաւորական մաղթանքները՝ յայտարար միութեան և նշանակ հաղորդութեան» (ԲԱԿ. Պատմ. 846)։

Խրիմյանի և Խապայանի կաթողիկոսության ամբողջ տեղության երկու Աթոռների միջև հաստատվում է եղբայրական համագործակցություն։

Ազգը և կենտրոնական վարչությունը «Խապայանի Կիլիկիո կաթողիկոսական ընտրությունը քաջալերած առենին, այն համոզումը ունեին, որ պիտի վերջ դանեին Քեֆսիզյանի հարուցած անտեղի խնդիրները, ինչպես ինքն Խապայանն ալ կգրեր, թե «պիտի աշխատի կրկին Աթոռոց հարաբերությունները քաղցրացնել և սուրբ միությունը պահպանել, և Ազգի կրկին հատվածոց, էջմիածնականաց և Կիլիկեցվոց մեջ եղբայրական սեր հաստատելու։ Իրոք ալ մինչև Խապայանի Կոստանդնուպոլիս այցելելը երբեք անոր կողմեն խնդիր չհուղվեցավ, և այնպես ըմբռնվեցավ, թե վարչական որոշմամբ ժամանակին Քեֆսիզյանի հաղորդած պայմանագիրը լքվունելի և գործադրելի նկատված է Խապայանի կողմեն (Օրմ. Ազգ. Գ 2858)։

Այնուամենայնիվ Պատրիարքարանի և նորընտիր կաթողիկոսի միջև ծագում է «Աթոռի խնդիր մը, և անոր հաջորդ իրավության խնդիր մը, որուն ի պատասխան Քեֆսիզյան կաթողիկոսի կողմե առաջարկված և տրված և իբր թե անկե ընդունված և ստորագրված «Ծրագիր Կիլիկիո կաթողիկոսական հանձնախմբի» վերնագրով 18 հոդվածներե բաղկացյալ գիր մը հանձնվեցավ Սահակ կաթողիկոսին» (ԲԱԿ Պատմ. 885)։

Այդ ծրագրի 1-ին և 2-րդ հոդվածները վերաբերում են Ս. Էջմիածնի Հայրապետության՝ «ճարաբերութիւնք Աթոռոյն Կիլիկիո ընդ Մայր Աթոռոյ Արարատեան», ուր ասված է.

«1. Ս. Էջմիածնի Մայր Աթոռո Գահակալն լինելով միայն Ընդհանրական Հայրապետ՝ Ամենայն Հայոց, որո ընտրության կմասնակցին նաև Կիլիկիո թեմականք, Տանն Կիլիկիո կաթողիկոսը ճանչցած է, կճանչնա և պիտի ճանչնա անոր գերագահությունը։

2. Ամենայն Հայոց Հայրապետն, որո ընտրության մասնակցելով Կիլիկիո Աթոռո թեմականք, կճանաչեն նորա գերագահությունը իբրև մի մարմին Ընդհանուր Հայաստանյայց

եկեղեցվո, պարտավոր է ընդունիլ և ճանաչել կաթողիկոսությունն Տանն Կիլիկիո իբրև չմի ի նվիրական Աթոռոց և չանվանել զայն հետրալ և հակաթոռ (ԲԱԿ Պատմ. 885—886)։

Մյուս հոդվածները շոշափում են Պատրիարքարանի, Ազգային կենտրոնական վարչության և Կիլիկիայի Կաթողիկոսական Աթոռի հարաբերությանց վերաբերյալ խնդիրներ։

Պատրիարքարանի, Ազգային վարչության և Խապայանի միջև ծագած իրավասությանց սահմանների և եպիսկոպոսական ձեռնադրությանց վերաբերյալ վեճերի առիթով, Խապայանը դիմում էր Խրիմյան կաթողիկոսին, որ նա դատաստան անի։

Խրիմյանը գրում էր Սահակ կաթողիկոսին. «Հետևիլ սնափառ և ոչ էական խնդրոց, և վեհանձնութեամբ նայիլ յարտաքին ձևակերպութիւնն, և կը խրատէր պայքար մղել միայն ընդդէմ վնասաբեր խոյընդոտաց, աշխատելով դաստիարակութեան հայ մանկտուոյն, բարձրացնել զբարոյական անկեալ վիճակ ժողովրդեան զաւառաց և լուսաւորել զմիտս նոցա համերաշխ եղբայրութեամբ կենցաղավարիլ» (Մեսրոպ վրդ. Նշանյան, «Կիլիկիո կաթողիկոսության վերաբերյալ պատճեններ», ձեռագիր)։

Սահակ կաթողիկոսի պաշտոնավարության առաջին ժամանակաշրջանը, մինչև 1921, ինչպես նշում է Բարդեն վեհը (ԲԱԿ Պատմ. 774), «լի է դժբախտության, կոտորածի և տարագրության սրտաճմլիկ դրվագներովն։ 1909 թվականին Ադանայի կոտորած, 1914 թվականին համաշխարհային առաջին պատերազմը, 1915 թվականին Ապրիլյան եղեռնը և արևմտահայ ժողովրդի տարագրությունը։ Տարագրվում է նաև Սահակ կաթողիկոսը կիլիկյան ողջ ժողովրդի հետ, և «1915 հոկտեմբեր 31—1916 օգոստոս 29 իբրև տարագիր կապրի Ս. Հակոբյանց վանքին մեջ... Ամիսներ կանցնին, Ճեմալ փաշան երբեմն կայցելեր Երուսաղեմ և Սահակ կաթողիկոս ալ այդպիսի պարագաներուն կերթար Ճեմալ փաշայի պաշտոնատեղին պարզ այցելության համար։ 1916 մայիսի մեջ Ճեմալ փաշան հրավիրած էր Սահակ կաթողիկոսը մասնավոր տեսության մը համար։ Եղիշե եպիսկոպոս Կարոյանը և Գյուտ եպիսկոպոսը հետը առնելով Սահակ կաթողիկոս կերթա Ճեմալ փաշայի ժամադրության։ Ճեմալ փաշա եպիսկոպոսներեն անջատ, առանձին կտեսակցի Սահակ կաթողիկոսին հետ, ուղղակի խընդիրը կբանա և կըսե թե՝ չենք ուզեր որ մեր թշնամիին հպատակ եղող կաթողիկոս մը մեր տերության սահմանները մեջ ապրող հայերուն Հոգևոր Պետը ըլլա. և կառավարությունը որոշեց այդ հոգևոր հարաբերությունները խզել և փոխանակ երկու կաթողիկոսություն և երկու Պատրիարքություն ունենալու կմիացնե Կոստանդնուպոլսո և Երուսաղեմի Պատրիարքությունները և Աղթամարի Կաթողիկոսությունը և կպահե միայն Կիլիկիո Կաթողիկոսությունը, որուն Աթոռը պիտի ըլլա Երուսաղեմի հայոց վանքը և իր տիտղոսը պիտի ըլլա Կաթողիկոս-Պատրիարք բովանդակ հայոց Թուրքիո։ Կեդրոնի կառավարությունը այս որոշումը տված և արդեն կանոնագիրն ալ պատրաստած է, ես իբրև բարեկամ ուզեցի, որ այս նոր պաշտոնը Ձեզ հանձնվի, քանի որ արդեն Սսի կաթողիկոսն եք ներկայիս։ Ի՞նչ կըսեք, կընդունի՞ք։— Սահակ կաթողիկոս բոլորովին անակնկալի մը առջև ցատված կգտնե ինքզինքը։ Ի՞նչ պատասխանելու էր, չէր կրնար դիտողություն ընել, թե ասիկա Հայ Եկեղեցվո դարավոր սովորության և ընդունված ու նվիրագործված կանոնին հակառակ էր, չէր կրնար ըսել, որովհետև այդ ժամանակամիջոցին ան գիտեր, թե տրամաբանական պատասխան, հին օրենքին ցատագովություն, որևէ օգուտ չունեին, կհրամայվեր, պետք էր հնազանդիլ, ուրիշ միջոց չկար։ Բայց Սահակ կաթողիկոս դժկամակ էր, ներկա կացությունը հայտնի էր, ապագան շատ մութ էր, ուստի իր ծերությունը պատրվակ ընելով, կխնդրեր որ այդ ծանր լուծը իր տկար ուսերուն վրա չդրվեր։ Սակայն Ճեմալ փաշան շուտով տեղի տվող չէր, կպահանջեր որ կառավարության կարգադրությունը ընդունվեր և կըսե. «Ձեր անձը, Ձեր տկարությունը, ծերությունը մեկդի դրեք, Ձեր ժողովուրդի սիրույն համար, ստանձնեցեք այս պաշտոնը, վստահ եղեք որ կառավարությունը ամեն նյութական և բարոյական օգնություն պիտի ընձեռե Ձեզի, Ձեր ժողովուրդի հալածանքը պիտի դադրի, լավ խորհեցեք, ոչ թե իբրև հրամանատար, այլ իբրև Ձեր բարեկամը կխոսիմ Ձեզ։ Սահակ կաթողիկոս ժամանակ շահելու համար կըսե. «Միջոց տվեք ինձ որ խորհիմ ու ապա պատասխանեմ։

...Սահակ կաթողիկոս կվերադառնա վանք, ընկճված և ցնցված։ «Ախ,— կըսե Եղիշե և Գյուտ եպիսկոպոսներուն,— երանի թե մահը հասներ և դիս այս անտանելի կացությենեն ազատեր, նույնիսկ Շուսիաբաս այս տեսակ ճիվաղային գաղափար մը չեղացավ, հայ ժողովուրդը անչատել էջմիածնեն, սոսկալի բան է, թուրքը այսման դարերե ի վեր չէ կրցած հասկնալ հայ ժողովուրդին մտայնությունը, հայ ժողովուրդին՝ հանդեպ էջմիածնի ունեցած պաշտումը»։

Նույն իրիկունը կպարզե անոնց Ճեմալ փաշայի առաջարկությունը և տեղի ունեցած խոսակցությունը և եպիսկոպոսներու խորհուրդը կհարցնե։

Հետ երկար խոսակցության կորոշեն, ընդունիլ առաջարկված պաշտոնը ի սեր ժողովուրդին, թերևս կարելի է ժողովուրդը եղած տեղերնին հանդիստ պահել և եթե պատերազմը վերջանա, այս կամայական, մեզի համար արտառոց կարգադրությունը չեղյալ կնկատվի, մենք մեր Աթոռը կդառնանք և էջմիածինն ալ ըստ առաջնույն իր իրավունքները կպահե...

1916 հունիսի 29/11 օգոստոսին Արդարության գործոց նախարարությենեն պաշտոնական հեռագիրը կհասներ և ինքն ակամա կընդուներ պաշտոնը և կփոխադրվեր Պատրիարքարան օգոստոսի 6/19-ին, ...թափորով ուղղակի եկեղեցի կառաջնորդվի, կդահակալե, շնորհավորություններ կընդունի և այն օրեն կձեռնարկե իր նոր պաշտոնին։

Կառավարական հեռագիրը, ուղղված Զավեն պատրիարքին, ասում էր.

«Ամենապատիվ Տեր,

Կրոնից նախարարության կողմե Վեհափառ Սուլթանին ներկայացված և սուլթանական բարձր հրամանով վավերացված և այս-օր Թաքվիմ Վաքայի մեջ հրատարակված Հայոց Կաթողիկոսության և Պատրիարքության կանոնադրության համաձայն Սիսի և Աղթամարի կաթողիկոսությունները և Կոստանդնուպոլսո և Երուսաղեմի Պատրիրքությունները ևս այս Կաթողիկոսության միացած է։ Հետևաբար Ձեր պաշտոնը և հայոց Պատրիարքարանի վերաբերյալ բոլոր գույքերը և պաշտոնաթուղթերը Կաթողիկոս-Պատրիարքին կողմե փոխանորդ նշանակվելիք անձին հանձնվելու և մինչև այն ժամանակ ոստիկանական պաշտպանության տակ մնալու համար, Ձեր Ամենապատվության մասնակցությամբ կնիքի տակ առնվելու պաշտոն տրված է ոստիկանության ընդհանուր տնօրեն՝ Ահմեդ և կրոնից տեսուչ՝ Պեհա պեյերուն. ըստ այնմ պարտ ու պատշաճը գործադրելու համար այս պաշտոնագիրը տրվեցավ։

11 շեվվալ 334 և 28 հուլիս 332

Արդարության և կրոնից նախարարի
փոխանորդ (Ստորագրություն)»

(Զավեն արքեպիսկոպոս, «Պատրիարքական հուշերս», էջ 192)։

«Պաշտոնական հեռագրեն քանի մը օր վերջ տեղական կառավարությենեն Սահակ կաթողիկոսին կհանձնվի «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսության և Պատրիարքության» անունով տետրակ մը, որուն գծած սահմաններուն մեջ պիտի գործեր Սահակ կաթողիկոս· այդ կանոնագրի ուժով, Թրքահայությունը բաժնված էր էջմիածնեն, Ազգային Սահմանադրությունը չնչված էր, Կիլիկիո և Աղթամարի Կաթողիկոսությունները միացված և Պոլսո ու Երուսաղեմի Պատրիարքություններն ալ այս Կաթողիկոսության վրա ավելացած էին, ու այդ կանոնագիրը վավերացված էր 1916 թվականի հուլիսի 19-ին, սուլթանի և բոլոր նախարարներու կողմե։

Նոր կանոնագիրը ըստ ինքյան ամբողջովին քննադատելի և պախարակելի է, ան կբաղկանա 39 հոդվածներեն» (ԲԱԿ Պատմ. 948)։

Կանոնադրության առաջին հոդվածում ասվել էր. «Սիսո և Աղթամարի հայ Կաթողիկոսությունները միացված և Կոստանդնուպոլսո ու Երուսաղեմի Պատրիարքություններն ալ այս Կաթողիկոսության վրա ավելացած են. օսմանցի հայերուն ընդհանուր հոգևոր նախագահությունն այս Կաթողիկոսության և Պատրիարքության կպատկանի և բոլորովին կորված է իրենց կապն ու հարաբերությունը էջմիածնի Կաթողիկոսության հետ։ Կաթողիկոսին ու պատրիարքին բնակավայրն է Երուսաղեմի Ս. Հակոբի վանքը և իր հոգևոր շրջանակն են օսմանյան երկրները»։

Կանոնադրության մյուս հոդվածները խոսում են Պատրիարք-Կաթողիկոսի ընտրության, իրավասության, խառն և այլ ժողովների կազմության, Պատրիարքարանի վարչության, առաջնորդարանների և այլ վարչական հարցերի մասին։

Ժամանակի Կոստանդնուպոլսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանը այս մասին գրում է. «Այս կերպով կջնջվեին ոչ միայն Ազգային Սահմանադրությունը, այլ նաև Կոստանդնուպոլսո և Երուսաղեմի Պատրիրքությունները, որոնք կմիանային Կիլիկիո Կաթողիկոսության, որուն Աթոռը Երուսաղեմ պիտի ըլլար։ Իրականին մեջ Կաթողիկոս-Պատրիարքություն մը կկազմվեր Թուրքիո սահմաններուն մեջ ապրող հայոց համար։ Ինձի կմնար այլևս տունս առանձնանալ և սպասել Սահակ կաթողիկոսի կարգադրության» («Պատրիարքական հուշերս», էջ 191—196)։

Պատրիարք-Կաթողիկոս Խապայանը Երուսաղեմում պաշտոնավարեց 1916 թվականի օգոստոսի 19-ից մինչև 1917 թվականի նոյեմբերի 19-ը։ Այդ տասնհինգ ամսվա ժամանակամիջոցում Սահակ կաթողիկոսը «վանքին կամ ժողովուրդին օգտակար գործ մը չէ կատարած, որովհետև կարելի չէր կատարել, ստիպված ընդունեց կաթողիկոս-պատրիարքության նորօրինակ պաշտոնը, հուսալով որ այդու կրնար ժողովուրդին օգտակար ըլլալ, բայց իր հույսերուն մեջ խաբվեցավ, ու այդպես խաբվելուն մեջ երբեք հանցավոր չէ, իր տեղը ով որ ըլլար իր ըրածեն ավելի բան մը չէր կրնար ընել։ Այո, Սահակ կաթողիկոս հախուռն գործող մը չէ եղած, հանդարտ ու լռին գործող մը եղած է և ի հարկին բողոքած է անիրավությանց դեմ, բայց լսելի չէ եղած» (ԲԱԿ Պատմ. 957)։

1917 թվականի հոկտեմբերին թուրքական բանակը նահանջում է Պաղեստինից։

1917—1918 թվականներին Սահակ կաթողիկոսը ապաստանում է Դամասկոս։ Անգլիացիների և արաբների կողմից թուրքերը վերջնականապես պարտվում են և քաշվում Սիրիայից դեպի Թուրքիա։ Նրանց հետևից Ֆեյսալը անգլիական և արաբական զինվորներով գրաւում է Դամասկոսը։ Սահակ կաթողիկոսը հրավիրվում է ներկա լինելու կառավարական պալատ՝ էմիր Ֆեյսալի ընդունելության հանդեսին։ Երբ Սահակ կաթողիկոսը հրավերն ընդունում է, շուրջիններին ասում է. «Գոհություն Աստուծո, վերջապես ասում է. «Գոհություն Աստուծո, վերջապես ազատվեցա սա պիտակ տիտղոսեն, կաթողիկոս-Պատրիարք, այն ալ ընդհանուր Թուրքիո. ուրկի՞ց հղացան այս հակազգային և հակաօրինական վանդալական գաղափարը։ Փա՜ռք Տիրոջ, ազատեցանք թե՛ կեղծ տիտղոսներե և թե՛ իրենցմե։ Ես միայն «Կիլիկիո կաթողիկոս» եմ, կդառնանք մեր ավերված բույները շինելու» (ԲԱԿ Պատմ. 959)։

Սահակ կաթողիկոսը Հալեպից իր ժողովրդի բեկորների հետ մեկնում է նորից Կիլիկիա և 1919 թվականի հունիսին հասնում Սիս։

Սսում Սահակ կաթողիկոսին սպասում էին նոր վշտեր։ 1920 թվականի հունվարի 20-ից մինչև փետրվարի 10-ը տեղի ունեցան Մարաշի կռիվները և 15 000 հայերի կոտորածը։ Ֆրանսիացիները, լքելով Մարաշը, հեռացան։ Վրա հասան Հաճընի պաշարումը և հերոսամարտը, Դյորտ-յոլի և Օսմանիեի կռիվները, Սսի պարպումը, Այնթեպի հերոսամարտն ու պարպումը (1920 ապրիլ)։

1921 թվականի դեկտեմբեր ամսին Սահակ կաթողիկոսը «դառնության բաժակը ցմրուր քամեց, երբ բոլոր հայ ժողովուրդը արդեն հեռացած էր, ինքն ալ անդարձ մեկնեցավ Ադանայենե» (ԲԱԿ Պատմ. 974)։

Կիլիկիայի դատարկումից հետո գաղթական ժողովուրդն ու աստանդական կաթողիկոսը ապաստան գտան Սիրիայի և Լիբանանի նորակազմ պետությանց սահմաններից ներս։ Տարագիր կաթողիկոսի առաջին գործը եղավ Սիրիա և Լիբանան հաստատված հայ գաղութների մեջ «եկեղեցական և կրթական կազմակերպություն» մտցնել, հավաքել հայության բեկորներին եկեղեցու և դպրոցի շուրջը։ Կիլիկյան թեմերից միայն Հալեպի թեմն էր մնացել, և 1923 թվականի մայիսի 29-ին Հալեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցում Սահակ կաթողիկոսը կատարում է մեռոնօրհնեք՝ ի մխիթարություն ժողովրդի։ Հալեպի թեմի համար կաթողիկոսական փոխանորդ է նշանակվում խոր ծայրագույն վարդապետ Աշտարհյանը։ 1925 թվականի մարտի 3-ին Արտավազդ ծայրագույն վարդապետ Սյուրմեյանը ընտրվում է առաջնորդ Հալեպի թեմի։

«Մինչ Սահակ կաթողիկոս Հալեպի թեմին համար սույն կարգադրությունները կըներ, մյուս կողմե կաշխատեր, որ հոգատար իշխանությանց կողմե ինքը ճանչցվեր իբրև հոգևոր պետ Սուրիո և Լիբանանի հայության։ Այդ ալ իր փափագին համեմատ կատարվեցավ 1924-ին։ Սահակ կաթողիկոս քայլ առ քայլ կհառաջանար, չանալով հարթել դժվարությունները։ Կիլիկիո ժողովուրդը, նաև Փոքր Ասիո զանազան քաղաքներեն հայության բեկորներ տեղավորված էին ի Հալեպ և շրջականները, ի Դամասկոս, ի Բեյրութ, ի Լաթաքիա և ի Կիպրոս, սակայն չէր կրնար այս տեղերուն համար կաթողիկոսական փոխանորդներ նշանակել, որովհետև Դամասկոս, Բեյրութ և Լաթաքիա Երուսաղեմի պատրիարքության թեմերն էին և այդ տեղերը Երուսաղեմի կողմե մի-մի վարդապետ տեսուչներ կային և եթե ինքն ալ եկվոր դաղթականներու համար կաթողիկոսական փոխանորդ նշանակեր երկվություն պիտի առաջ գար, ուստի աշխատեցավ համաձայնության մը գալ Երուսաղեմի հետ... մանավանդ Դուրյան պատրիարք փափագող էր Կիլիկիո Կաթողիկոսության վերակազմության համար և պետք եղած չանքերը չխնայեց Բեյրութի, Դամասկոսի և Լաթաքիո եկեղեցիներուն ու վարժարաններու շենքերուն Կիլիկիո Կաթողիկոսության փոխանցելու և իր տեսուչ վարդապետները վերցնելով երկվության առաջն առնելու համար, վերջապես 1929 թվի մարտ 6-ին Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության ընդհանուր ժողովն համաձայնությամբ կհավանի այդ կարգադրությանն» (ԲԱԿ Պատմ. 978—989)։

Կիլիկյան թեմերի կազմակերպության հարցով 1929 թվականի ապրիլի 30-ին, Գևորգ Ե կաթողիկոսի հանձնարարությամբ, Երուսաղեմ է մեկնում Հայրապետական պատվիրակ և Եգիպտոսի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը, «Դուրյան պատրիարքին հանձնելու համար Մայր Աթոռեն հղված կարևոր գրություններ և խորհրդակցելու համար անոր հետ։ Իր այս այցելությունը սխալ մեկնությանց առարկա եղավ։ Պոլսո «Ազդարար» թերթը իր 1929 մայիս 26 թիվին մեջ, և իրմե առնելով ուրիշ թերթեր ևս հրատարակեցին, թե իր Երուսաղեմ երթին պատճառը Ս. Էջմիածնի Մայր Աթոռը արտասահման կամ Սուրիա փոխադրելու մասին էջմիածնի մեջ նույնիսկ գաղա-

ված պետքի մը շուրջ խորհրդակցությունն է» (Ա. Ալպոյաճյան, «Թորգոմ պատրիարք Գուշակյան», Կահիրե, 1940, էջ 498)։

Թորգոմ սրբազանը Երուսաղեմ կատարած իր ուղևորության մասին գրում է հետևյալը. «Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պաշտոն տված էր իրեն Երուսաղեմ երթալով տեսնել սրբազան պատրիարքը և պատվարժան միաբանությունը, իր անունով առաջարկելու համար, որպեսզի նախ՝ Կիլիկիո Կաթողիկոսության Սուրիո մեջ կազմակերպումի գործը դյուրացնելու համար Երուսաղեմի Աթոռը Կիլիկյան Աթոռին թողու Դամասկոսի, Բեյրութի և Անտիոքի իր եկեղեցիները, կալվածները և առաջնորդարանները...։

Երբ Երուսաղեմ հասա, ամենամեծ հաճույքով տեսա, որ Միաբանական ընդհանուր ժողովը վերջին մեկ որոշումը, որ պատիվ միայն կրերե Երուսաղեմի սրբազան պատրիարք հոր և Ս. Աթոռոո պատվարժան միաբանության վեհանձն ողջմտության, այդ հարցերն ալ կարգավորված էին արդեն Ամենայն Հայոց Ս. Հայրապետին փափագին համեմատ, Նորին Ս. Օծության նամակը ստանալես ալ առաջ» («Սիոն», 1929, էջ 160)։

Վերակազմված Կիլիկիո Կաթողիկոսության թեմերը լինում են Հալեպ, Բեյրութ, Դամասկոս, Լաթաքիա և Կիպրոս։

Ծերունազարդ Սահակ կաթողիկոսը մտածում է նաև Սսի Կաթողիկոսության տեսականության վրա և 1928 թվի փետրվարին հրատարակում է իր «Կտակ»-ը, որը իրապես «կտակ մը ըլլալե ավելի Կիլիկիո Կաթողիկոսության տեսականության մղձավանջն էր» (ԲԱԿ Պատմ. 995)։

«Կտակ»-ում Սահակ կաթողիկոսը, անդրադառնալով առաջին համաշխարհային պատերազմից հետո Հայ Եկեղեցու առաջ ծառացած «էական կենսական հարցեր»-ի վրա, գրում էր. «Խղճով, սրտով և հոգվով պարուրված ու պաշարված— ի՞նչ պիտի ըլլա Կիլիկիո Կաթողիկոսությունը և իր ժողովուրդի ապագան— հարցին անդորրացուցիչ լուծում մը գտնելու տագնապով կտառապինք, դժբախտաբար անորոշության ու անստուգության մեջ կտարուբերինք անլույս և անհույս անդեկ նավու մը պես. այս պատճառով հարկադրվեցանք ներկայիս խնդրել Ձեր սիրելիությենեն, որ անվերապահորեն Ձեր կարծիքով և գաղափարով լուսավորեք զմեզ, որպեսզի անդորրացած խղճով փակենք աչքերնիս»։

Կիլիկյան Աթոռի գոյության, հարատևության մասին հայտնվում են բազմաթիվ կարծիքներ։ «Եղան հրապարակավ ըսողներ և գրողներ. Կիլիկիո Կաթողիկոսությունը միացնելու է Երուսաղեմի Պատրիարքությանը» («Կտակ»)։ Ուրիշներ, որոնց թվում և Սահակ կաթողիկոսը՝ ավելի տրամաբանական էին գտնում Կիլիկիայի Աթոռի միացումը «Ընդհանրական Հայրապետության հետ...» («Կտակ»)։ Այս հարցում շատերն էլ «բանավոր և օրինական կդտնեին աթոռակցի մը օծումը»։

«Կիլիկիո Կաթողիկոսության ալետատան նավը խաղաղության և ապահովության նավահանգիստը հասցնելու համար», 1929 թվականին Սահակ կաթողիկոսը, «իր ազատ կամքով», աթոռակից կաթողիկոս է նշանակում հայ եկեղեցականության ամենակարող և բազմահմուտ եպիսկոպոսներից մեկին՝ արմաշական Բարգեն եպիսկոպոս Կյուլեսերյանին, որը այդ օրերին Երուսաղեմում, Գուրյան պատրիարքի հետ միասին, սրտեռանդն աշխատում էր Երուսաղեմի Ս. Աթոռի կրթական-վարչական կազմակերպության գործին։ Նա խմբագրում էր Պատրիարքարանի պաշտոնաթերթ «Սիոն» ամսագիրը և դասավանդում ժառանգավորաց վարժարանում։

1931 թվականի ապրիլին Հալեպում գումարված Կիլիկյան թեմերի 35 հոգուց բաղկացած պատգամավորական ժողովը, օրինականացնելով Սահակ կաթողիկոսի ցանկությունը, Բարգեն եպիսկոպոս Կյուլեսերյանին ընտրում է աթոռակից կաթողիկոս։ Օծումը կատարվում է ապրիլի 26-ին, Հալեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցում։ Ապա «երկու կաթողիկոսները փառավոր հուղարկով ճանապարհ ելան Հալեպեն և փառավորագույն ընդունելությամբ մտան Բեյրութ և անտի եկան Անթիլիասս» (ԲԱԿ Պատմ. 1021)։

Այնուհետև երկու կաթողիկոսները սերտ և սեռն, ձեռն ի ձեռն աշխատում են ամրացնել տարագիր Կիլիկյան Աթոռը Անթիլիասում։ 1930 թվականին արդեն գնվել էր Անթիլիասի վանքի այժմյան հողամասը և շրջակա կալվածներով, 1930 թվականի հոկտեմբերին վերաբացվել էր Անթիլիասի Դպրեվանքը Շահե ծայրագույն վարդապետ Գասպարյանի վերատեսչությամբ։ Ապա բացվում է տպարանը և 1932 թվականի հունվարից սկսվում է հրատարակությունը Կիլիկիո Կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկ»-ի՝ Բարգեն կաթողիկոսի խմբագրությամբ։

Երուսաղեմի հանգուցյալ պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը, «Սիոն» ամսագրի 1936 թվականի մայիսի համարում, «Անթիլիասս» խմբագրականի մեջ,

խորհրդածելով Կիլիկյան Աթոռի և երկու կաթողիկոսների Անթիլիասում տարած ազգային և եկեղեցական գործունեության մասին, գրում էր հետևյալը. «Հայ Եկեղեցվո տարեգրության մեջ այլևս պատմականացած անուն մըն է ան։ Որքան իրական է՝ Կիլիկյան մեծ ելքեն կամ աղետքեն վերջ հայության կարևոր մեկ մասին, ամենամեծ չափով Կիլիկեհայության, զանգվածորեն տեղավորումը Լիբանանի և Սուրիո հյուրընկալ երկիրներուն մեջ, նույնքան իրական է անտարակույս Սսո Հայ Կաթողիկոսարանին կազմակերպումը Լիբանանի նորակազմ տուրության կեդրոնին առընթեր ծովափնյա այդ սիրուն վայրին մեջ...։ Ռուբինյանց շիջումեն իբր կես դար միայն ետքը, երբ, պատմականորեն հասկնալի իրադարձությանց հետևանքով, հարկավոր նկատվեցավ Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռին վերադարձն ի Ս. Էջմիածին, Կիլիկիո հայությունը, իր ազգային և եկեղեցական գոյության պահպանումին համար նույնիսկ, անհրաժեշտ զգաց Կաթողիկոսական Աթոռի մը ներկայությունը ի Սիս. գոհացում գտավ իր խղճմտանքին այդ պահանջը, ու Կիլիկյան Աթոռը, իբրև մասնավոր Կաթողիկոսություն շարունակվեցավ իր վերջին տեղվույն վրա՝ մինչև ներկայես իբր տասնամյակ մը առաջ։ Ստույգ է հետևաբար, թե անկեց ու այդ ձևով, այսինքն իբր մասնավոր կաթողիկոսություն է, որ անիկա փոխադրվեցավ ուր ուրեմն Անթիլիաս, մինչդեռ Կիլիկյան մյուս նախկին նստոցները Ամենայն Հայոց Հայրապետության նժդեհավայրեր էին իսկապես, քանի որ այդ թվականներուն իրապես Ս. Էջմիածնի Աթոռն էր որ փոխադրված էր նույն վայրերը, ու, այդ իսկ պատճառով, Արևմուտք հաստատված կաթողիկոսները հաճախ կստորագրեին «Կաթողիկոս Ս. Էջմիածնի պանդխտեալ ի Սիս», և այլն։

Ինչ որ ալ լինին այս մանրամասնությունները, սա ստույգ է սակայն, թե բոլոր այդ տեղափոխությունները, որոնք կատարվեցան ընդհանրական կամ մասնավոր կաթողիկոսության ձևին տակ, կատարվեցան պատմական ստիպողականությանց ներքև, ու մենք ամենքս մեղեն գիտենք, թե ինչ պատմական հանգամանքներու մեջ է, որ տեղի ունեցավ նաև այս վերջին տեղափոխությունը Անթիլիասս։ Իր մասնավոր Կաթողիկոսության դիրքը պահելու մը չէ երբեք, որ անիկա առարկա չլինի ընդհանուր հայության սիրույն, հարգանքին և հոգածության։ Որևէ ազգային գործ, թե՛ իսկ ամփոփ սահմանի մեջ կատարված, երբ կկատարվի խղճմտորեն և բարի ջանադրությամբ, հեռատես և գոհացուցիչ արդյունքներով, Ազգին ամբողջության է որ կպատկանի իր մատուցած ծառայությամբն ու օգուտով։ Իսկ այսպիսի մի վկայություն ազգային խղճմտանքն է ինքնին, որ պիտի տա անտարակույս ի պատիվ Անթիլիասի մեջ վերակազմված Կիլիկիո Աթոռին։ Ան հազիվ յոթը տարիներու կարճ տևողության ընթացքին արդարացուցած է արդեն Ազգին և Եկեղեցիին հույսերն իր մասին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ և պատվիրակ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը 1936 թվականին Անթիլիաս այցելելուց հետո գրում էր հետևյալը. «Ուրախությամբ տեսանք Երուսաղեմի Աթոռի նյութական և բարոյական գոհացուցիչ վիճակը, իր պատմական գերը կատարելուց զատ, ոչ պակաս կարևոր գործունեություն է ծավալում և մտավոր լուսավորության ասպարեզում. ապացույց «Սիոն» ամսագրի կանոնավոր հրատարակությունը, Դուրյան մատենաշարքը, մրցանակաբաշխության հաստատությունը հայագիտական ուսումնասիրությունների համար, Կյուլպենկյան մատենադարանը փառավոր, ժառանգավորաց և Թարգմանչաց վարժարանները և միաբանության ժիր գործունեությունը յուր ավագ և երիտասարդ անդամներով։

...Երուսաղեմում և Անթիլիասում անցրած մեր ժամանակը հոգեպես կազդուրման օրեր էին մեզ համար՝ տեսնելով կատարյալ համամտություն և սրտակից վերաբերմունք դեպի Հայաստանյայց Եկեղեցու և նորա Հայրապետության միասնականության գաղափարը և հարգանքը դեպի Էջմիածնի Մայր Աթոռը և նորա Գահակալը»։

(Շարունակելի)

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԿՐՈՆԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երևելյան Հայաստանում առաջին կրոնաթերթը «Հայկական աշխարհ» ամսագիրն է, որ հրատարակվել է Շուշիում 1874 թվականին Խորեն վարդապետ Ստեփանեի խմբագրությամբ և ունի մանկավարժական և կրոնական ուղղություն։

«Հայկական աշխարհ»-ի նպատակն է եղել «կրոնական ընթերցանությունը տարածել հայազն հասարակության մեջ, նպաստել ազգային դպրոցների առաջադիմությանը և մանուկների կրթությանը և նոր հայկական լեզվի մշակությանը առանձին ուշք դարձնել»։

«Հայկական աշխարհ»-ի յուրաքանչյուր համարը կազմված է 2 տպագրական մամուլից և բովանդակում է մանկավարժական հոդվածներ, պատմական, բնագիտական, կենսագրական, ճանապարհորդական, առողջապահական նյութեր, կրոնական գրվածքներ, քարոզներ, Ս. Գրքից թարգմանություններ աշխարհաբար լեզվով, մանկավարժական և դպրոցական գրվածքների քննություն, աշխարհաբար լեզվի կանոնների և ոճերի քննարկումներ, հոգևորականների և հոգևոր դպրոցների մասին տեղեկություններ, մատենագրական լուսաբանումներ և մանր լուրեր։

Հայ բովանդակ կրոնական մամուլում դրժվար է գտնել Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» և «Էջմիածին» ամսագրերի նմանը՝ իրենց հարուստ, բազմազան բովանդակությամբ։

«Արարատ»-ը, որ հրատարակվել է 1868 թվականին ու դադարել 1920 թվականին, անցել է բեղմնավոր ուղի։

Ամսագիրը իր հրատարակման առաջին իսկ տարվանից պահանջ է դնում հոդվածները գրել աշխարհարար լեզվով. «Ազգային, կրոնական, պատմական և բարոյական մասունք Արարատա, բացի բանասիրականեն, պարտին շարադրել պարզ աշխարհարար լեզվով»[1]։

Առաջին տարին «Արարատ»-ը զուտ կրոնական նյութեր է տպագրել։ Հոդվածաշարի ձևով տրված են մեր եկեղեցական կարգերի ու ծեսերի սկզբնավորության ժամանակի, եկեղեցական պաշտամունքների և ժամանակագրության վրա մանրամասն տեղեկություններ, ուսումնական ճառեր, Ս. Գրոց հիմնական գլուխների պարզաբանումներ, հայ ժողովրդի զարգացման ու գաստիարա-

[1] «Արարատ», Էջմիածին, 1868 թ., էջ 51։

կության վերաբերյալ հոդվածներ, ճանապարհորդական հուշեր, կրոնական բանասիրություններ, «Նախնյաց նամականիք» տեղեկություններ, Նախնյաց նամականիք» և լայնարձակ տեղեկություններ Արարատյան նահանգի քաղաքների, գյուղերի ու վանքերի մասին։

«Արարատ»-ում մեծ տեղ են բռնում Սինոդի արձանագրությունները և պաշտոնական հայտարարությունները, որոնց մեջ արտացոլված է իր ժամանակի Ս. Էջմիածնի միաբանության գործունեության պատկերը։

«Արարատ»-ի հրատարակման երկրորդ տարին նշանավորվում է նրանով, որ անվանի մանկավարժ ու գրող Ղ. Աղայանն է ուղղություն տալիս ամսագրին։ «Մի քանի խոսք մեր սիրելի ազգակիցներին» առաջնորդող հոդվածում նա գրում է հետևյալը. «Պարբերական թերթը լինելով լուսավորության գործիքներից մինը, արձակ ճանապարհ ունի մտնելու ընդհանուրի մեջ և նրան յուր մտաց զարգացման աստիճանին համար սնունդ տալու և հասկացնելու, թե ինչպես պիտի էր աշխատել։ Ձեռք առնելով «Արարատ»-ի երկրորդ տարվա ընթացքի ղեկը, զգում ենք, որ այդպիսի մի պարտավորություն և մեզ վերա կա կատարելու մեր ժողովրդյան մեջ։ ...«Արարատ»-ը պիտի աշխատե և ինք, ընդհանուր Ազգին օգուտը և բարին գերադասելով ամեն բանից։ «Արարատ»-ը յուր ամեն ջանքը գործ պիտի դնե լինել այնպիսի մի պատկեր, որի մեջ հայը կարողանա տեսնել յուրաքանչյուր հարազատ որդուց լուսավորյալ մասը ամենայն կերպով դյուրություն կտա այդ նպատակին մոտենալուն»[2]։

«Արարատ»-ի երկրորդ տարեթվի մեջ խիստ արժեքավոր է Ղ. Աղայանի հոդվածաշարը՝ «Հորհրդածություն դատարակության վերա» խորագրով։ Դատապարտելով որոշ տգետ կրոնուսուցչներին՝ Աղայանը այդ հոդվածների կապակցությամբ գրել է հետևյալը. «...Ի՞նչն է պատճառը, որ մեր դպրոցների աշակերտք սաստիկ թույլ են լինում կրոնական և քարոյական զգացմանց մեջ և գործով էլ ապացուցում են իրենց տկարությունը։ մի առանձին հակակրություն ցույց տալով դեպի կրոնը և նրա ուսուցիչը։ Փորձը ցույց է տալիս, որ այն աշակերտները, որոնք ամենեին չեն ուսել կրոն, ավելի բարոյական և կրոնասեր են, քան թե նոքա, որոնք են թարկվել են կրոնուսուցչի ճոռոմաբանության. բայց մի՞թե այսպես կլիներ, եթե կրոնուսուցչը մի բարեկիրթ և գիտնական անձ լիներ»[3]։

Խիստ արժեքավոր է Պետերբուրգից Ն. Սալամբեկյանի հոդվածաշարը «Սովորության նշանակությունը» խորագրով, որի մեջ ցատագրվում է ռուս ականավոր մանկավարժ Ուշինսկու «Մարդը իբրև առարկա կրթության» աշխատության հիմնական մտքերը։

Տարեցտարի «Արարատ»-ը դառնում է ավելի բովանդակալից ու հետաքրքրական։ Սկսած 1890 թվականից բազմատեսակ նյութերով հարստանում է ամսագիրը։

1900 թվականի հունվարի 1-ին Խրիմյան Հայրիկի կոնդակով «Արարատ»-ի խմբագիր է նշանակվում Գարեգին վարդապետ Հովսեփյանը, Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տեր կարապետ վարդապետի փոխարեն, որ խմբագրում էր ամսագիրը 1897 թվականից։

Այս կապակցությամբ հետաքրքրական է նոր խմբագրի հայտարարությունը «Արարատ»-ի ուղղության մասին։ «...Ընդունված սովորության հարկը վճարելով՝ պարտք ենք համարում հայտնել,— գրում է Գ. վարդապետ Հովսեփյանը,— թե խմբագրի փոփոխությունը առանձին նշանակություն չունի «Արարատ»-ի ուղղության վերաբերությամբ։ «Արարատ»-ը մի ուղղություն կարող է ունենալ, եթե տասնյակ խմբագիրներ էլ միմյանց ետևից փոխվին։ Նա Հայոց Հայրապետական Աթոռի պաշտոնական թերթն է, Ս. Էջմիածնի միաբանության բերանը, Հայաստանյայց միակ կրոնական-գիտական թերթը, որի տերը Հայոց Հայրապետն է։ Ուրեմն ով և լինի նրա խմբագիրը պետք է աշխատե քրիստոնեական-ավետարանական ճշմարտություններ սերմանել ժողովրդի մեջ և ամուր կապերով միացնել Հայոց Հայրապետական Աթոռի հետ։ «Արարատ»-ը, արձանագրելով «տար եկեղեցիների հառաջադիմությունները, խթան պետք է լինի հետևելու նոցա կրոնական-հառաջադիմական լավագույն շարժմանց։ Իսկ գիտական բաժնով նվիրված պետք է լինի գլխավորապես մեր եկեղեցական պատմության, մատենագրության, հնախոսության կամ արվեստի, և ընդհանրապես եկեղեցական քաղաքակրթության ուսումնասիրության...»։ «Արարատ»-ը երկու նպատակի է ծառայում. մի կողմից քահանայական դասակարգի և միջակ ընթերցող հասարակության թերթ պիտի լինի նա և մյուս կողմից՝ գիտական թերթ։ Առաջին մասի մեջ կրոնական-քարոյագիտական, տարրական, առողջապահական և գյուղատնտեսական հոդվածներով, մեր գավառների կրոնական եկեղեցական կյանքին վերաբերյալ թղթակցություններով, հանրամատչելի տիպար քարոզներով և ընդհանրապես հետաքրքրական լուրերով, ընթերցանության նյութ պիտի մատակարարե քահանայական դասակարգին և միջակ ընթերցողներին։ ...«Արարատ»-ը

[2] «Արարատ», 1869 թ., № 1, էջ 33։
[3] «Արարատ», 1869 թ., № 1, էջ 24։

կցանկանայինք յուր հանրամատչելի հոդվածներով ոչ միայն քահանայից, այլև քրիստոնյա կրթված հայ ընտանյաց թերթ դարձնել։

... Կրոնական տեսակետով որքան թերություններ և առավելություններ կան մեր ժողովրդի մեջ, որ պետք է ուշադրության արժանանան։ Քանի տեղերից գանգատներ են լսվում անլափահաս ամուսնությունների, սեռտիապաշտությունների, բարոյական կյանքի անկման երևույթների մասին, որ սրտացավ հայի կողմից ուշադրության արժանանալով՝ շարյաց դեմ կարող էր մաքառել մեր թերթի միջոցով։ ...Ցույց տվեք մեր ժողովրդի բարոյական վերքերը, որպեսզի կարելի լինի կարողության չափ սպեղանի ցույց տալ բուժելու համար։ ...«Արարատ»-ի էջերը բաց են յուրաքանչյուր սրտացավ հայի, մանավանդ հայ քահանայի առաջ, որ կամենում է ժողովրդի և յուր կարգակիցների հոգևոր և բարոյական կացության բարվոքման նպաստել։... Ինչ վերաբերում է գիտական բաժնին, կցանկանայինք Մայր Աթոռի միաբաններից և մշտական մյուս աշխատակիցներից զատ՝ նաև դրսի բանասերների մասնակցությունը տեսնել։ ...Վեհափառ Հայրապետի հրամանով և տպարանական վարչության սիրալիր աջակցությամբ մենք պատրաստ ենք մինչև իսկ սովորական ծավալից ավելի ընդարձակել գիտական բաժինը։ Հատկապես հավելվածի համար կցանկանայինք ամբողջական ուսումնասիրություններ ունենալ, մի կամ մի երկու համարում տպագրելու համար»[4]։

Գարեգին վարդապետ Հովսեփյանը «Արարատ»-ում լայն տեղ էր տալիս հայագիտական, եկեղեցական արվեստի, մշակույթի հարցերին։ Դրան զուգընթաց, նա պայքարում էր սահմանափակ մտքի տեր միաբանների ու հոգևորականների դեմ, նա պահանջում էր ժամանակի ոգու համեմատ վերակազմել միաբանությունը գիտուն և գործին ընդունակ մարդկանցով։

Ցափազանց բնորոշ է «Հայոց Հայրապետական Աթոռ» խորագրով Գ. վարդապետ Հովսեփյանի հոդվածը («Արարատ», 1908 թ. № 1), որի մեջ նա բարձր գնահատելով Ս. Էջմիածնի դերը հայ ժողովրդի կյանքում, գրում է հետևյալը. «Հայոց Հայրապետական Աթոռը այն հաստատությունն է, որ երկար դարերից ի վեր հայ ժողովրդի համար սրտի պաշտոն է կատարել, հոգևոր սնունդ և կյանք պարգևել նորա ամբողջության, գաղյուն կենտրոն հանդիսացել նորա ցավերին և սակավ ուրախություններին։ ...Հայոց Հայրապետական Աթոռը աստվածային պարգև է մեզ համար, դարերի պատմությամբ սրբագործված և խոր արմատներ ձգած հայ ժողովրդի կյանքի մեջ։ Ջլատել նորա բարոյական ուժն ու հեղինակությունը, սառնություն քարոզել նորա դեմ և ժողովրդին մոլորեցնել երեխայական անմտություն է և ազգավնաս գործողություն։

Հայոց Եկեղեցին յուր Հայրապետական Աթոռով այն հաստատությունն է, որի հետ կապված են մեր կրոնական-բարոյական և ազգային-քաղաքակրթության լավագույն հույսերն ու տենչերը։ ...Կենտրոնն ու սրբավայրը հայ ժողովրդի համար Ս. Էջմիածինն է, Հայաստանյայց Եկեղեցու ծագման ու հաստատության բրոնանը, առաքելաշավիղ Ս. Լուսավորչի և նորա հաջորդների, և ԺԵ դարից բոլոր հայ կաթողիկոսների վերջնական աթոռանիստը։

... Հայրապետական Աթոռի հետ անրաժան կապված է Ս. Էջմիածնի միաբանությունը, Հայրապետի հոգևոր զինվորությունը, նրա հրամանների ու լավագույն ցանկությունների իրագործողը։ Այդ միաբանությունից են դուրս գալիս մեր նվիրապետության բարձր ներկայացուցիչներն ու պաշտոնյաները, այստեղից պետք է դուրս գան նաև բանիբուն քարոզիչներ, Հայ Եկեղեցու աստվածաբաններ ու գիտնականներ։ Վերակազմել այդ միաբանությունը ժամանակի պահանջների համեմատ կրթված, գիտուն և գործին ընդունակ մարդկանցով, Ս. Հայրապետի գործն է։... Մայր Աթոռը վարչական հետ դարձնել նաև մտավոր շարժման և հառաջադիմության կենտրոն, կախված է կաթողիկոսի բարի ցանկությունից ու եռանդից։ Հայոց Եկեղեցին մաքրել օտարամուտ ծեսերից, սեռտիապաշտության կերպարանք ստացած սովորություններից և զարդարանքներից, խրախուսել և զարկ տալ եկեղեցական ինքնուրույն արվեստի ու երգեցողության զարգացման, իրենց գոյության իրավունքը կորցրած մեր վանքերին նոր կոչում ու նպատակ ներշնչել՝ հիմնելով այնտեղ դպրոցական, բարեգործական և այլ աստվածահաճո բազմատեսակ հաստատություններ... Պարզել օտար ազդեցությամբ չափազանց խճճված մեր ծիսակատարությունն ու աստվածպաշտությունը... ամենայն Հայոց Հայրապետի իրավասության ենթարկված հարցեր են»։

Պետք է խոստովանել, որ Գ. վարդապետ Հովսեփյանի խմբագրության տարիներին «Արարատ»-ը իր անունը բոլորից լուսապակով, որովհետև այդ տարիները «Արարատ»-ի տարեգրության ոսկեշրջանն են կազմում։

90-ական թվականների վերջերից և հատկապես Գ. վարդապետ Հովսեփյանի խմբա-

[4] «Արարատ», 1900 թ., էջ 10—21։

գրած տարիներում «Արարատ»-ի էջերում են տպագրված Ս. Մանդինյանի, Կոմիտաս վարդապետի, Գր. Խալաթյանցի, Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի, Գալուստ Տեր-Մկրտչյանի, Գ. վարդապետ Հովսեփյանի, Գյուտ վարդապետի և այլ բազմաթիվ գիտնական վարդապետների լիարժեք աշխատությունները։

Հանդիսանալով Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռի պաշտոնաթերթը, «Արարատ»-ը գիտնական վարդապետների ու ականավոր գրողների գիտական մտքի ցոլարանն է եղել։ Հանրագումարի բերելով այդ ասագրի 52 տարվա (1878—1920 թ.թ.) տպագրած նյութերի տեսությունը, կարող ենք նշել, որ «Արարատ»-ի էջերում մեծաքանակ տեղ են գտել հետևյալ բնույթի հոդվածները.

1) Կրոնա-բարոյական (ըստ որում հայ և օտար եկեղեցիների քննական պատմությունը)։

2) Բանաստեղծական, լեզվաբանական, պատմական, հայոց ընդհանուր արձանագրություններ (սեպաձև և հայերեն), ազգագրական, տեղագրական, ճանապարհորդական, հնագիտական։

3) Գրական և արվեստի (չափածո, վեպիկներ, պատմվածքներ, հեքիաթներ, թատերական երկեր, գրական ուսումնասիրություններ, գրախոսություն, թատրոն, երաժշտություն)։

4) Դպրոցական-մանկավարժական (դպրոցական, Գևորգյան հոգևոր ճեմարան, մանկավարժական)։

5) Բնագիտական, բժշկական-առողջապահական, գյուղատնտեսական-տնտեսագիտական, իրավաբանական և փիլիսոփայական։

6) Հասարակական-ազգային (ընկերություններ, մամուլ, օտար կյանք և «այլ և այլք»)։

7) Մահագրություններ և կենսագրություններ։

8) Գաղութահայեր (հնդկահայեր, պարսկահայեր, Եվրոպայի գաղութներ)։

9) Պաշտոնական նյութեր (քաղվածքներ Սինոդի օրագրություններից, Մայր Աթոռ, քաղվածքներ Վեհափառ Հայրապետի տնօրինություններից), որոնք սկզբնական տարիներում առաջնակարգ տեղ են բռնել։

«Արարատ»-ը ուղենիշ է հանդիսացել մյուս կրոնաթերթերի համար և խոշոր դեր է խաղացել հայ ժողովրդի ազգային կրոնական կյանքում, իր երկարատև գոյության ընթացքում։

«Էջմիածին» ամսագիրը լույս է տեսել 1944 թվականին և շարունակվում է մինչև այժմ կանոնավոր կերպով հրատարակվել։

«Էջմիածին» ամսագրի առաջին համարը բացվում է Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր Տեղակալ երջանկահիշատակ Գևորգ արքեպիսկոպոս Զորեքչյանի առաջնորդող հոդվածով, որ ունի «Հայ եկեղեցու պարտքը իր ժողովրդի հանդեպ» խորագիրը։ «...Հայոց Եկեղեցին, որպես արքուն հովիվ,— ասված է այդ հոդվածում,— դարեր շարունակ պաշտպանել է իր ժողովրդի պայքարն օտար բռնակալների տիրապետության դեմ։ Նրա լավագույն ներկայացուցիչները փոթորկի ու արհավիրքի ժամին, որպես անձնվեր առաջնորդներ, խրախուսել են իրենց զավակներին՝ լարելու բոլոր ուժերը, մաքառելու դժվարությունների դեմ, կռվելու հանուն Մայր Հայրենիքի ազատության ու անկախության։

Այդ հոդվածում շարադրված են նաև «Էջմիածին» ամսագրի ուղղությունն ու բնույթը.

«Հայրապետական ամսագիրը հանդիսանում է այն միջոցը, որը պետք է համախմբի Սփյուռքի բոլոր հայերին իրենց սրբազան Հայրենիքի շուրջը, Մայր Աթոռի շուրջը։ Հայությանն ուղղված մեր կոչի մեջ ասել ենք. «Հայր բացի Սովետական Հայաստանից չունի այլ Հայրենիք։ Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կռվան, բայց եթե Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով։

Այս պատգամով հրապարակ է գալիս Հայրապետական ամսագիրը, նույն այդ պատգամով նա կշարունակի իր գոյությունը և հետագայումն։

«Էջմիածին» ամսագրի առաջին համարում տպագրված են Մայր Աթոռի նախաձեռնությամբ սկսված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հանգանակության առթիվ կատարված պաշտոնական բանակցությունների, փոխանակված գլխավոր հեռագրերի, ամենապատիվ Տ. Տեղակալի կողմից եղած կոչերի և տրված հրահանգների պատճենները։

Ամսագրի պաշտոնական բաժնում տեղեկություններ կան Սովետական Միության մեջ եղած Հայ և Ռուս եկեղեցիների հարաբերությունների մասին։

Ամսագրի մնացյալ էջերը նվիրված են կրոնապատմական նյութերի մշակության։ Պատմական և բանասիրական մեծարժեք հոդվածներ են ակադեմիկոս Ս. Մալխասյանի «Ե՞րբ են հայերը ընդունել քրիստոնեությունը», Հ. Աճառյանի «Հայ տառերի ստույգ թվականը», Գ. Լևոնյանի «Հովհաննես վարդապետ Մրքուզ (հռետոր, ատվածաբան և եկարիշ ԺԷ դարի), Աշոտ Աբրահամյանի՝

5 «Էջմիածին», 1944 թ., էջ 1—2։

«Խաչատուր երեց Կաֆայեցու տարեգրություն-ներ» և Եզնիկ վարդապետի՝ «Ս. Էջմիածնի Մայր Տաճարի ձեռագիր ավետարաններրը»։

«Էջմիածին» ամսագիրը որդեգրել է Մայր Աթոռի նախկին պաշտոնաթերթ «Արարատ»-ի առողջ ու առաջադեմ ուղին և ընթանում է լուսամիտ հոգևորականության գիտական ուղիով։ Մինչև այժմ հրատարակված նյութերի տեսությունը առանձին ուսումնասիրության արժանի է։ Միայն կարելի է ուրախանալ էջմիածնի միաբանության տքնաջան աշխատանքով։

Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալությամբ «Էջմիածին» ամսագիրը գրվեց ավելի կայուն հիմքերի վրա։ Վեհափառ Հայրապետը, խոսելով Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի առաջ կանգնած հարցերի մասին, գրում է. «Ամսագրի խմբագրության առաջ Մենք խնդիր դրած ենք՝ հոգևոր մնունդ տալ հայ ժողովուրդին, պատկերել Մայր Աթոռի կյանքը իր բոլոր երեսներով, լայն կերպով արձագանքել Սփյուռքի և ներքին թեմերու մեր ազգային-եկեղեցական կյանքին և հատուկ տեղ տալ նաև պատմա-բանասիրական ուսումնասիրության, որոնք որոշ աղերս ունին մեր Ս. եկեղեցվո անցյալ և ներկա կյանքին հետ։

Մայր Աթոռի պաշտոնաթերթը աշխատած է ընթանալ Մեր գծած ճանապարհով, և կխորհինք, թե արդյունքները ավելի քան գոհացուցիչ են։ ...Մեր իղձն է, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթը հետզհետե դառնա նաև հայ աստվածաբանական մտքի զարգացման հանդես մը[6]»։

Ամսագրին աշխատակցում են մեր լավագույն մտավորականներն ու զարգացած, գիտուն հոգևորականները։ «Էջմիածին» ամսագիրը իր կրոնա-եկեղեցական, պատմա-բանասիրական ճոխ բովանդակությամբ մեր կրոնական լավագույն ամսագիրն է։

---

6 «Էջմիածին», 1958 թ. հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 15։

Ա. ՏԵՐ- ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՄԵՌՅԱԼ ԾՈՎԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Երրորդ հարյուրամյակի ընթացքում, երբ հնագիտական պեղումները հսկայական նյութ մատակարարեցին Արևելքի պատմության և քանասիրության համար, Պաղեստինը, սեմական մյուս երկրների համեմատությամբ, քիչ էր պեղված։

Սակայն համաշխարհային երկրորդ պատերազմից հետո տեղի ունեցավ մի հայտնագործություն, որն ամբողջ աշխարհում գիտական հասարակության ուշադրության առարկա դարձավ։

1947 թվականին Հուդայի անապատում (Պաղեստին), Մեռյալ ծովի արևմտյան ափին, մի բեդվի (կամ բեդվին՝ անապատաբնակ արաբ) իր կորուսյալ ոչխարը փնտռելիս, մտնում է մի քարայր և այնտեղ գտնում ձեռագրերի փաթաթներ՝ դրված կավե մեծ սափորների մեջ։ Քարայրը գտնվում է պատմական Երիքով քաղաքից 12 կիլոմետր հեռավորության վրա և Մեռյալ ծովի ափից 2 կիլոմետր դեպի ներս։ Նրանից ոչ շատ հեռու գտնվում է «Այն Ֆեշխա» կոչված շրի ակունքը, որի անունով էլ կոչվում է քարայրը։ Նույն շրջանում գտնվում են նաև մի հին բնակավայրի ավերակները (Խիրբեթ Կումրան), որի մոտ կա մի հին գերեզմանոց։

Հետաքրքրական է այդ ձեռագրերի ճակատագիրը։ Արաբը այն գտնելուց հետո մի մասը ծախում է մի բեթղեհեմցի հնությանց վաճառականի։ Ձեռագրերի չորս փաթաթներ գնում է Երուսաղեմի Ս. Մարկոսի վանքի ասորիների Աթանաս միտրոպոլիտը։ Վերջինս դիմում է մի քանի մասնագետների, որոնք չեն կարողանում որոշել նրանց իսկական արժեքը, լինում են նույնիսկ այնպիսիները, որոնք այս բոլորը կեղծված են համարում։

Ձեռագրերի մնացյալ փաթաթները, ինչպես նաև երկու ամբողջական մեծ սափորներ գնում է իսրայելացի հրեա հնագետ (այժմ հանգուցյալ) պրոֆ. Սուկենիկը, որն առաջին անգամ լինելով գնահատում է նորահայտ ձեռագրերի իսկական արժեքը։ Ս. Մարկոսի վանքի գնած ձեռագրերը մի առժամանակ ընկան ամերիկացիների ձեռքը, բայց վերջերս Իսրայելի կառավարությունը գնեց դրանք և հանձնեց Երուսաղեմի եբրայական համալսարանի հնագիտական թանգարանին։

Այս ձեռագրերի գյուտը արևելագիտության ասպարեզում մեծագույն հայտնագործություններից մեկը հանդիսացավ։ Նրանցով զբաղվում է այժմ Իսրայելի, Եվրոպայի և Ամերիկայի եբրայագետների մի մեծ խումբ։ Բավական է միայն ասել, որ մինչև 1956 թվականը այս հարցի շուրջը լույս է տեսել մոտավորապես հազար գիտական աշխատություն (գրքեր, հոդվածներ և այլն)[1]։ Բազմակողմանի հարցերի քննարկմանը մասնակցում են շատ երկրների գիտնականներ, ինչպես օրինակ՝ է. Սուկենիկ, Մ. Բրրոուզ, Ջ. Տրեվեր, Ա. Դյուպոն-Սոմեր, Պ. Կալե և ուրիշներ։

Եբրայագետները հենց առաջին հայացքից նոր ձեռագրերի մեջ ճանաչում են Եսայիի մարգարեության բնագիրը, որը գտնվել է զույգ գրչագրերով։ Գտնվել են նաև Ամբակումի մարգարեության մեկնությունները, մի պատմություն՝ «Լույսի որդիների պայքարը խավարի որդիների դեմ», մի կրոնական համայնքի կանոնադրությունը, օրհներգների ժողովածու և այսպես կոչված «Դամասկի

[1] Կ. Սատրկովա, «Ձեռագրեր Մեռյալ ծովի շրջակայքից», «Բաներ հին պատմության», Մոսկվա, 1956 թ., հատ. Ա, էջ 88—89 (ռուսերեն)։

հայտնությունը։ Ակներև է, որ այս բոլորը մի հին կրոնական համայնքի գրադարանի մի մասն է եղել։

Զափազանց արժեքավոր են Եսայիի մարգարեության երկու գրչագիր օրինակները։ Մինչև հիմա Ս. Գրքի մեջ հասած և ժամանակը ճշտված հնագույն ձեռագիրը ժ դարից է, իսկ այս նորահայտ ձեռագրերը իրենց ժամանակով նրանից մի հազարամյակ առաջ են։ Եսայի մարգարեն վերոհիշյալ համայնքի անդամների կողմից հատուկ ուշադրության է արժանացել, հավանաբար, շնորհիվ իր բողոքի ոգուն և Մեսիայի գալստյան մասին իր մարգարեությանը։ Այս երկու նորահայտ ձեռագրերը իրարից որոշ տարբերություններ ունեն։ Նրանցից մեկը որոշ տեղերում բոլորովին հեռանում է թե՛ մասորեթյան[2] հանրածանոթ խմբագրությունից և թե՛ հունական Յոթանասնից թարգմանությունից։ Երկրորդ գրչագիրը թեպետև ավելի մոտ է մասորեթյան բնագրին, այնուամենայնիվ որոշ տեղերում նույնպես հեռանում է նրանից։

Ձեռագրերի մեջ կա, ինչպես ասվեց, Ամբակումի մարգարեության մեկնությունը։ Ս. Գրքի մեջ այս մարգարեությունը բաղկացած է երեք շատ փոքր գլուխներից, իսկ նորահայտ ձեռագրերի մեջ կա միայն երկու առաջին գլուխների մեկնությունը, իսկ երրորդի մասին ոչինչ չկա։ Սա խոսում է ի նպաստ այն բանասերների ենթադրությանը, թե այս երրորդ գլուխը սկզբնական խմբագրության մեջ չի եղել։ Մեկնության անանուն հեղինակը Ամբակում մարգարեի խոսքերով ուզում է բնորոշել հենց իր ժամանակաշրջանը։ Այստեղ հիշվում է մի ժողովուրդ, որը կարծվում է, թե հոռմեացիք պետք է լինեն։

Շատ հետաքրքրական է վերոհիշյալ կրոնական համայնքի կանոնադրությունը, որը նկարագրում է նրանց արարողությունները և կարգերը։ Դրանք հիշեցնում են որոշ չափով վաղ միջնադարյան շրջանի վանական կարգերը։ Այստեղ խիստ կերպով պահպանվում է ինչքի համայնական սկզբունքը, իսկ սեփականությունը թույլատրելի է միայն անձնական փոքր իրերի համար։ Համայնքի անդամը իր ամբողջ ունեցվածքը և իր աշխատանքի ամբողջ արդյունքը տալիս է համայնքին։ Վերջինս բաժանված է եղել երկու մասի՝ քահանաներ և հասարակ անդամներ։ Քահանաները հատուկ խավից էին և կոչվում էին Սադովկի որդիներ։ Այս ձեռագրի մեջ, ինչպես նաև այլ ձեռագրերում հաճախ հիշատակված «Սադովկի որդիներ»-ը[3] հավանաբար կապ ունեին սադուկեցիների հայտնի աղանդի հետ։

Համայնքի բոլոր անդամները սպիտակ հագուստ էին կրում և ապրում էին վերոհիշյալ Խիրբեթ Կումրանի կացարանում։ Իսկ շրջակա քարայրների մեջ հավանաբար ապրում էին նրանց մտնել ցանկացողները։ Համայնքի անդամների օրը սկսվում էր լուսաբացին ծիսական լվացումով և աղոթքներով։ Ապա, սեղանատանը նախաճաշելուց հետո, բոլորը գնում էին աշխատանքի մինչև մայրամուտ, որից հետո նորից՝ լվացում, աղոթք և ճաշ։ Ապա գիշերվա մի մասը դարձյալ անց էին կացնում աղոթելով և կրոնական գրքերի ընթերցմամբ։ Այս կարգերը խախտողները ենթարկվում էին պատժի, որի առավելագույն չափը համայնքից վտարումն էր։

«Լույսի որդիների պայքարը խավարի որդիների դեմ» ձեռագիրը պատմում է Ղևիի, Հուդայի և Բենիամինի որդիների պայքարը Բելիարի որդիների դեմ, որոնք (ինչպես ձեռագրում նշվում է) հետևյալներն են՝ եղովմացիք, մովաբացիք, ամմոնացիք, փղշտացիք և այլն։ Այս դեպքերը հավանաբար վերաբերում են Մակաբայեցվոց հարստության ժամանակին (164—63 Ն. Ք.), երբ Հուդայի երկիրը պայքար էր մղում հարևան ցեղերի դեմ։ Այստեղ նկարագրվում են դևտացի քահանաների հանդիսավոր արարողությունը հրեից զորքերի դուրս գալու ժամանակ, զորքի ստորաբաժանումները, նրա շարժվելու ազդանշանը և այլն։

«Լույսի որդիներ» անունը հիշեցնում է Քրիստոսի հայտնի խոսքերը իր աշակերտներին՝ «Դուք եք լույս աշխարհի» (Մատթ. Ե 14). կամ մի այլ դեպքում ուղղակի ասում է՝ «զորդիս լուսոյ» (Ղուկ. ԺԶ 8), «ես եմ լոյս աշխարհի» (Յովհ. Ը 12)։ Պողոս առաքյալը ավելի հստակ կերպով ասում է՝ «զի ամենեքան դուք որդիք լուսոյ էք», և ապա հակադրելով ուրիշներին՝ «չեմք խաւարի» (Ա Թեսալ. Ե 5)։

Ձեռագրերում գտնվող օրհներգերը (սաղմոսները) իրենց ձևով հիշեցնում են Ս. Գրքի սաղմոսները, թայց իհարկե ավելի ուշ ժամանակաշրջանի արդյունք են։ Իսկ «Ղամբի հայտնություն» կոչված ձեռագիրը գտնվում

---

[2] Մասորեթյան կամ Մասորա է կոչվում Ս. Գրքի վերջնական խմբագրությունը, մասորեթների՝ հրեա ուսումնական կրոնավորների կողմից կատարած, որի նպատակն էր կանխել բոլոր թյուրիմացությունները, թե՛ բնագրի, թե՛ ընթերցանության և արտասանության մեջ, որովհետև ձայնավորներից զուրկ եբրայական այբուբենը հաճախ թյուրիմացությունների առիթ էր տալիս։

[3] «Քառարան Ս. Գրոց», Կոստանդնուպոլիս, 1881 թ., էջ 474—475։

է շատ վատ վիճակում և հավանաբար մի պարականոն գրվածք է։

Ահա սրանք են այն բոլոր ձեռագրերը, որոնք գտնվել են վերոհիշյալ քարայրում (1947 թվականին։ Բացի վերջինից («Ղամեքի հայտնությունը») բոլոր մնացած ձեռագրերի լեզուն հին եբրայերենն է։ Ձեռագրերի լեզուն իր բառապաշարով և քերականական ձևերով միջին տեղ է գրավում ուշ շրջանի Աստվածաշնչի լեզվի և հելլենիստական շրջանի եբրայերենի միջև։ Համենայն դեպս նա ավելի հին է, քան այժմ մեզ հայտնի մասորեթյան բնագրի լեզուն։

Տեսնելով այս հրաշալի արդյունքները, հնագետները կազմակերպեցին հետախուզական պեղումներ, որոնց ընթացքում դեռ շատ նոր իրեր գտնվեցին Մեռյալ ծովի քարայրների շրջանում։ Որոշ իրեր էլ ձեռք են բերվել գեղջիների միջոցով, որոնք գաղտագողի մտնելով քարայրները՝ իրերը դուրս են բերում ծախելու նպատակով։

Գտնվել են քաթանե հյուսվածքեղենի կտորներ, մեծ քանակությամբ խեցեղենի բեկորներ (ուշ հելլենիստական և հռոմեական շրջաններից), որոնք իրար կպցնելով կարողացել են կազմել երկու լապտեր և մոտավորապես 50 սափոր։ Հնագետները հայտնաբերել են ձեռագրերի մոտավորապես 600 պատառիկներ՝ գրված մագաղաթի և պապիրուսի վրա։ Որոշ պատառիկներ կապ ունեն սափորների մեջի ձեռագրերի հետ և այս բանը հնարավոր դարձրեց հաստատ կերպով պնդելու, որ 1947 թվականին հրապարակ հանված նյութերը կեղծված չեն եղել։ Պատառիկների մեջ կան հատվածներ Ս. Գրքի հետևյալ գրքերից՝ Ելք, Ղևտական, Թիվք, Բ Օրինաց, Երեմիա, Հռութ, Սաղմոսք։ Կան նաև պատառիկներ, որոնց բովանդակությունը աստվածաշնչական չէ։ Հայտնաբերված են նաև Ս. Գրքի հունարեն թարգմանությունից մի հատված և Տոբիթի գրքից եբրայերեն և արամերեն հատվածներ։

Հնագիտական պեղումներ են անցկացվում նաև քարայրների մոտիկ Խիրբեթ Կումրան կոչված վայրում, որտեղ հայտնաբերված են շենքերի մնացորդներ՝ աշտարակ, սենյակներ, շենքի զանազան հարմարություններ և այլն։ Պեղումներից պարզվում է, որ այստեղ կյանքը գոյություն ունենալուց դադարել է Հրոդեհի և այլ պատճառներով։ Այստեղ գտնվել են զանազան շրջանների պատկանող դրամներ (Բ դար Ք. Ա.— Ա դար Ք. Ե.)։

Այս բոլոր հայտնագործությունները, որոնք օրեցօր դեռ ավելի և ավելի են կուտակվում, փոխեցին գիտնականների կարծիքը Պաղեստինի նկատմամբ և արդեն գիտական գրականության մեջ Հուդայի երկիրը իրավամբ կոչվում է «Երկրորդ Եգիպտոս»։

Նորահայտ ձեռագրերի ժամանակի որոշման համար հսկայական աշխատանք է տարված։ Քիմիական և այլ միջոցներով մասնագետները կարողացել են որոշել քարայրներում գտնված հյուսվածեղենի հնությունը, այսինքն՝ Բ դար Ք. Ա.— Գ դար Ք. Ե.։ Ձեռագրերը պարունակող սափորները նույնպես Ա դարի արտադրանք են։ Ահա մոտավորապես այս դարերում է, որ պետք է թաքնված լինեն այս ձեռագրերը[4]։ Բայց սա դեռ միայն թաքցնելու ժամանակն է, իսկ ձեռագրերը կարող էին գրված լինել դրանից շատ ավելի առաջ։

Լեզվական տեսակետից այս ձեռագրերը սեմագետներին օգնում են ավելի ճիշտ գաղափար կազմելու այն ժամանակաշրջանի մասին, երբ եբրայերենը աստիճանաբար ետ էր մղվում, իր տեղը զիջելով արամեական բարբառներին, որոնք քայլ առ քայլ տեղ գրավեցին սեմական շատ երկրներում։

Ս. Գրքի բնագրերի քննական ուսումնասիրության համար նոր հայտնաբերված ձեռագրերը կարևոր նյութ են տալիս։ Առաջին հերթին հարց է ծագում՝ որոշել այս նոր ձեռագրերի փոխհարաբերությունը Ս. Գրքի մասորեթյան ծանոթ բնագրի և հունարեն Յոթանասնից թարգմանության հետ։ Այս բոլորի հետ, եթե կրկին համեմատվի նաև հայկական ոսկեդարյան թարգմանությունը[5], ապա դա կարող է բանասիրական շատ պրպտումներ կատարելուն նպաստել[6]։ Եբրայագիտությունը բանասիրական առարկաների մեջ կարևոր տեղ է գրավում, առանց որի դժվար է պատկերացնել սեմագիտության զարգացումը և Հին Արևելքի ուսումնասիրությունը։

---

4 Ձեռագրերը քարայրներում թաքցնելու նմանատիպակ դեպքեր եղել են նաև միջնադարյան Հայաստանում (Կ. Գանձակեցի, «Պատմութիւն», Վենետիկ, 1865 թ., էջ 129)։ Մեր քարայրները նույնպես եթե մանրակրկիտ խուզարկվեն, այնտեղ հավանաբար շատ գանձեր կհայտնաբերվեն։ Տե՛ս Ս. Տեր-Ավետիսյան, «Հաղբատի և Սանահինի քարայրների հնագիտական հետազոտության կարևորությունը» (ռուսերեն), «Կովկասյան Քանդարանի Տեղեկագիր», Թ, Թիֆլիս, 1915 թ.։

5 Մ. Տեր-Մովսիսյան, «Պատմություն Ս. Գրոց հայկական թարգմանության» (ռուսերեն), Ս. Պետերբուրգ, 1902 թ., էջ 5—27։

6 Ա. Տեր-Միքելյան, «Աստվածաբանական դիտություններ», Վաղարշապատ, 1933 թ., էջ 46—51։

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԾԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ *

1788 թվականին, Պետերբուրգում, խալդարյանի տպարանից լույս տեսավ Կլեոպատրա Սաֆարովայի «Այբբենարան, Բառարան և Բարոյախոսական որոշ օրենքների իմացության բանալի» գիրքը՝ ռուսերեն լեզուն սովորել ցանկացողների համար։ Այդ գիրքը քիչ է գրավել բանասերների ուշադրությունը, չնայած որ շատ արժանիքներ ունի և արժանի է բազմակողմանի ուսումնասիրության։

Հեղինակը սկզբից բերում է հայերեն և ռուսերեն տառերը, հետո խոսում է նրանց փոխադարձ համապատասխանության մասին։ Ապա բառարանն է։ Արտասանությունը ճիշտ արտահայտելու նպատակով հեղինակը օգտագործում է հայկական տառերով ռուսերեն բառեր և ռուսական տառերով հայերեն բառեր գրելու մեթոդը։ Բառարանի 3-րդ մասում զետեղված են խոսակցական լեզուն սովորելու նպատակով կազմած վարժությունները։ 4-րդ մասում քրիստոնեական բարոյականության սկզբունքներն են շարադրված և հարց ու պատասխանի ձևով տեղեկություններ են տրվում տարվա եղանակների, աշխարհամասերի մասին և այլն։

Այդ դասագիրքը կազմելիս՝ հեղինակը բարի նպատակ է հետապնդել, այն է՝ նպաստել իր ժողովրդի վերածննդին։ Այդ գիրքը իր ժամանակին հսկայական նշանակություն է ունեցել՝ հայ բնակչության մեջ ռուսաց լեզվի ժողովրդականացման գործում։

Հեղինակի կենսագրության վերաբերյալ ընդարձակ տեղեկություններ չկան։ Ենթադրաբար կարելի է ասել, որ նա ծնվել է 1755—1760 թվականներին Աստրախանում։ Բավականին լավ էր տիրապետում հայերեն և ռուսերեն լեզուներին։ Ռուսերենը սովորել է Պետերբուրգում, կարելի է ենթադրել, որ նա եղել է հայ հարուստ առևտրական և արդյունաբերող Մովսես Սաֆարովի դուստրը։

Մովսես Սաֆարովը, ինչպես պատմում է մանրամասն Աշոտ Հովհաննիսյանը իր «Հովսեփ Էմինը» գրքում (Երևան, 1945 թ.) հայկական մարզի ազատագրման և Ռուսաստանի հովանավորության ներքո հայոց անկախ պետության վերականգնման նախագծի հեղինակն էր։

Սաֆարովը իրանցի էր։ Հետո տեղափոխվել էր Ռուսաստան և բնակություն հաստատել Աստրախանում, որտեղ զբաղվում էր շերամապահությամբ։ Նա 60-ական թվականների հայ նշանավոր և հարուստ արդյունաբերողներից էր, որոնց գործունեությունը խրախուսվում էր ռուսական կառավարության կողմից։ Դժվար է ստույգ ասել, թե ե՞րբ է նա տեղափոխվել Պետերբուրգ, բայց հայտնի է, որ 80-ական թվականներին արդեն այնտեղ էր։ Նրա անունը հիշատակված է Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանցի 1781 թվականին կազմած Պետերբուրգի նշանավոր հայերի ցուցակում, ուր հիշատակված են նաև հայ քահանա Հովհաննես Շերիստանովը, ոսկերիչ Իվան Լազարևը, իշխան Միքայել Նազարովը, Ցուզբաշի Ցակուրը, Մակար Մանիլարովը և մետաքսի գործարանների տեր Գրիգոր Կամպանովը։

Ահա այն հայրենասիրական միջավայրը, որից դուրս է եկել Կլեոպատրա Սաֆարովան, «լուսավորական դար»-ի գաղափարներով ոգեշնչված։

Կենսագրական բավարար տեղեկություններ չկան նաև ԺԸ դարի պետերբուրգյան մեկ ուրիշ հայ հեղինակի՝ Վառլամ Վագանովի (Վահանյան) մասին։ Ո՞վ էր արդյոք այդ համեստ հեղինակը, որը բախտի բերմամբ ընկած էր Պետերբուրգ և եռանդով ու ջանասիրությամբ զբաղվում էր հայ ժողովրդի պատմության տարածմամբ։ Չկան տեղեկություններ նաև նրա գրական գործունեու-

* Քաղված Կ. Գրիգորյանի ռուսերեն համանուն աշխատությունից։— Շարունակված ամսագրի 1959 թվականի Բ—Դ N-ից։

թյան վերաբերյալ։ Բայց բոլոր գրավոր աղբյուրներում նրա անունը հիշատակվում է իբրև Հայաստանի մասին առաջին գրքերի ռուսերեն թարգմանությունների հեղինակի։ Վերջին տարիներին Աշոտ Հովհաննիսյանի կողմից հրատարակված փաստաթղթերից («Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումները ԺԸ դարի 80-ական թվականներին», Երևան, 1947 թ., էջ 255—273) պարզվում է, որ 1784 թվականին Վառլամ Վագանովը եղել է ռուսական հեծյալ գնդի հրամանատար։ Նրա անունը, իբրև թարգմանչի, հիշվում է հայ մելիքների պաշտոնական բոլոր նամակների վերջում։ 1786 թվականին Վառլամ Վագանովը արդեն հաստատվել և մշտապես ապրում էր Պետերբուրգում։

Վագանովի փոքր, 27 էջանոց «Ողբ Հայաստանի մասին» գիրքը այլ բան չէ, եթե ոչ ռուսերեն թարգմանությունը Մովսես Խորենացու ծանոթ «Ողբ»-ի։

Պատահական չէր 1786 թվականին Պետերբուրգում Խորենացու «Հայոց պատմության» հրատարակումը, քանի որ այդտեղ պատմվում է հայոց Արշակունիների թագավորության անկման մասին՝ 428 թվականին։ Այդ թեման անմիջականորեն կապվում էր ԺԸ դարի վերջերի Ռուսաստանի քաղաքական կյանքի իրադարձությունների հետ։ Դրա հետ միասին այդ թեման արտահայտում էր ԺԸ դարի 80-ական թվականների հայ ազգային ազատագրական շարժման գործիչների գաղափարներն ու տրամադրությունները։ Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ռուս մայրաքաղաքում իշխան Պոտյոմկինի և Սուվորովի անմիջական մասնակցությամբ մշակվում էին հայոց թագավորության վերականգնման նախագծերը։ Դժվար չէ երևակայել, թե ինչպես են հնչել այն ժամանակ Խորենացու «Ողբ հայրենասիրիս» տողերը, որոնք հիշեցնում էին ընթերցողներին սուլթանական Թուրքիայում և շահական Պարսկաստանում հայ ժողովրդի ճնշված և ծայր աստիճանի աղքատ վիճակի մասին։

Կենսագրության վերաբերյալ նյութերի բացակայությունը թույլ չի տալիս լիովին ճշտելու ազգային ազատագրական պայքարին Վագանովի մասնակցության հարցը։ Այնուամենայնիվ պարզ է, որ նա, որպես զինվորական, Լազարևի հովանավորության տակ էր։ Խորենացու «Ողբ»-ի ռուսերեն թարգմանությունը Վագանովը նվիրել էր Եկատերինա Իվանովնա Լազարևային։ Վագանովը սերտ կապված էր ուրեմն Լազարևի և Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանցի հետ և վայելում էր նրանց բարի հովանավորությունը։ Նրանց օժանդակությամբ Վագանովը Պետերբուրգում հրատարակեց հինգ-կահայ գաղութի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Մադրասի Շահամիր Շահամիրյանի «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանությունը։

Իսրայել Օրին արևմտահայ ազատագրական շարժման առաջին գործիչներից մեկն էր, որը պատրաստելով ազգային ազատագրական պայքարի ծավալուն ծրագիրը՝ կապ հաստատեց Պետրոս Ա-ի հետ, Ռուսաստանի օժանդակությամբ և աջակցությամբ վերականգնելու հայոց պետությունը։ Իսրայել Օրուց հետո ասպարեզ է իջնում Հովսեփ Էմինը, ԺԸ դարի 60-ական թվականներին։ Էմինը հնդկահայ էր։ Նա երիտասարդությունը անցկացրեց Լոնդոնում, որտեղ ջանասիրությամբ պատրաստվում էր իր ապագա գործունեությանը։ 1759 թվականին հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ վերջապես նրան հաջողվում է այցելել Հայաստան, Վրաստան, ուր ծանոթանում է Հերակլ թագավորի հետ, և պատրաստում նրա հետ միասին Հայաստանի և Վրաստանի ազատագրման նախագիծը։ 1761 թվականի նոյեմբերին Էմինը գալիս է Պետերբուրգ, մտադրություն ունենալով անմիջապես կապ հաստատել ռուսական կառավարության հետ։ Էմինն ուներ քաղաքական մեծ նպատակներ, բայց նրա փորձերը հաջողություն չունեցան։ Նա վերադարձավ իր հարազատների մոտ Հնդկաստան և մահացավ 1809 թվականին։

Հնդկահայ գաղութը առաջացել է ԺԸ դարում։ Պարսկաստանում և Թուրքիայում հայերի ճնշման և հարստահարման պատճառով։ Աղվանների, Իսպահանի և Նոր-Ջուղայի վրա կատարած արշավանքների հետևանքով է՛լ ավելի ուժեղանում է հայերի գաղթը Հնդկաստան։ ԺԸ դարի երկրորդ կեսում իրենց մշակութային-քաղաքական նշանակությամբ աչքի էին ընկնում Մադրասի և Կալկաթայի հայ գաղութները։ 1799 թվականին Մադրասում լույս տեսավ առաջին հայկական պարբերական հրատարակությունը՝ «Ազդարար»-ը։ 70-ական թվականներին նույն տեղում կազմակերպվեց հայ հայրենասերների խմբակը։ Այդ խմբակից է դուրս եկել Շահամիր Շահամիրյանը, որի գործունեությունը սերտորեն կապված է ԺԸ դարի վերջին տասնամյակում հայ ազգային ազատագրական պայքարի հետ։

Ռուսաստանում ապրող հայերի կապը Հնդկաստանի գաղութի հետ ավելի շուտ էր հաստատված, բայց ավելի կանոնավոր և ամուր դարձավ այդ կապը ԺԸ դարի 80-ական թվականներից։ Շահամիրյանը Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանցի հետ նամակագրակցություն ուներ։ Շահամիրյանը խոշոր հարուստ և ազատագրական շարժման նշա-

նավոր ներկայացուցիչ էր։ Նա հեղինակն էր «Որոգայթ փառաց» աշխատության, որը հանդիսանում է պատմական ուսումնասիրություն, պատմական-տեսական առաջաբանով և ապագա հայոց պետության սահմանադրական սկզբունքների շարադրանքով։ Այդ ուսումնասիրությունը լույս է տեսել Մադրասում, որտեղ էլ Շահամիրյանը հրատարակեց նաև «Հայոց թագավորության պատմական աշխարհագրական համառոտ նկարագրությունը»։ Ժամանակին այդ գրքի մեկ օրինակը ուղարկվել էր Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանցին, որն իր կողմից ներկայացրեց այն Պոտյոմկինին, որի կարգադրությամբ էլ Պետերբուրգում հրատարակվեց Շահամիրյանի գրքի ռուսերեն թարգմանությունը, Վ. Վագանովի թարգմանությամբ։ Թարգմանիչը իր աշխատությունը նվիրել էր Եկատերինյան ժամանակի ամենանշանավոր գործիչներից մեկին՝ ֆելդմարշալ Գ. Ա. Պոտյոմկին-Տավրիչեսկուն։

Գրքի առաջին էջերի վրա գրված վեց տողանի բանաստեղծության ձևով արտահայտվում են հեղինակի՝ ինչպես հայ ժողովրդի պայծառ հույսերը ապագայի նկատմամբ, Ռուսաստանի օժանդակությամբ։ Առաջաբանում Վագանովը խնդրում է ընթերցողների ներողամտությունը իր թարգմանության մասին, նշելով, որ ինքը ստարերկրացի է և ինքնուրույն աշխատանքով տիրապետել է ռուսաց լեզվին։

Շահամիրյանը «Հայոց պատմության» թարգմանությամբ պարապելիս ունեցել է լավ օգնականներ, խորհրդականներ, որոնցից մեկը եղել է Մակար Բոգդանովիչ Մանիչարը, իսկ մյուսը՝ Հայաստանից ժամանած Ստեփան Պոպովը։ Պաշտոնական փաստաթղթերից հայտնի է, որ Ստեփան Պոպովը եղել է թարգմանիչ և միջնորդ էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Պետերբուրգի միջև։ Պաշտոնական նամակագրության մեջ Պոպովին երբեմն անվանում են «Արարատյան դեսպան», իսկ ինքը ստորագրում էր «Հայոց սարկավագ Ստեփան Սահակովի որդի Պոպով»։ Նա երբեմն լինում էր Պետերբուրգում կաթողիկոսի հանձնարարությունները կատարելիս։ Նա, ըստ երևույթին, զգալի օգնություն է ցույց տվել Վագանովին՝ թարգմանության գործում։ Հատուկ ուշադրության արժանի է Վագանովի երկրորդ օգնականը՝ Մակար Մանիչարը։ Նրա իսկական անունն է Մարգար Աստվածատուրի Մանուչարյան։ Նրա մասին կենսագրական որոշ տեղեկություններ պահպանվել են Ղուկաս կաթողիկոսի նամակագրության մեջ։ Մանուչարյանի նախնիները Երևանից էին։ Շահ-Աբասի արշավանքից հետո նրանք գաղթեցին Պարսկաստան, բնակվեցին Նոր-Ջուղայում, այնուհետև տեղափոխվեցին Ռուսաստան։ Սկզբից ապրում էին Աստրախանում։ Ավելի ուշ Մարգար Մանուչարյանը իր երեքայրների՝ Մկրտչի, Փիլիպոսի և Հովհաննեսի հետ տեղափոխվեց Պետերբուրգ, որտեղ «Ն. Ոսկովյան» թաղում հիմնեց մետաքսյա գուլպաների և ձեռնոցների գործարանը։ Մանուչարյանը ոչ միայն հարուստ արդյունաբերող էր, այլ նաև Պետերբուրգի հայկական մշակութային գաղութի երևելի ներկայացուցիչ, գործուն մասնակցություն էր ցուցաբերում նա պետերբուրգյան հայ գաղութի բոլոր ձեռնարկություններում։ Ըստ որում իր մասնակցությունը չէր սահմանափակվում միայն խոշոր դրամական նվիրատվություններով, այլ անձամբ մասնակցում էր զանազան մշակութային կազմակերպություններին և ձեռնարկություններին։ Մանուչարյանը օժանդակեց նաև Խայդարյանին՝ հայկական տպարան հիմնադրելու գործում Պետերբուրգում։ Նա օգնեց նաև Վագանովին՝ Շահամիրյանի պատմական ուսումնասիրությունը ռուսերենի թարգմանելու աշխատանքներում։ Ի վերջո նա էր նաև Աստրախանում հայկական դպրոցի կազմակերպման նախաձեռնողը։

ԺԷ դարի 70-ական թվականներին Աստրախանում բացված հայկական դպրոցը մասնավոր ուսումնական հաստատություն էր, որտեղ սկզբնական ժամանակաշրջանում սովորում էին թվով քիչ առևտրականների զավակներ։ Դպրոցը ի վիճակի չէր ապահովելու սանիկների բազմակողմանի զարգացումը։ Սկզբնական շրջանում Աստրախանի դպրոցը չէր էլ գնում իր առաջ լայն կրթական խնդիրներ։ Նա տալիս էր աշակերտներին նվազագույն անհրաժեշտ գիտելիքներ՝ գլխավորապես առևտրական գործերով զբաղվելու համար։ 1776 թվականին Աստրախանում գոյություն ունեին արդեն հայկական ոչ մեծ գիշերօթիկ դպրոցներ։

Հայկական դպրոցի կազմակերպման հարցը նորից ծագեց 80-ական թվականներին։ Այդ մշակութային ձեռնարկության նախաձեռնողը Մակար Մանուչարյանն էր։ 1782 թվականին Մանուչարյանը դիմել է Պետերբուրգի Գիտությունների ակադեմիային՝ աջակցություն և օգնություն խնդրելով Աստրախանի ապագա հայկական դպրոցի համար ծրագրեր կազմելուն։ Ծրագրերի նախագիծը կազմեց Պետերբուրգյան Գիտությունների ակադեմիայի քարտուղար Յակով Շտելինը։ այն պարունակում է 8—15 տարեկան հայ մանուկների համար քառամյա ուսումնարանի մանրամասն պլանը։ Աշակերտները անցնելու էին աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ընդհանուր պատմություն, բնագիտություն և օտար լեզուներ, Աստվա-

ծաշունչը մայրենի լեզվով, ինչպես նաև ռուսերենով, գերմաներենով և ֆրանսերենով։

Սրագրում հատուկ ուշադրություն է դարձվում տեխնիկական առարկաներին և պրակտիկ պարապմունքներին, որով այդ ծրագիրը մոտենում էր ապագա ռեալական ուսումնարանների ծրագրին։

Աստրախանի դպրոցը, ինչպես որ նա ներկայացված է այդ ծրագրում, նշանակալից մի քայլ առաջ էր Ռուսաստանի հողի վրա մինչև այդ եղած հայկական ուսումնական հաստատությունների պատմության մեջ։ Նա հետապնդում էր լայն կրթական նպատակներ։ Աստրախանի հայկական դպրոցը, սակայն, երկարատև գոյություն չունեցավ։ ԺԸ դարի վերջում հանդես է գալիս մեկ նոր անձնավորություն ևս՝ Մակար Խոճենց՝ որի գրական գործունեությունը սերտորեն կապված է պետերբուրգյան հայ մշակութային գաղութի հետ։ Խոճենցի իսկական անունն էր Գեղամյանց Մարգար Զաքարի, երևանցի։ Ավելի ուշ ընտանիքով տեղափոխվել էր Զմյուռնիա, որտեղ անգլիական դեսպանի մոտ թարգմանչի պաշտոն էր վարում։ Նա գիտնականի համբավ ուներ, ազատ տիրապետում էր մի շարք օտար լեզուների՝ իտալերենի, ռուսերենի, թուրքերենի, պարսկերենի, արաբերենի։ Նա պետերբուրգյան հայկական գաղութի հետ հաստատել էր մշակութային կապ, հատկապես Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանցի հետ, և շուտով թողնելով Զմյուռնիան տեղափոխվեց Պետերբուրգ։ Խալդարյանի տպարանի Նոր-Նախիջևան տեղափոխվելուց հետո Խոճենցը դառնում է Արղությանցի գործունյա օգնականներից մեկը։ Խոճենցը Պետերբուրգում թարգմանում է Ֆենելոնի «Տելեմակի արկածներ» բարոյախոսական վեպը և 1794 թվականին Արղությանցի աջակցությամբ հրատարակում է այն։ Խոճենցը թարգմանում է նաև ԺԶ դարի ազգրբեջանական հանրածանոթ բանաստեղծ Ֆիզուլու «Վարդն ու սոխակը» արևելյան վիպակը, և ապա այն թարգմանում Ֆրանսերենի և իտալերենի։ 1817 թվականին Խոճենցը մասնակցում է նաև պետերբուրգյան Ս. Գրոց ընկերության Աստվածաշնչի հայերեն թարգմանության աշխատանքներին։

Դեռևս գրված չէ Պետերբուրգի հայկական մշակութային գաղութի պատմությունը։ Նրա առանձին ներկայացուցիչների համառոտ բնութագրերի ու գործունեության մասին եղած փաստերը և տեղեկությունները դեռ բավական չեն լրիվ և ստույգ կերպով որոշելու գաղութի կազմը և նրա նշանակությունը՝ հայ ժողովրդի մշակութային վերազարթոնքի ընդհանուր բարդ պրոցեսի մեջ։ Մի բան միայն որոշակի կարելի է ասել, որ ԺԸ դարի Պետերբուրգը շատ կարևոր տեղ է գրավում հայ ժողովրդի լուսավորության պատմության մեջ։ Այնտեղ, հենց Գիտությունների ակադեմիայի պատերի մեջ, մշակվում էր ռուսական հողի վրա ապագա առաջին հայկական դպրոցի ծրագիրը։ Այստեղ էր հիմնված հայկական առաջին տպարաններից մեկը։ Այստեղ հրատարակվեց Գ. Խալդարյանի բառարանը և Կ. Սաֆարովայի «Այրբենարան-բառարան» գիրքը, որոնք վկայում են այն աճող հետաքրքրության մասին, որը զգացվում էր այն ժամանակվա հայ հասարակության մեջ ռուսաց լեզվի նկատմամբ, որպես հայ ժողովրդի Ռուսաստանի հետ հետագա մշակութային կապի ամրապնդման կարևորագույն գործոնի։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՇԻՆԱՐԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Արտասահմանի մեր ազգային-եկեղեցական կյանքին ամբողջությունը հատկանշող անգործության փոխարեն և ադոր իբրև հակապատկեր՝ խորապես սփոփիչ, կազդուրիչ և քաջալերական են Հայաստանի, հայ ժողովրդին և Հայաստանյայց Եկեղեցվո կեդրոն Ս. Էջմիածնի ցույց տված հառաջդիմություններն ու շինարարությունները, որոնց շարաթե շարաթ արձագանք կըլլանք այս այունակներուն մեջ։ Անտարակույս, այս երևույթին ի տես, մեզի չափ, և մեզի հետ կուրախանան նաև բոլոր ազգասեր մեր ազգակիցները։

Հազիվ քանի մը տարիներե ի վեր Ս. Էջմիածնի Աթոռին վրա բազմած է երիտասարդ ու կորովի Հովվապետ մը, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս, որուն շինարար գործերը ամեն օր ա՛լ ավելի ցցուն կերպով երևան կուգան և մեզի այն համոզումը կներշնչեն, թե հայոց պատմությունը զինք իրավամբ Շինարար Կաթողիկոս մակդիրով պիտի որակե, եթե ներկա թափով շարունակվի Անոր կատարած կարևոր և հիմնական շինարարություններու շարքը։

...Այսօր Ս. Էջմիածին մտած է մեղվային աշխատանքի շրջանին մեջ, շնորհիվ նորընտիր Հայրապետին կորովամտության և աշխատասիրության։ Վազգեն Ա Կաթողիկոս արդեն իսկ հրաշք թվող հաջողություններ ձեռք ձգած է Ս. Էջմիածինը... դնելով վերստին՝ իր բուն առաքելության մեջ, զայն ընելով ազգային-կրոնական-մշակութային գործունեության կեդրոն, ինչպես Ինքը՝ Վեհափառը կհատկանշե արդեն իրավամբ, Մայր Աթոռի մեջ վերջերս գումարված «Եկեղեցական Սահմանադրության նախագծի քննարկման» ժողովին առջև Իր արտասանած բացման գեղեցիկ խոսքերուն մեջ։

Գաղտնիք չէ, որ Վազգեն Ա-ի շինարար ջանքերուն շնորհիվ, այսօր Ս. Էջմիածնի դպրեվանքը կենդանի վառարան մըն է ուսման և ապագա հայ եկեղեցականներու պատրաստության համար։

Գաղտնիք չէ, որ Վազգեն Ա Կաթողիկոսի շինարար ջանքերուն շնորհիվ, այսօր գրեթե հիմնովին վերանորոգված է Ս. Էջմիածնի դարավոր Մայր Տաճարը, որ պահ մը փլուզումի իրական վտանգը կապրեր։ Այս բազմածախս վերանորոգումները կատարված են ոչ միայն Կյուլպենկյան կտակին հատկացումներով, այլ նաև Հայաստանի կառավարության կողմե ալ եղած մեծագումար մասնավոր հատկացումներով, որոնց ձեռք բերվելուն մեջ գլխավոր դերը ունեցած է Վեհափառ Հայրապետը։

Գաղտնիք չէ, որ Վազգեն Ա շինարար Կաթողիկոսի ջանքերով կանոնավորված է Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը, որ նոր տպարանի հաստատմամբ, անտարակույս պիտի դառնա շատ ավելի ճոխածավալ և բովանդակալից և պիտի ըլլա իրական պետքի մը գոհացում տվող հրատարակություն մը։

Գաղտնիք չէ, դարձյալ, որ շնորհիվ մեր շինարար ու երիտասարդ Հայրապետին, հայ վանքերն ու եկեղեցիները, կառավարական արտոնությամբ, վերադարձված են Ս. Էջմիածնի հեղինակության և ադոնցմե ոմանց վրա արդեն կատարված են մասնակի կամ ամբողջական նորոգություններ, զանոնք գործածելի վիճակի մը մեջ դնելու համար։

Անտարակույս մեր ընթերցողները մասնավոր հաճույքով և գոհունակությամբ կարդացին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին վերջին ընդարձակ այն նամակը, որ ուղղված էր ամերիկահայոց առաջնորդ սրբազանին, որուն մեջ Վեհափառը հայտնի ուրախությամբ կխոսեր Ս. Հռիփսիմեի, Ս. Շողակաթի, Օշականի և Ս. Մեսրոպի եկեղեցիներու վրա կատարված նորոգություններու մասին։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ուրախալի է ըսել, որ շնորհիվ իր կորովին, կրցած է Հայաստանի կառավարությունեն հարկ եղած արտոնությունն ստանալ, Ս. էջմիածնի թեներուն տակ առնելու համար կրկին Տաթևի, Հառիճի և Հաղարծինի պատմական վանքերը, զանոնք լիովին օգտագործելու համար հայ բարեպաշտ ժողովուրդի հաշվույն։

Գլուխ հանված այս սքանչելի և անժխտելի իրագործումները, քանի մը տարիներու ընթացքին, պատիվ կրնան բերել միայն Ամենայն Հայոց Հայրապետին, որ Իր կյանքին նպատակը ըրած է Հայաստանյայց եկեղեցին վերականգնումն ու աշխուժացումը։ Աշխատանք մը, վսեմ ու գերագույն, որ պետք է վայելե մեր բոլորին սերն ու համակրանքը, մեր բոլորին գնահատությունն ու անվերապահ գործակցությունը։

Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետը, Իր շինարար աշխատանքները համեստորեն կբնորոշե հետևյալ կերպով. «Սուրբ էջմիածինը այս օրերուն ընդհանուր հետաքրքրության կեդրոն դարձած է և զրեթե ամեն օր գիտնականներ և մտավորականներ՝ Հայաստանեն և ավելի հեռուներեն կուգան դիտելու հին հին դարուց այս հիշատակները։ Սուրբ էջմիածնի քարերը վերստին լեզու առած կխոսին ու կպատմեն աշխարհին մեր փառքին, մեր նահատակված, բայց անմահ ժողովուրդի անցյալ փառքի մասին։

Ուրախության և իրավ հպարտության օրեր կապրինք և ավելի քան երբեմ մենք զմեզ զորավոր կզգանք հավերժական Ս. էջմիածնով»։

Իրողության մեջ, սակայն, Ս. էջմիածնի դարավոր սրբության շափ, ընդհանուր հետաքրքրության և հպարտության աղբյուր մը դարձած է Ինքը, Վեհափառ Հայրապետը, Իր կատարած աննախընթաց շինարարություններուն և Հայաստանյայց եկեղեցվո զարթոնքի նոր շրջանին ոգին հանդիսանալուն համար։

Հարգա՜նք ու պատի՜վ Ամենայն Հայոց Վազգեն Ա Շինարար Կաթողիկոսին։

(Նյու-Յորք, «ՆՈՐ ԱՇԽԱՐՀ» շաբաթաթերթ, № 39, 4 հուլիսի 1959 թ.)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԱՄՆ-Ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄ

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան թեմի նորընտիր առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը իր պաշտոնի գլուխ անցնելուց ի վեր ցույց է տվել իր նոր պաշտոնում իր դիրքին ու անվան արժանի գործունեություն։

Մարտի 21-ին սրբազան հայրը իր անդրանիկ այցելությունը տվել է Ուեստ Ֆիլադելֆիայի հայ համայնքին և ընդունվել շերմորեն։ Հաջորդ օրը, Ծաղկազարդի տոնի առթիվ, սրբազանը պատարագել է և քարոզել ու մեծ շուքով տոնել եկեղեցու օծման առաջին տարեդարձը։ Իր հովվական այցելության ժամանակ սրբազանը խորհրդակցել է նաև ազգային մարմինների հետ՝ թեմը հետաքրքրող կարևոր հարցերի շուրջ։

Մարտի 24-ին առաջնորդ սրբազանը մեկնել է Վաշինգտոն, այնտեղ անցկացնելու համար Զատիկը։ Սրբազանը տեսակցել է ԱՄՆ-ի փոխ նախագահ պր. Ռ. Նիքսոնի հետ և ուրբաթ օրը անծանոթ զինվորի հուշարձանի պատվանդանին զետեղել մի ծաղկեպսակ՝ հանուն Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և ԱՄՆ-ի հայ համայնքների։ Ապա սրբազանը պատարագով և քարոզով մխիթարել ու զոտեպնդել է մայրաքաղաքի հայ հավատացյալ համայնքը։ Վաշինգտոնում գտնվող օրերին սրբազանը նախագահել է նաև ժողովներին և ամենուրեք ներշնչել խանդավառություն և հավատ, օգտակարապես գործելու կամք և եռանդ։ Այդ առթիվ առաջնորդ սրբազանի ուշադրության կենտրոնումն է եղել մայրաքաղաքը հայկական եկեղեցիով և մնայուն հովիվով օժտելու հարցը։

Ապրիլի 4-ին Սիոն սրբազանը այցելել է Բոստոնի հայ համայնքին։ Հաջորդ օրը, Նոր Կիրակիին, նա քարոզել է ու պատարագել՝ հոգևոր մխիթարություն բաշխելով հավատացյալներին։ Սրբազանը տվել է նաև մի դասախոսություն՝ «Երիտասարդությունը և եկեղեցին» նյութի շուրջ։

Առաջնորդ սրբազանի օրինակով և ցուցմունքներով հովվական այցելություններ է

տվել նաև առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Մյուռոն ծայրագույն վարդապետ Կրճիկյանը, որն այցելել է Բրիջպորտ, Հեյվերհիլ, Իստ Սենտ Լուիզ և այլ համայնքներ, ամենուրեք քարոզելով և պատարագելով, կազմակերպելով ու ղեկավարելով ազգային-եկեղեցական գործերը։

Վերջերս տոնվեց հոգեշնորհ Տ. Մյուռոն ծայրագույն վարդապետ Կրճիկյանի քահանայական ձեռնադրության 25-ամյակը։ Թեմը արժանավորապես պատվեց իր հովվին։ Այս ուրախ առթիվ Վեհափառ Հայրապետը ևս բարեհաճեց շնորհավորել Տ. Մյուռոն ծայրագույն վարդապետի հոբելյանը՝ հետագա ազդագուտ և եկեղեցաշեն գործերի սրտագին բարեմաղթություններով։

Գաղութի համար գառնաղետ եղավ կորուստը հոգեշնորհ Տ. Ադան վարդապետ Փոթուգյանի։ Հանգուցյալը խոստումնալից, երիտասարդ եկեղեցականներից մեկն էր։ Հանգի՜ստ տարաբախտ երիտասարդ վարդապետի հոգուն։

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄ

Հունիսի 21-ի կիրակի օրը արգենտինահայ գաղութը տոնում էր Հայրապետական նոր պատվիրակի և առաջնորդի՝ գերաշնորհ Տ. Բարդեն սրբազանի ժամանումը և պաշտոնի ձեռնարկելը։ Ժողովուրդը երկյուղած բարեպաշտությամբ փութացել էր ներկա գտնվելու սրբազանի առաջին պատարագին և լսելու նրա անդրանիկ քարոզը։ Գերաշնորհ Տ. Բարդեն նորապսակ եպիսկոպոսը այդ օր ավետաբեր կոունկն էր Մայր Հայրենիքի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի։

Ոչ մեկ ջանք չէր խնայված օրվա հանդիսավորությունը շքեղ և տպավորիչ ընծայելու։ Պատարագին ներկա էին նաև պետական ներկայացուցիչներ։

Հայրապետական կոնդակը տպավորիչ ձևով ընթերցում է հոգեշնորհ Տ. Հարություն ծայրագույն վարդապետ Մուշյանը։ Ապա առաջնորդ սրբազանը քարոզում է «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ բնաբանով։ Ողջունելով ծովածավալ բազմությունը, սրբազանը շեշտում է Ս. Էջմիածնի նշանակությունն ու դերը. «Հավատքի ամրոցը և քարեղեն հույսը մեր ժողովուրդին, որ մեզ կբերե հավիտենականություն և կտանի գերագույն արժեքներու։ Մեր պատմությունը ամբողջ վկայությունն է մարտիրոսացման՝ սուրբ գաղափարներու համար։ Անոնց մեջ Ս. Էջմիածնի դերը առավել քան երբեք գերազանց է ու կատարյալ։

Այնուհետև սրբազանը անդրադառնում է նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակին. «Ան Կաթողիկոս ըլլալ վերջ կդադրի անհատ բյալե և կդառնա հայ ժողովուրդի համար գերագույն Սրբություն Սրբոց։ Իր թելադրություններն են մեր բոլորին, որ պահենք մեր սրբազան ժառանգությունը անխաթար, որ շաղարտենք մեր հայու հոգին ու նկարագիրը»։ Ապա սրբազանը հայրը հիշեցնում է յուրաքանչյուրի պարտքն ու անելիքը իր Ազգի, իր Եկեղեցու և ինքնիրեն և հույս հայտնում, որ համերաշխությամբ, իրար սիրելով ու գործակցելով կարելի կլինի հասնել լավագույն արդյունքների։

Սրբազան հայրը ձեռնամուխ է եղել իր թեմի կազմակերպչական աշխատանքներին։ Նա ընդունել և տվել է պաշտոնական այցելություններ, կատարել հովվական այցելություններ՝ հայ համայնքների մեջ ամենուրեք արթնացնելով վստահություն և ներշնչելով սեր ու միություն Ազգի բոլոր հատվածների միջև։

Հուլիսի 16-ին սրբազան հայրը, ընկերակցությամբ առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հարություն ծայրագույն վարդապետ Մուշյանի, ժամանել է Մոնտեվիդեո քաղաքը, ուր այցելել է հինգ ազգային վարժարանները, հետաքրքրվել նրանց կյանքով, տեղում ուսումնասիրելով դպրոցները կանոնն և բարվոք վիճակում պահելու հնարավորությունները։ Սրբազանը ջերմորեն հետաքրքրվել է նաև ազգային-եկեղեցական կյանքի բոլոր երեսներով։

Հուլիսի 18-ին Հայրապետական պատվիրակ սրբազան հայրը ծաղկեպսակ է դնել Ուրուգվայի ազատարար զորավար Խոսե Է. Արտիկասի արձանի առջև, ազգային ազատագրության տարեդարձի առթիվ։ Հուլիսի 19-ի կիրակի օրը Բարդեն սրբազանը պատարագել ու քարոզել է Մոնտեվիդեոյի հայոց եկեղեցում, մխիթարելով հայրենակարոտ և հավատի խոսքերի կարոտ հայ հավատացյալներին։ Հուլիսի 20-ին Պատվիրակ սրբազանը, ընկերակցությամբ հոգևոր հայրերի և կենտրոնական վարչության երեք անդամների, այցելել է Ուրուգվայի Ազգային դերագույն խորհրդի նախագահ Մարտին Ռ. Էշեկոժենին։ Նախագահը ինքը կարդացել է Վեհափառ Հայրապետի ուղարկած սրբատառ կոնդակի թարգմանությունը, որտեղ թելադրված է հնազանդ քաղաքացիներ լինել տեղական կառավարությանը։ Չորս օր մնալով Մոնտեվիդեոյում, սրբազան հայրը ընդունել է նաև ազգային բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները, այդ թվում հայ կաթողիկե համայնքի առաջնորդ գերապատիվ Տ. Հարություն վարդապետ Թեքեյանին և այլ ազգային դեմքերի։ Հուլիսի 21-ին առաջնորդ սրբազան հայրը վերադարձել է Բուենոս-Այրես։

ԽԱՉՔԱՐ ՄԸ ԷՋՄԻԱԾՆԵՆ Ս. ՂԱԶԱՐ

Էջմիածնի Վեհափառ Կաթողիկոսը խաչքար մը կնվիրե Ս. Ղազարու թանգարանին. խաչքարը քանդակված է Հայաստանի որձաքարի վրա, հայ վարպետի ձեռքով, հայկական հին խաչքարներու ոճով (մեծութիւն 50×45,5 հրդմ.). ստորև կկրե ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ ՌՆԹ արձանագրութիւնը։

Թեհրանարնակ տիկին Սիրարփի Զերչյանի ձեռքով՝ խաչքարը կհասնի Միլան, մայիսի կիսուն. կմտնե Ս. Ղազար, հուլիսի 5-ին, Վարդավառի առավոտը, Իտալահայ մշակութային միութեան նախագահ՝ բանաստեղծ Արամայիս Սրապյանի ձեռքով, որ կհանձներ զայն վանքին՝ պաշտոնական նամակով մը։

Երեք տարի առաջ էր, երբ Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոս եկավ Վենետիկ, մեր թանգարանին նվիրեց Մարտիրոս Սարյանի մեկ փոքրիկ նկարը, որ կպատկերացնե Արարատը։ Արարատը մեզի համար խորհրդանիշն է Հայաստանի փառքին. իսկ այս խաչքարը կըլլա խորհրդանիշ քրիստոնյա ու մարտիրոս Հայաստանին։ Արարատը կմնա կանգուն վկան մեր փառահեղ անցյալին, խաչքարը կպատմե փառքերը մեր կրոնասեր նախնիքներուն։ Արարատը՝ խորհրդանիշ Հայրենիքի. խաչքարը՝ խորհրդանիշ կրոնքի։

Եվ ի՜նչ գեղեցիկ զուգադիպութիւն. խաչքարը կմտնե Ս. Ղազար Վարդավառի առավոտը։ Վարդավառը տոնն է հայկական, կհիշեցնե մեր վարդապսակ նավասարդները, «զվագելն եղանց և զվագելն եղջերուաց»։ Իսկ մեր ծիսարանին մեջ, Վարդավառը տոնն է Քրիստոսի այլակերպութեան, երբ Քրիստոս, Թաբոր լեռան վրա, լուսակերպ, Իր խաչելութեան ու չարչարանքներուն վրա կխոսեր երկնքեն իջած հինավուրց մարգարեներուն հետ։ Այսպես փառքն ու խաչը, Վարդավառն ու խաչքարը մեզի համար կդառնան աղբյուր անսպառ ոգեորութեան, կրոնքի ու Հայրենիքի ներշնչարան։

Ու հիմա այդ խաչքարը պիտի դան տեսնել աշխարհի ամեն կողմեն Ս. Ղազար դիմող հայ ուխտավորներ, օտարազգի բազմահազար այցելուներ։ Պիտի տեսնեն այնտեղ պատկերացած, խաչաքանդակին այդ պարզունակ գծերուն մեջ հսկա պատմութիւն մը, դարավոր պատմութիւնը հայուն անցյալին և հայուն հավատքին։

Մեր ջերմ շնորհակալութիւնը Վեհափառ նվիրատուին, որուն հիշատակը պիտի արծարծե միշտ այս խաչքարը սրբազան։

(Վենետիկ, Ս. Ղազար, «ԲԱԶՄԱՎԵՊ» ամսագիր, հունիս—օգոստոս, № 6—8, 1959 թ).

ՄԱՑՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՑՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ.— Լույս տեսավ տաղանդավոր երաժշտագետ Ալ. Շահվերդյանի «Հայ երաժշտական պատմության ակնարկներ» ստվար աշխատությունը՝ նվիրված ԺԹ—Ի դարերի մինչ սովետական շրջանի հայ ազգային երաժշտական մշակույթի զարգացման պատմության ուսումնասիրման։ Շահվերդյանը վախճանվել է 1954 թվականին։ Նրա ներկա աշխատության ձեռագիրը խմբագրել և տպագրության է հանձնել երաժշտագետ Ռոբերտ Աթայանը։ Շահվերդյանի այս արժեքավոր աշխատությունը լույս ներդրում է հայ երաժշտական պատմության գիտական մշակման տեսակետից։

ԵՐԵԿՈՅ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՂԱՆ ՎՈԼՖԳԱՆԳ ԳՅՈԹԻՆ.— Հայաստանի սովետական գրողների միության տան դահլիճում նշվեց գերմանական բանաստեղծ Գյոթեի ծննդյան 210-ամյակը։ Երեկոն կազմակերպել էին Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերությունը և Հայաստանի սովետական գրողների միությունը։ Հանդիսությունը սկսվեց գրող Գ. Սևունցի ներածական խոսքով, որից հետո մեծ գրողի կյանքի և ստեղծագործությունների մասին զեկուցեց Ս. Առաքելյանը։ Երեկոյին ընթերցվեցին Գյոթեի ստեղծագործություններից։

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՄԿՐՏՈՒՄ ԵՎ ԱՂԱԹՈՆ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.— Թբիլիսիի Պետական կենտրոնական պատմական արխիվում գտնվել են նոր նյութեր, որոնք լույս են սփռում Մկրտում և Աղաթոն Հովնաթանյանների կյանքի շուրջ։ Առաջինը որդին էր անվանի նկարիչ Հովնաթանի, իսկ երկրորդը՝ թոռը։ Մկրտումը քսան տարեկան հասակում իր հորը՝ Հովնաթանի հետ աշխատել է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի զմանկարների վրա, որոնք իրենց տեսակի մեջ եղել են շատ աչքառու։ Ուշագնացյա ծերությունն դիմում է Անդրկովկասի գլխավոր կառավարչին խնդրելով, որ իրեն ազատեն պարհակից, պատճառաբանելով, որ «Այժմ երկրորդ տարին է անա, ինչ ես կիսամերկ, համարյա թե անկենդան պառկած եմ անկողնում և նկարչի համար ամենաէական գործիքները՝ աչքերս ու ձեռքերս անգործության են մատնված, գլխիս կեսը և ձախ ոտքս նույնպես չեն գործում։ Նույնքան ծանր ծերություն էր վերապահված նաև Մկրտումի երկրորդ որդուն՝ Աղաթոնին, սակայն, հակառակ իր ընդունակություններին, նա ստիպված էր աշխատել որպես Պետերբուրգի հայկական եկեղեցական տան կառավարիչ։ Մերացած ու հիվանդագին, նա ստիպված է աշխատանքից հեռանալ և իր գիմումի համաձայն նրան ազատում են աշխատանքից՝ նշանակելով 50 ռուբլի կենսաթոշակ։ Այդ մասին են վկայում Լենինգրադի մարդի պետական արխիվի Հայկական եկեղեցիների խորհրդի ֆոնդում պահպանված լուրջ փաստաթղթերը։ Աղաթոն Հովնաթանյանը մահացել է 1893 թվականին և թաղվել է Պետերբուրգում։ Այս փաստաթղթերը գտել և հրատարակել է Մանյա Ղազարյանը։

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել Լ. Ս. Անասյանի Հայկական Մատենագիտություն խորագրով մեծածավալ աշխատության առաջին հատորը։ Անասյանի այս և հաջորդ հատորները ընդգրկելու են Ե—ԺԸ դարերի հայ ինքնուրույն ու թարգմանական գրականության տպագիր և անտիպ նյութերի մատենագիտական մշակումը։ Ներկա աշխատությունը հայագիտական ուսումնասիրությունների հետագա զարգացման նպատակ խոշոր ներդրում է։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՏՈՆԱՀԱՆԴԵՍ՝ «ՈՍԿԵ ԱՇՈՒՆ».— Սեպտեմբերի 19-ի և 20-ի անբեսաշող օրերին, Երևանի ռեսպուբլիկական ստադիոնում կազմակերպվեց համաժողովրդական մեծ տոն՝ «Ոսկե աշուն» անունով։ Տոնին իրենց մասնակցությունը բերեցին Հայաստանի և Սովետական Միության մի շարք ռեսպուբլիկաների նշանավոր գիրանները, կինոյի հանրաճանաչ արվեստագետները։ «Ոսկե աշունն» հանդիսավոր արարողությունը բացեց ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանը։ Տոնահանդեսը բաղկացած էր երկու մասից։ Առաջին մասում բազմահազար հանդիսատեսները սիրով

ու հպարտությամբ դիտեցին հայ ժողովրդի դյուցազուն զավակներին, որոնց իրենց արյամբ պաշտպանել են մեր Հայրենի հողը ու հայ ժողովրդի հոգում միշտ վառ պահել հույսի և լույսի հրաբաց։ Ստադիոնում անցկացան Սասունցի Դավիթը, Վարդան Մամիկոնյանն ու Դավիթ Բեկը՝ հանդիսականների մեջ առաջացնելով հայրենասիրական բուռն փոթորիկ, լսող ծափեր և ովացիաներ։ Այնուհետև Երևանի գործարանների և կոլտնտեսային դաշտերի աշխատողները ցուցադրում են իրենց նվիրական աշխատանքի վաստակը։ Երկրորդ մասը նվիրված էր համերգների, որի ընթացքում հույսի ունեցան Մասկվայից, Լենինգրադից, Կիևից ժամանած և Երևանցի արտիստները։

ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ 90—ԱՄՅԱԿԸ.—Սեպտեմբեր ամսին լրացավ մեծ երգիծաբան, վիպասան, հրապարակախոս, դրամատուրգ և քննադատ Երվանդ Օտյանի ծննդյան 90-ամյակը։ Մեծանուն գրող-երգիծաբանի ծննդյան 90-ամյակի կապակցությամբ Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան Պետական գրադարանում բացվեց ցուցահանդես, որտեղ ներկայացված էին երգիծարանի ստեղծագործությունները՝ հրատարակված տարբեր շրջաններում և տարբեր վայրերում։ Ցուցահանդեսում ներկայացված էին նաև քննադատական հոդվածներ ու հիշողություններ Օտյանի մասին։

ՀԱՅ ԿԻՆ ԳԻՏՆԱԿԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵԼ Է ԴՈԿՏՈՐԻ ԱՍՏԻՃԱՆ.—Անցյալ տարվա դեկտեմբերին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի համաշխարհային գրականության պատմության ինստիտուտի գիտական խորհրդում բանասիրական գիտությունների թեկնածու Սալոմե Արեշյանը պաշտպանեց իր «Հայ մատուցը և ցարական ցենզուրան» դոկտորական դիսերտացիան, որն արժանացավ ընդհանուր հավանության և գիտական խորհուրդը որոշեց նրան շնորհել բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան։ Վերջերս առեստացիոն հանձնաժողովը հաստատեց գիտական խորհրդի որոշումը։

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱԳՈՒՅՑ ՎԻՐԱԲՈՒԺԸ.—Սեպտեմբերի 12-ին Հայաստանի բժշկական հասարակայնությունը նշեց անվանի վիրաբույժ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Մարիամավոր Պետրոսյանի ծննդյան 70-ամյակը։ Նուրբ երևան տարի է պրոֆ. Պետրոսյանը ղեկավարում է Երևանի բժշկական ինստիտուտի տոպոգրաֆիկ անատոմիայի և օպերատիվ վիրաբուժության ամբիոնը։ Այժմ Հայաստանում աշխատող շատ վիրաբույժներ նրա նախկին ուսանողներն են։ Նա ծանոթ է նաև միջազգային լայն շրջանի վիրաբուժական հասարակայնությանը։ Ցնծալով իր 70-ամյա տարեդարձը, բազմավաստակ պրոֆեսորը լինում է մեր ռեսպուբլիկայի բոլոր շրջաններում՝ բարդ վիրահատություններ կատարելու և երիտասարդ բժիշկներին օգնելու համար։

Ալ. ԵՐՎԱՆԶԱԴԵԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ.—Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան Պետական գրադարանը լույս ընծայեց վիպասան, դրամատուրգ Ալ. Երվանզադեին նվիրված ընդարձակ մատենագիտություն, բաղկացած 840 էջից։ Մատենագիտությունը կազմել է գրադարանի տեղեկատու բիբլիոգրաֆիական բաժինը, խմբագրել և առաջաբանը գրել է բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Թամրազյանը։

ՄՈՎՍԵՍ ԱՐԱՔՈՒ «ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ» ՊԱՏՄԱՎԵՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ.—Հավաքատրարի հրատարակությունը լույս ընծայեց նշանավոր արձակագիր Մ. Արաքու «Իսրայել Օրի» պատմավեպի առաջին գիրքը, որին սպասում էր ընթերցող հասարակությունը։ Այդ վեպի գաղափարն է տարբ բանակներ դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը, Հայաստանի ազատության և անկախության գաղափարը։ Վեպը սկսվում է Օրու Հայրենիք վերադարձով։ Հետագա գլուխները նվիրված են Օրու գործունեությանը Անգորայում և Գանձասարում, որտեղ հաջողությամբ ավարտելով իր առաքելությունը, Օրին վերադառնում է նվիրապես, շարունակելու համար հայ ժողովրդի ազատագրության նվիրական գործը։ Սրանով էլ ավարտվում է վեպի առաջին գիրքը։

ԳԻՇԵՐՕՔԻԿ ՆՈՐ ԴՊՐՈՑՆԵՐ.—Այս տարվա սեպտեմբեր ամսից գիշերօքիկ նոր դպրոցներ գործում են Երևանում, Արագածում, Էջմիածին քաղաքում և Քանաքեռում։ Այդ նոր գիշերօքիկ դպրոցներում ընդգրկվել են ավելի քան երկու հազար երեխաներ։ Երևանի քաղաքային Սովետի գործկոմը հոդվածներ է հատկացրել լրիս նոր գիշերօքիկ դպրոցների շենքեր կառուցելու համար։

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ԲԱԺԻՆ ՆԻՍՏԸ.— Վերջերս տեղի ունեցավ Հայաստանի Կերպարվեստագետների միության քանդակագործական բաժնի ընդլայնված նիստը, որտեղ քաղաքի դիմաքոր ճարտարապետ Գ. Սարգսյանը զեկուցեց առաջիկա լայնամասշտաբ հրավառում կառուցվելիք ճարտարապետական հուշարձանների մասին։ Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն և արժարժվեցին հայրենի քաղաքի ճարտարապետական ճիշտ ձևավորման ու ոգեղեցկացման մի շարք խնդիրներ։ Ստեղծվեց մի հանձնաժողով, որի նպատակը պետք է լինի քաղաքի ճարտարապետական ճիշտ ձևավորումը։ Հուշարձանների քանդակման կորկուրների արդյունքների քննարկումը և ճարտարապետներին օգնություն ցույց տալը։ Հանձնաժողովի կազմի մեջ մտան Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչներ Ա. Սարգսյանը, Ս. Ստեփանյանը, քանդակագործներ Ղ. Զուբարյանը, Գ. Ահարոնյանը, Կ. Մեսրոպյանը և Ս. Բաղդասարյանը։

ՆՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ.— Երևանի Պետական համալսարանի 12 ֆակուլտետները երկրին այս տարի տվեցին 794 երիտասարդ մասնագետներ՝ երկրաբաններ, քիմիկոսներ, ֆիզիկոսներ, տնտեսագետներ, բանասերներ, պատմաբաններ, կենսաբաններ և այլն։ Պոլիտեխնիկական ինստիտուտն ավարտեցին մոտ 600 մասնագետներ, Բժշկական ինստիտուտը՝ 350, Գյուղատնտեսականը՝ 328, Անասնաբուժական-անասնաբուժականը՝ 135, Խաչատուր Աբովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտը՝ 302 մասնագետներ։ Այս նոր շրջանավարտները աշխատանքի են նշանակվել Հա-

յաստանի, ինչպես նաև եղբայրական ռեսպուբլիկաների քաղաքներում և շրջաններում։

ՎԱՀԱՆ ՔՈՐՈՎԵՆՑԻ ԱՐԵՒՎԱՑԻՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ.— Երևանի Գրականության և արվեստի թանգարանը մի շարք արժեքավոր նյութեր է ստացել Վահան Քորովենցի հարազատներից, որով թանգարանում հիմք է դրվել Վահան Քորովենցի ֆոնդի, որը տարիների ընթացքում պիտի հարստանա նոր նյութերով։ Ստացվել են տգարուն, գարուն պատմվածքի ինքնագիրը, մի խոշոր վեպի նախնական էսքիզը, որը նվիրված է հայ ժողովրդի անցյալ կյանքին, Հովհաննես Թումանյանի մասին գրած հետաքրքիր հուշեր և այլ ձեռագրեր։ Ստացված նյութերի մեջ մեծ արժեք են ներկայացնում Վ. Քորովենցի գրած և մի շարք գրողներից ու գրականագետներից և այլ անձանց կողմից ստացված նամակներն ու պաշտոնական գրությունները։ Կան նամակներ Դ. Դեմիրճյանից, Ատ. Ջորյանից, Մ. Քանանից, Ա. Սարգսյանից և ուրիշներից։

ՀԱՅ ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆ ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ.— Սեպտեմբերի 24-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մանուկ Արեղյանի անվան գրականության ինստիտուտի նիստերի դահլիճում, նույն ինստիտուտի հրավերով սկսվեց գիտական նստաշրջան՝ նվիրված մեծ գիտնականի մահվան 15-ամյակին։ Այդ օրը նիստերի դահլիճն էին հավաքվել մեր գիտության ու կուլտուրայի և արվեստի ակնառու գործիչներ։ Բացման խոսքով հանդես է գալիս բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ղանալանյանը, որը վեր է հանում բազմավաստակ գիտնականի անցած բեղուն ստեղծագործական ուղին։

Նստաշրջանում լսվեցին մի շարք թեմաներով առանձնավոր զեկուցումներ։

Սեպտեմբերի 24-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ պրոֆ.-դոկտ. Է. Աղայանը «Մանուկ Արեղյանի լեզվաբանական ժառանգությունը» և բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Սարինյանը «Մանուկ Արեղյանը գրական քննադատ» թեմաներով զեկուցումներ կարդացին։

Սեպտեմբերի 25-ի նիստում պրոֆ. Գ. Ալավը և բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ավդալբեկյանը զեկուցումներ կարդացին «Մ. Արեղյանը և հայոց լեզվի տաղաչափությունը» և «Մ. Արեղյանը որպես հայ հին գրականության պատմաբան» թեմաներով։

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ՅԱԿԻՆ ԱՌԹԻՎ.— Ակսել Բակունցը սովետահայ ականավոր արձակագիրներից մեկն է, որի արվեստը խորապես ինքնատիպ և անկրկնելի է։

1959 թվականի հոկտեմբերին լրանում է Ակսել Բակունցի ծննդյան 60-ամյակը։ Այդ կապակցությամբ մեր հայրենի կառավարությունը ստեղծել է հոբելյանական հանձնաժողով, որի կազմումն են Վ. Ալազանը, Ս. Ադարաբյանը, Մ. Աբեղին, Գ. Գալստյանը, Հովհ. Բաղդասարյանը, Ատ. Ջորյանը, Էդ. Թոփչյանը, Ս. Խանզադյանը, Ա. Խաչատրյանը, Ռ. Խաչատրյանը, Գ. Հայրյանը, Հր. Հովհաննիսյանը, Գ. Հովնանը, Գ. Մահարին, Հր. Մարգարյանը, Ա. Շահինյանը, Ս. Գայազատը, Հ. Սահյանը, Գ. Սարյանը, Գ. Սեռունը, Լ. Ստեփանյանը (Նախագահ), Հր. Քոչարը։

Հոբելյանական հանդիսավոր նիստը տեղի կունենա հոկտեմբերի 24-ին Երևան քաղաքում։ Այդ առթիվ Հայաստանի բոլոր քաղաքներում, շրջաններում, գրադրոցներում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում կկազմակերպվեն գրական երեկոներ՝ նվիրված Ակսել Բակունցի կյանքին ու ստեղծագործությանը։ Կառավարության որոշումով Գորիս քաղաքում կանգնեցվելու է Բակունցի կիսանդրին, իսկ Երևանում, այն տանը, որտեղ գրողը ապրել ու աշխատել է, կամրացվեն հուշատախտակներ։ Հոբելյանի առթիվ կհրատարակվեն նրա ստեղծագործություններից ժողովածուներ և իր կյանքին ու գրական գործունեությանը նվիրված բրոշյուրներ։

ԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ